



Հանրային

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԿԻՏԵԱՍԻ

ՍԵՒՐԻ 1969 ԱՇԽԱՏԱԲԵՐ ԹԻՒ 9

پاكين
 مجلة شهرية ، أدبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԱՐԵԱՆ

- ՎԱՐՁԻ ԽՄԲԱԳԻՐ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- ԽՄԲԱԳԻՐ
- Պ. ՍՆԱԳԵԱՆ
- ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
- ԱՆԴԱՄՆԵՐ
- Յ. ԳԵՂԱՐԴ
- Տ. ՈՍԿՈՒՆԻ
- Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
- Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
- Ժ. ԱԹԱՐԵԱՆ
- ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ
- † ԾԻ. ՊՕՅԱԶԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ժ. ԱԹԱՐԵԱՆ
- Ա. ՍԵՒԱՆ
- Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- ՍՕՍԵԱՑ ՏՂԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Խ. ԵԳԱՆԵԱՆ
- Ս. ԱՐԳԻՍԵԱՆ
- Խ. ԱՍՈՑԵԱՆ
- Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
- Ն. ՊԵՇԻԿՈՒՇԼԵԱՆ

.....
 ՆՇՄԱՐՆԵՐ
 ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

հմբազրութեան հասցէ

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296698

Բագրու

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍԻ

Հ. ՅԱՐԻ, ԹԻՒ Յ

ՍՍՊԵՏՐՈՒՄ 1969

ԳԵՐԱԴԻՐ

ԺԻՂԱՅՐ ԱԹՅԱՐԵԱՆ

ԱՅՍ ԹԱՆԿԱԳԻՆ ... ԹԵՆԱՄԻՆ

- Այս քանի՞ թիւ կ'ընէ, որ տող մը իսկ չենք տպած ջեզմէ, - կը դանդաղէր բարեկամս, ասկէ շաբաթներ առաջ, - վի՛րջ տուր այլեւս այդ պղտկի ծուլութեանդ, - կ'ըսէր ան, - քանի մը էջ մտտէ, կը բաւէ՛ ծուլանս...

- Ծուլութի՛ւն... Թերեւս, - կը փորձէի չըմեղանալ, - թէեւ ինծի խորթ եղած չըլլան անպործ, անբան ու անտաղտուկ սլքտալու խոշոր փափաքներ, - ծուլութի՛ւն, երբե՛ք, - կ'ըսէի ուրեմն բարեկամիս, - բայց ժամե՛րը... Ժամանա՛կը, դո՛ւն գոնէ տեղեակ ես, թէ ինչ դաւեր կը նիւթին դէմս ժամացոյցներու այդ անիծեալ բնակիչները, թէ ինչ անպարարութիւններով կը յաջողիմ պզտիկ փշրանքներ կորզել այդ դիւային պործիքներէն:

- Ժամանա՛կը... Ժամանա՛կը, - կը հեզնէր սակայն բարեկամս, - զիտենք, հասկցանք, միշտ նոյն յանկերդը... կը բաւէ սակայն, որ մտքդ կամենայ, կը բաւէ որ մէկը ուզէ, ժամանա՛կն ալ կ'ունենայ, ժամացոյցներն ալ...:

Եւ ոպտոնական ձեւով ժառը ինծի ուղղելով.

- Մի կարծեր որ ձեռքէս կ'ազատիս, - կը շարունակէր ան, դալ թիւին եթէ քանի մը էջ չյանձնես, ժամ, ժամանակ եղածին պէս դիտուդ կը փլչին:

. Այսպէս է բարեկամս ու քիչ մըն ալ աւելին: Կարելի չէ իրմէ խուսփիլ: Մանաւանդ՝ երբ թերթի հարց կայ, երբ խնդիրը դէր ու կրտսր

կանութեան կը վերաբերի, վստահ եղէք, հաւատացէ՛ք որ բարեկամս ո՛չ ժամերուն կը ինայէ, ոչ ժամանակին եւ ոչ իսկ... երկինքին:

»

«Ժամանակը ոսկի է», - գրուած էր մեր դպրոցի տեսչարանը, ոսկեզօծ դիրքերով ու ոսկիով շրջանակուած ցուցատախտակի մը վրան, անօրէնին դրանեզանին ճիշդ կունակի պատէն կախուած: Այդ ցուցատախտակը այնպէս մը զետեղուած էր տեսչարանի պատին վրան, որ ո՛չ մէկ այք, ոչ մէկ ակնարկ չկարենար անտեսել զայն:

Եւ այդ ճոսկին՝ փոյլեցաւ տարիներ շարունակ, մեր մանուկի անհոգ, անտարբեր աչքերուն դիմաց, առանց որ մեզմէ ոեւէ մէկը ըմբռնել կրցած ըլլար, թէ ժամանակ ըսուածը ինչպէս կրնար ոսկիին հետ կապեր ունենալ:

Տեսչարանի ոսկեզօծուած ցուցատախտակը, որքան ալ ինքզինք ոսկիով զարդարած ըլլար ու որքան ալ սուղ բառերով բեռնաւորուած, մեզի՛ մանուկներու համար, մեր մեծերուն անտանելի ճառերուն մէկ ծպտուած ու ատղակալի կրկնութիւնն էր միայն: Կային նոյնիսկ մեր մէջ տղաք, որ այդ հարուստ բառերուն տակ խարդախ ու շիւ շատ մը խաղեր կը զանէին, քողածածուկ նոր ծուլակներ ու դաւեր, մեզ՝ մանուկներս նոր տաղտուկներու մասնելու համար:

Բայց իրապէս, որո՞ւ հոգն էր այդ օրերուն, թէ ժամերը ոսկի էին կամ ուրիշ մետաղ մը: Ինչո՞ւ այնպէս կը յոգնէին, կը տքնէին մեր մեծերը, համոզելու համար մեզ, թէ ժամանակ ըսուածը մեր ունեցած կամ ունենալիք բոլոր բաներուն ամէնէն խարուսիկը, ամէնէն դաւադիրը եւ ամէնէն թանկարժէքն էր:

Ի՞նչ աւելորդ յոգնութիւն: Ժամ, ժամանակ, տարի կամ դար, ո՞վ, այդ օրերուն, այդ բաներուն արժէք կու տար, ոսկի ըլլային անոնք թէ իսկական աղամանդ...:

Ժամանակը, այդ օրերուն, անհաշիւ կերպով մեզի բաշխուած իրաւունքի մը պէս էր, արդար, հարազատ, անառարկելի մեր իրաւունքը: Ժամանակը... ժամանակը...: Բայց ի՞նչ ժամ, ի՞նչ ժամանակ: Անհուն, անսահման ճամբայ մը կար մեր առջեւ, պայծառ, լուսաւոր ու անվախճան ճամբայ մը, խաղերով, պարերով ու կապտորակ երազներով եզերուած: Այդ էր մեր ժամանակը:

Եւ մեր ժամերը ոչինչով նման չէին ժամացոյցներու հպատակութեանը մտած սրճներու քմայքներուն ենթակայ ու վազքի մտած այս հեւքոտ ու կամակորոյս օտրուկներուն: Մեր ժամերուն իւրաքանչիւրը անհոգ, անկաշկանդ անհունութիւններ էին, քան թէ ոսկի կամ արծաթ: Մեր ժամերուն ամէն մէկը քաղցր ու շոյող խոստումներու պէս էին, արբեցնող, տաք խոստումներ, Կաղանկներու, Չասիկներու եւ մեծ ու փոքր բոլոր տօներու երկայնքին շարուած...:

Եւ այդ շրջանին եթէ մեզի վերապահուած քիչ մը ցաւ ու վիշտեր ալ կային, անոնք յետին կապ մը նոյնիսկ չունէին ո՛չ ժամանակին եւ ոչ ալ անոր լայնքն ու տեսակը շարիւղու ձգտող մտահոգութեան հետ: Մեր մեծերը քիչ մը անգիտող կ'ըլլային, իրաւ է, քիչ մը շատ պահանջկոտ կ'ըլլային եւ երբեմն ինչքան, ինչքան անարդար...:

Եւ սակայն, այս ամէնը մէկզի դրած, մեր վիշտերուն մեծագոյննե-
րը կու գային անկէ, որ տօնական օրերը շատ շուտ կ'անցնէին եւ որ յա-
ճախ արձակուրդները չափազանց ուշ կու գային...

Մնաց որ, այդ վիշտ ըստւածնէն ալ շատ դիմացկուն տեսակներէն
չէին կարծէք: Անոնց ամէնէն թանձր կարծուածննէն անգամ կը հալէին,
կը ցնդէին, կը չքանային, թեթեւ մտախուզի մը նման, անմիջապէս որ
օրը ծաղէր, անմիջապէս որ արեւ ըլլար:

Այդպէս էին այդ օրերը ու կը կարծէինք, որ այդպէս ալ կը մնան
յաւիտեան:

Մինչեւ որ օր մը կարգացինք... Ուղերձ: «Մնաք բարո՛վ, մնա՛ք
բարով ընկերներ», ըսինք ուրախ, անտարբեր, մեր սովորական անտար-
բերութեամբ: Սակայն, յաջորդ օրն իսկ, զգացինք յանկարծ, որ ծանր
բան մը, մեղի անծանօթ շատ ծանր բան մը ճնշեց մեր վրայ: Զրացինք
յանկարծ, որ բաներ մը խլուեցան, խզուեցան մեզմէ, որ մեզմէ բան մը,
շատ յարդի բան մը մնաց մեր ետին...:

Բայց ի՞նչ փոյթ տակաւին, թէ ո՞վ մնաց, ո՞վ մեկնեցաւ, ո՞վ ի՞նչ
թողուց, ի՞նչ կորսնցուց: Վաղը միշտ կար մեղի համար: Գիտէինք, որ
վաղը մեզի միշտ նոր լոյս կար, նոր արեւ, նոր հանդիպում, նոր հանոյճ-
ներ...:

Յետոյ սակայն, յետոյ յանկարծ...: Բայց այս ձեռով պիտի շեղինք
մեր նիւթէն ու պիտի չկրնամ երբեք բացատրել, թէ ինչո՞ւ չկրցայ բարե-
կամիս տուած խոստումս յարգել եւ թէ ի՞նչ երկիրքներ ստիպուեցաւ
փցնել գլխուս ինզճ տղան: Երկիրքներու ի՞նչ որոտումներ կը փցնէ մի-
շեւ օրս ալ...:

Ըսած էի ուրեմն, որ բարեկամս գրութիւն մը ուղած էր ինձմէ եւ ես
ալ խոստացած էի հասցնել զայն իրեն տրամաբանական ժամանակաշրջանի
մը մէջ:

Անմիջապէս աշխատանքի լծուած էի եւ նիւթ գտնելու սովորական
փնտռուքներն ու տազնայները բոլորելէ ետք, կառչած էի ո՛չ թէ
մէկ, այլ այս անգամ, չար բախտէս, նրկու տարբեր նիւթերու վրայ: Ա-
նաջինը ինձի ներշնչուած էր, եթէ կարելի է այսպէս ըսել, մեր տան դի-
մացի շէնքին շորորդ յարկի պատուհաններուն յաւիտեան գոց փեղկերէն:
Անասպելներ կային հիւտուած, մեր թաղին մէջ, այդ յարկին շուրջ ու մա-
նաւանդ Տիկին... X-ին, որ այդ յարկին քնակին էր: Զինք մօտէն ճանչ-
ցողներ կը վկայէին, թէ չէն, մարդածօտ ու չափազանց հիւստէր անձ մը
եղած էր Տիկին... X, ինչ որ այսօրուանին անըմբռնելի հակասութիւնն
էր: Տարիէ մը ի վեր, սակայն, աւելի ճիշդը, էր ամուսնոյ մահէն ի վեր,
Տիկին X... գոցած էր գուռ, պատուհան, պատնէշած էր ինքզինք կարծէք
կեանքին ու աշխարհին զէժ ու միշտ կը բացակայէր տունէն, գրեթէ եր-
բեք հոն չէր մնար:

Ետտ մը ուրիշներու կարծիքով, սակայն, այդ գոց փեղկերն ու տե-
ական բացակայութիւնները, մթին ու անխոստովանելի արարքներ ծածկող
մէկական շատ պարզ, շատ հասկնալի երեւոյթներու փաստեր էին: Ըսող-
ներ կային նոյնիսկ, որ Տիկին X... իր օրերը կտակածելի ընկերակցու-
թեամբ, կասկածելի պանդոկներու մէջ կ'անցընէր:

Ահաւաստիկ ջեզի նիւթ, անմիջական, պատրաստ: Մանաւանդ որ,
անակնկալ Հանդիպումով մը կրցած էի խօսեցնել Տիկին X...-ը ու ճոխ
ստաղձ հաւաքած:

Տիկին X... կը խմէր: Կը խմէր անյազուրդ, որակաւ անձկութեամբ: Դժուարութեամբ զիջանած էր խոտովանիլ, զժուարութեամբ յանձն առած էր անդրադառնալ այն կարգ մը զաժան դէպքերուն, որոնք իր կեանքը խանգարած էին, որոնք իր կեանքը աւերած էին: Յիշատակներ... յիշատակներ այդ տանը մէջ: Ինք ու իր հարազատները տարիներ ամբողջ ապրած էին այդ տանը մէջ: Իր ամուսինն ու իրենց երկու զաւակները շնչած էին նոյն յարկին տակ, առանց յետին կասկած մը իսկ ունենալու, որ օրին մէկը, օրին մէկը, վաղա՛հաս աշնան մը պէս, աշնան մը պէս, որ աշխարհը կը մթաւնէ, ահաբեկ աշնան մը պէս մութ մը եկած ու ինկած էր իրենց տանը մէջ: Օրին մէկը, Էրենց երկու զաւակները, հարկաւ քիչ մը հասակ առած՝ մեկնած էին, ամէն մէկը աշխարհ մը, ամայութեան, անսպասուի վերածելով ամէն բան: Եւ ամուսինն ալ, արդէն տկար, չէր դիմացած այդ ամայութեան ու աշխարհին հրաժեշտ տուած՝ անսպաս մըն ալ ինք ձգելով իր հորին: Եւ ինք, Տիկին X... ինք՝ որ այնքա՛ն, այնքա՛ն սերտօրէն կապուած էր անոնց ու անոնց միջոցաւ տանը, տանը յետին առարկային...:

— Այո՛, շեմ դար այդ տունը, — կ'ըսէր ինծի Տիկին X... — պարզապէս չեմ կրնար... չեմ կրնար...:

Եւ հեկեկանք մը խեղդելով ալքով իր գաւաթին մէջ.

— Ըսեմ ձեզի, մի՛ կապուիք, մի՛ կապուիք, պարո՛ն, ոչ մէկ բանի մի կապուիք. ոչ մարդոց: ոչ տունի, ոչ իսկ առարկայի մը:

Ինք կը խօսէր, մինչ ետ բառեր կը փնտռէի, բռտեր իրար կը կապէի, կը քակէի, յարմար խօսք մը, կարեկցութիւնս յայտնող անկեղծ խօսք մը զտնելու համար:

— Ժամանակն է, — պոթկաց յանկարծ Տիկին X... — ժամանակն է, որ օրերը կը քանդէ, որ փեղկերը կը փակէ: Ժամանակն է մարդու միակ թշնամին, գիտցած եղէք, յարգելի՛ պարոն: Այդ անիծեալ ժամերը, աննշան թուող այդ վայրկեանները... անոնք են, անո՛նք... Հրէշներ են անոնք, հրէշներու անկուշտ յակոտներ: Ինչպէ՛ս կը կրծեն, ինչպէ՛ս կը լսփեն, կը կործանեն, կը քանդեն...:

— Բայց տիկին, միայն դուք չէք, — փորձած էի առարկել, — ամէնքս, ամէն բան...:

— Հէ՛օհ, ամէնքս ... ամէն բան ... կարծես թէ չէի գիտեր, պիտի անցնին... պիտի անցնին...:

Ու հեղձական շեշտ մը տալով իր ձայնին.

— Պիտի անցնին, թող անցնին, թող անցնին, թող կորչին, որո՛ւ հողը... թող դժոխքը տանի զիրենք, միայն բաժնուիլ չըլլար...:

Եւ տեսակ մը անյազ ոխով զաւաթը պարպելէ ետք.

— Բայց այլեւս լրացաւ, — շարունակեց Տիկին X... — այլեւս բան չմնաց, լրացաւ, լրացաւ... ինծի համար այլեւս բաժնել-բաժնուիլ չկայ...:

Ձե՛ք կարծեր որ հետաքրքիր գրութիւն մը կ'ունենայի, եթէ յաջողէի քանի մը տիպարներ հրապարակ հանել ու գործել տալ Տիկին X-ի այս ուշադրաւ անձին շուրջ: Բայց իրապէս ի՞նչ արտակարգ անձնաւորութիւն, այս Տիկին X...-ը, ի՞նչ հետաքրքրական տիպար...:

Նուազ հետաքրքրական չէր սակայն երկրորդ նիւթիս հերոսին անձնաւորութիւնը, նուազ գրաւիչ չէր: Եւ այս պարագան գիտ շատ մեծ դժուարութեանց կը մատնէր: Ձէի գիտեր ս՞ր մէկը ընտրել, որո՞ւն նախա-

պատուութիւն տալ եւ սկսեց եղաւ որ քանի մը գիշերներ վատնեմ, պարզ ընտրութեան մը յանգելու համար:

Ըսեմ առանց յապաղելու, որ իմ անձիս իշխանութեան սահմանները կը սկսին ուշ իրիկունէն: Շատ դիւրարեկ սահմաններ են անոնք սակայն: Յանկարծ կը տեսնես որ կ'ընկերկին, տեղի կուտան ու կ'ապաստանին մինչեւ խորը գիշերուան: Մութէն ետքն է ուրեմն, մութի տիրապետութեանը տակ՝ որ ժամերուս տէրը կ'ըլլամ, եթէ անշուշտ մինչեւ այդ ուրիշ տէրեր երեւան չլան...:

Ընտրութիւնս կայացած էր վերջապէս ու վարանումս ամբողջովին յաղթահարուած, ժամանակին դէմ պայքարի ելած տիկնոջ ի նպաստ:

Բայց պատահեցաւ, որ իրիկուններու գերիշխանութիւնս ալ ինձմէ խուսափի ու սկսուած առաջին էջի մը վրայ երկու նոր տող կարենալ աւելցնելու համար ստիպուիմ նահանջել գիշերներուն մինչեւ արմատը: Այն արմատը, ուրիշ այլեւս նոր լոյսին հետ հին տաղանդներն ու հոգիքը կը վերածնին... եւ ասիկա անոր համար՝ որ յաւելեալ աշխատանքի կարօտող նոր պարտաւորութիւններ յանկարծ մէջտեղ կ'առնէին: Այն միւս պարտաւորութիւններէն, որոնք հացդ կը ճարեն, որոնք կատակ չեն վերցնիր եւ որոնք կը կանխեն, կ'արհամարհեն ամէն ուրիշ իղձ կամ կարիք:

Այնպէ՛ս նախանձոտ են անոնք, այնպէ՛ս գիտեն ինքզինքնին պարտադրել, որ ամէն անգամ երբ սրտիդ մօտ, սրտիդ խօսող բանով մը կ'ուզես զրոգիլ, յանկարծ կը ցցուին դէմդ, այդ անկատակ, այդ անուրախ պարտաւորութիւնները: Կը ցցուին դէմդ, ահարկու, դաժան ու ամենայն անտարբերութեամբ ու պազարիւնով սրտիդ խօսող բոլոր բաները կը կոխկռտեն, կը սպաննեն: Կամ ա՛նուազն շփոթի կը մասնեն քեզ, երկընտանքի անուճեղի տաղանդներու մէջ կը յեռեն:

Ու չես գիտեր այլեւս, թէ Աստուծո՛ւ է ու Կեսարէն որո՛ւն կամքը կատարես, տուրքդ որո՞ւ վճարես: Քեզի տրուած ժամանակը, ժամանակի այդ աննշան փլուզումները որո՞ւ ընծայես...:

Եւ երբ անդրադարձած կ'ըլլաս, որ այս ձեւով ո՛չ Կեսարը պիտի կրնաս գոհացնել եւ ոչ ալ Ամենակալին անսահման փառքին յետին նշոյլ մը աւելցնել, երբ այլեւս կը գիտակցես, որ ժամանակը, կոյր ու անմիտ ու անխնայ այդ նոյն վազքն է, նոյն սպառումը, որ նախընտրած վայրկեաններուդ յետինն անգամ պիտի զլանայ քեզի, ալ ի՞նչ գիբ, ի՞նչ դրականութիւն, ի՞նչ բաղձանք...:

Եւ այսպէս, ուրեմն, Տիկին X-ը... Տիկին X-ը թաղուեցաւ սեզանիս զգրոցին խորունկ մէկ անկիւնին մէջ:

Տիկին X-ը թաղուեցաւ, բայց յետ մահու դաշնակից մը շահեցաւ, վճարական, կատաղի, անդառնալի դաշնակից մը, հասարակաց թշնամի ժամանակին դէմ...:

Սակայն միթէ՞ նոր փաստերու եւ յաւելեալ վկայութեանց կը կարօտէի կարծիք մը կարենալ կազմելու համար ժամանակին նկատմամբ: Միթէ ինքզինք չէ՞ր մատնած, չէ՞ր քողազերծած ու ինչքա՞ն յաճախ, ինչքա՞ն վատարար մաս հանած մեղի անգտանելի իր բարիքներէն:

Ըսած էին մեզի՛ր՝ ոսկի էր: Բայց ի՞նչ ոսկի, ի՞նչ արծաթ, անուխին ալ աւելի սեւ, աւելի դէ՛ղ չէ՞ր եղած մեզմէ շատերուն համար: Ու տակաւին չէ՞ր քանդած, անգութ փութկոտութեամբ չէ՞ր աւերած մեզի մնացած վերջին պատանքներն անգամ:

Եւ երբեմն, Աստուած իմ, ամբողջ օրերու եւ անհատում գիշերներ-

րու երկայնքին, ինչքա՞ն ծանր, ինչքա՞ն ծանր բեռ մը դարձաւ: Ի՞նչ սոսկալի մղձաւանջի, ի՞նչ ասուոր անձկութեան մը վերածուեցաւ:

Ըսած էին՝ ժամանակը ոսկի է, այսինքն Հագուադիւտ, այսինքն թանկարժէք, բայց ինչքա՞ն վատ, ինչքա՞ն անարդ եղաւ անիկա յանկարծ մեզմէ շատերուն համար: Ինչքա՞ն, ինչքա՞ն ցած, ինչքա՞ն ստորին, ինչքա՞ն անպարկէշտ, անբարոյական եղաւ շատ յանախ: Ի՞նչ դիւրութեամբ տուաւ ինքզինք անարժաններուն: Տուաւ ինքզինք բոզի մը պէս, աժա՞ն, առա՞տ, անսակարկ, ամէ՛ն անոնց, որոնց արդէն ունեցածը շատ էր իրենց, որոնք արդէն պէտք չունէին, որոնք արդէն շատ ունէին...:

Բայց անոնք որ ժամանակին արժէքը հարկւր անգամ, հազար անգամ, միլիոն անգամ աւելիով պնակատել պիտի կրնային, անոնք՝ որոնք իր ժամանակներուն ամէնէն յետինին ու վայրկեաններուն ամէնէն՝ աննշանին յանձնութեան իրաւունք մը պիտի ապահովէին, անոնք՝ որոնք իրեն համար ժո՞մ վաւելու, ազօթելու պատրաստ էին, անոնք ընդմիջտ անտեսուեցան, զրկուեցան ու չլիցցան տէր դառնալ ազատ, անկաշկանդ յետին րոպէի մը անգամ:

Եւ այսպէս, շատեր, իրենց ժամերուն լաւադոյնները ստիպուեցան պատանդ դնել, ամէնէն կայտառ իրենց ժամերը ուրիշներու ծառայութեանը յանձնել, յուսալով որ այդ ձեւով պիտի կրնան ազատ պահ մը ստեղծել, իրենց նախասիրած գործին կամ նպատակին յոտակ ու անկախ ժամ մը նուիրել...: Յետոյ, սակայն, անդրադարձան այս շատերը, անդրադարձան ոչ շատ ուշ, որ այս փշրանք մը պահը շահելու համար ամբողջ կեանք մը զոհած եղան... որ շերտ մը շոր հաց ու երկու ճղճիժ պղինձէ դրամ ճարելու համար տիպէրք մը վճարած եղան:

Որովհետեւ, ուրիշները, պատկառելի, ազնուաշո՛ւք Հանդերձներով ծպտուած այդ վաշխառու ուրիշները իւրացուցին անյապաղ իրենց յանձնելու ամբողջ պատանդները: Իւրացուցին, շահարկեցին ու սեփական իրենց Հաշտին գործածեցին շարաշար...: Որովհետեւ այդ ուրիշները, այդ... մեծայարգ, մեծատղա՞նդ փերեղակները, ի ծնէ գիտցած էին, որ խօսուած ու խօսուելիք բոլոր ճառերէն առաջ ու ճառերէն ետք, որ Սուրբ Գրոց ամենատուրը պատգամներէ՛ն ալ առաջ՝ կային միայն սրբազնագոյն իրենց շահերը...: Ով ինչ կ'ուզէր թող կարդար, կարուցած ըլլար, ով ինչ կ'ուզէր թող գրէր, ու գրած ըլլար, այս մեծաշուք շահագէտներուն համար ի սկզբանէ էր...: Ոսկին ու ոսկին էր Բանն: Եւ ժամանակն ալ ու մանաւանդ իրենց ժօռը պատանդ ինկած ժամանակը ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ շահու վստահ աղբիւր մը, եթէ ոչ ոսկի: Բայց իրաւ ոսկի, դրամատան մէջ իրենց զանձը ճոխացնող ու դրամատունէն իրենց ճղճիժ Հանձններուն գոհացում տուող Հնչուն, իրական ոսկի:

Ու յետոյ, այդ ոսկի կոչուած ժամանակը չէ՞ր միթէ, որ ո՛չ միայն Հանդերձեց, ո՛չ միայն սնուցանեց այս անկուշտ, անյազուրդ արարածները, այլեւ պահեց, պահպանեց ու քաջալերեց:

Քանի՞-քանի՞ աղաք կային, որոնք Հորիզոնէն անդին լոյս փնտտելու ելած էին, որոնց բիբերուն ետին Հորիզոններ բացուած կային, բայց որոնք ինկան ժամանակին ամենակուլ Հնոցին մէջ ու գիշերային թիթեռներու պէս, գիշերուակ մը տեսողութիւն հազիւ ունեցան:

Քանի՞-քանի՞ տղաք կային, որոնց սիրտը Հորիզոններ կ'ընդգրկէր, որոնք հոգին անհունութեան կը ձգտէր, բայց որոնք ինկան ժամանակը իր-

բեւ ոսկի գործածող այդ վաշխառու արարածներուն խնուրթներուն մէջ ու ալլելու լոյս աշխարհ չելան...:

Քանի՜-քանիններ տակաւին, մարդկային մակարդակին շատած նախամարդերու անորակելի լուծին տակ ինկած ու անոնց անարդ, անսմային վերարբերումէն մահացու վէրք ստացան: Վէրք ստացան ու լռեցին: Ու շղթան: Եւ ահաւոր այն տրտունջները, այն ահուկի աղաղակները, խեղդըւնցան այդ խեղճներուն կուրծքին տակ ու հովերուն նոյնիսկ լռելի լեղան...:

Այս ամէնը՝ որովհետեւ օր մը հաւատք ընծայեցին, օր մը արժէք տուն երկիմաստ ու խարդախ շարք մը խօսքերու, պղտոր ու շիւ պատուէրնեղու...: «Ժամանակը ոսկի է»: Վնչխատանքը սուրբ է»: Եւ տակաւին չեք դիտեր ի՞նչ:

«Ժամանակը սակի է»: Հապա՞:

Այո՛, սակայն ինչո՞ւ այդպէս զոհ երթային անոր հաւատք ընծայողներու ամբողջ փաղանդներ: Ինչո՞ւ արդեօք փնացուէր, կործանէր ու աւերուէր մինչեւ իսկ անոնց հոգին...:

- Աստ հանդիշ, - կը կրկնէր մեզի մեր ընկերներէն մէկը, ամէն անգամ որ միասին ըլլայինք: Մէկը անոնցմէ, որոնք շփտակցելով, որ ժամանակին մէկ ստորին քմահաճոյքին դիւրին զոհը կ'երթային, նոյն այդ անգուր ու անողորմ ժամանակին, գայած ընկողմանած էին ոմանք ինչոր մեծահամբաւ փերեղակի մը խանութին գորշ ու սպառիչ մթնոլորտին մէջ, իսկ ուրիշներ՝ դրամենեակ կոշուղ նորատեսակ ստրկարաններու բթացող, տակակցնող ծառայութեան տակ:

- Աստ հանդիշ - կը կրկնէր շարունակ մեր ընկերը, կատաղի սահմաններուն մէջ մնալ ուզող, բայց խնդուքի երբեք չճող ցաւազին շեշտով մը, - պիտի գրէք օրին մէկը այս խանութին ճիշդ նակատը - կը կրկնէր միշտ մեր ընկերը, - պիտի գրէք Վեստ հանդիշ շայտանուած մեծ տաղանդ մը, Հոմերոս մը, Վերթիլ մը»:

- Ի՞նչ համեստութիւն, - կը փոխադարձէր մեր մէկ ուրիշ ընկերը, կատակը աւելի շեշտելու մտքով, - Ի՞նչ համեստութիւն, Հոմերոս... Վերթիլ...:

Ու յետոյ, պզտիկ մը լըջանալով.

- Դուն հոգ մի ըներ, - կ'աւելցնէր մեր միւս ընկերը, - այդ Վերթիլը, Հոմերոսը, եթէ կան, անոնք այնտեղ չեն մեռնիր, այդ քու բոսած խանութներու քարերուն տակ չեն թաղուիր... Ան ի՞նչ տեսակ Վերթիլ կ'ըլլայ, որ կողորդ մը հացի համար, որ արգահատելի գոյութիւն մը տեւականացնելու համար Վերթիլ ըլլալէ հրաժարած ըլլայ:

- Դուն հոգ մի ըներ, - կ'եզրակացնէր մեր միւս ընկերը, - եթէ իրապէս Վերթիլ կայ, ո՛չ թէ այդ խանութին մէջ, այլ դժոխքին եօթը խորունկութիւններուն տակ նոյնիսկ եթէ զինքը թաղած ըլլան, այդ եօթներորդ դժոխքէն ալ կը յաջողի ան ձայն մը դուրս հանել, յայտնակերպել ինքզինքը...:

Բայց իրապէս, Վերթիլ մը կա՞ր արդեօք մեր ընկերոջ խորունկները թաքնուած կամ Հոմերոսեան հուժկու տաղանդ մը, որ յայտնուիլ փափաքէր, որ փափաքէր դուրս ժայթքել անոր երակներէն:

Յաւալին այն էր, սակայն, որ մեր ընկերը, իր գոյութիւնը ապահովելու շատ մարդկային մտահոգութեամբ, արդէն իսկ հաշտուած էր իր վե-

ճակին հետ, արդէն իսկ համոզուած՝ Վերժիլն ու Հոմերոսը այդ խանութին դռը պատերուն տակը թաղելու դազափարին հետ...

Մեր խեղճ ընկերը՝ Չէի՞ն ըսած երբեք իրեն՝ «ժամանակը ոսկի է», ինչո՞ւ արդեօք շփտնաբ, ինչո՞ւ արդեօք շփտնային, սորված չըլլային բոլոր միաները, որ ժամանակը իրենց բարերարը չէ, իրենց հաշտոյն չաշխատիր, ինչո՞ւ արդեօք զիտցած չըլլային, որ ժամանակը երբեք ետին չի նայիր ու մանաւանդ, անգամ մը որ թաւալեցաւ, անգամ մը որ յաջողեցաւ պահ մը խզուիլ ձեր կեանքէն, այլեւս երբեք ձեզի չի ժպտիր...

Եւ տակաւին, ի՞նչն է ամէնէն վատը, ամէնէն խղճալին, եթէ ոչ ընկճուիլը, եթէ ոչ համոզուիլը, կացութեան հետ հաշտուիլը։ Ժամանակ կոչուող խուլ ու անմխտ արշաւին ամէնէն դարձելի, ամէնէն պժշակի ու ամէնէն կործանարար մէկ արարքը չէ՞ ասիկա։ Անոր յաղթանակը չէ՞ բոլոր, բոլոր ուրիշ բաներուն վրայ...

Ես ալ, իմ կարգիս, զո՞ւ չէի՞ միթէ այդ անզիտութեան։ Այդ պատճառաւ չէ՞ր, որ դրուիւնս չէի կրցած թերթին հասցնել...։ Լաւ է, ուրեմն, որ գիտակցին ամէնքը, որ գիտակցիմ նաեւ ես, որ կոտուիլ պէտք է պայքարիլ պէտք է ժամանակ ըսուած այդ վատութեան դէմ։ Թշնամի է ասիկա, թշնամիներուն ամէնէն անարգը, որուն դէմը ծառանալ պէտք է, ընդզոյժ պէտք է, նոյնիսկ եթէ թանկարժէք ու թանկագին տարազներով ինքզինք զարդարած ըլլայ...

Պէ՛տք է բռնել, պէ՛տք է բռնել անգամ մը ժամանակ կոչուած այդ ամենակուլ հրէշին կողորդէն, պէ՛տք է բռնել ու ցնցել զինք, ու թօթուել ուժով մը։ Պէ՛տք է բռնել, անշարժացնել զինք դէմոյ, անդամահատ ընել զինք իր ժամերէն, վայրկեաններէն ու բոպէներէն։ Պէ՛տք է բռնել ու գամել զինք իր տեղը։

Գամել, գամել զինք, ա՛յնպէս մը գամել, որ այլեւս չկարենայ ուղածին պէս արշաւել, որ այլեւս չկարենայ դէմը եկած ամէն ինչ կոխկըտել, անցնիլ անհող, անտարբեր...

Չ. Ա.



Վ Ի Շ Տ

Իմաստութեան ծագիկ, դուն ո՛ւշ ծագկեցար,
 Երբ ճիւղն իջեր ու ծածկեր է լեռ ու սար,
 Երբոր սրտին բաց դարձեր է մոխիր,
 Ու սիրոյ երգն ալ ազօրք մ'է անձանձիր:

Հիմա գիտե՛՛մ ես մեկնակէտն ու վախճան,
 Գիտե՛՛մ կեանքին անդերբունկ ու լո՛յս նամբան.
 Ինչպէ՛՛ս քուչիմ ես քեւերով քաշունի՛
 Երբոր հոգիս բազանգնեբու բոց չունի:

Ինչո՞ւ չեկար, երիվարս երբ խրխնջար
 Իզձերու սեպ նամբուն վրայ բարի՛, չա՛ր.
 Երբ ժպրիէի երկնի ստաղերն ապշոպել,
 Տիեզերքն իր Աստուծով մէջըս բանտել...

Իմաստութեան ծագիկ, գեղօր մ'ես հիմա,
 Որ մեկնելուն՝ տանտէրն անկիւն մ'է մոռցեր,
 Ու վախճանին հասած՝ յիշեր ու լացեր...:

Կ Ե Ա Ն Ք Ի Ս

Ու վախճանին հասած՝ յիշեր ու լացեր...:
 Ծագիկի՛՛ պէս ծագկեցար արեւին տակը արդար.
 Բաժակ մ'իրբու յակիմքի, լեցուն մեղր ու նեկաարով.
 Կարծեցի ինչ հանոյքի, սիրոյ սեզան, երգ ու պար,
 Գաշնակութի՛ւն համօրէն, խաղաղութի՛ւն անվրդով:

Օր մ'ալ արեւը մթնեց քուխ ծոցի՛ն մէջ ամպերուն,
 Ու մեղրիդ մէջ կարեցաւ վիշտերու քոյնը լեզի.
 Աշխարհն հոյս սարսաբոս, շանքեց կայծակը հեռուն,
 Ու քռմեցար դուն ընդմէջ եզիմներու, մըզեզի:

Դուն եթէ պիտ' ըլլայիր վազանցիկ յո՛ւշ մը անուշ.
 Պիտ' արիւնէր բոց սիրտդ ինկած փուշ ու տառասկի:
 Ինչո՞ւ, ինչո՞ւ ծըլեցար, առաօտ մը տրտմանուշ,
 Երբ գիշերը պիտի գայ փակել արեւդ ոսկի:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱԿ

ՆՈՒՊԱՐ ԶԱՌՈՒՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԵՀԵՆԻ ԳՈՒՌՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Գ.

Ամբողջ յետմիջօրէն, Միքայէլ մտածեց Օրհանին ըրած առաջարկներուն մասին: Անոր օղնականը ըլլալով՝ պիտի կրէր թուրք զինուորի հովանաւորող համազգեստը, պիտի չըջազայէր հետը եւ ճամբուն ընթացքին պիտի հանդիպէր հայրենակիցներու, պիտի միջամտէր, միջոցներ պիտի գտնէր շատերուն կեանքը փրկելու...

Մուլիշներուն զիւ ձայները զինք «թափեցուցին»: Օրուան աշխատանքը վերջացած էր, ժամն էր ճամբար վերադառնալու: Միքայէլ, որ ընդհանրապէս կը քալէր խումբին առջեւէն, անզիտակցաբար կը դանդաղեցնէր քայլերը, միշտ ընկզմած մտածումներուն մէջ: Ատեն մը ետք, կը գտնուէր կարաւանին վերջաւորութեան, տկարներու եւ հեւցողներու խումբին մէջ: Ասոնց վրայ է որ հսկիչները կը բռնանային ընդհանրապէս, ամէն էրէկուն անոնց շարքերէն խլելով անթիւ դիակներ:

Յանկարծ մարդ մը, որ քովէն կը քալէր, գետին ինկաւ: Հսկիչը, որ անոր կը հետեւէր քայլ առ քայլ, ինչպէս դայան մը վերաւոր երէի մը, խոյացաւ թշուառականին վրայ եւ սկսաւ զայն անխընայ հարուածել: Մարդը ուժերը հուսաբեց մահուան ճիրաններէն փրկուելու համար եւ ոտքի ելլելով կաղն ի կաղ շտրունակեց ճամբան: Քանի մը քայլ անդին կրկին փոռեցաւ փոշիին մէջ, դայանը կրկին խոյացաւ: Մարդը ձեռքերուն վրայ յենելով կրկին փորձեց ոտքի կանգնել եւ մնաց այդ դիրքին մէջ: Հըսկիչին սիրտը սկսաւ ուժգին տրոփել: Հետանքի պահը հասած էր: Դէմքը կը լողար երանութեան մէջ: Բիրը հանդարտօրէն բարձրացուց եւ այնպիսի՝ ճշգրիտ ու զօրաւոր հարուած մը իջեցուց մարդուն, որ գանկը ճեղքուեցաւ եւ անոր ձրի արիւնը հոսեցաւ մեղսակից աւազին վրայ:

Միքայէլ վազեց մարդուն մօտ, զայն ոտքի կանգնեցուց ու միասին քալեցին: Դահլիճը կը շարունակէր հարուածել կրճ

կատարութեամբ, միշտ թիրախ առնելով անոր դանկը: Մոռցած էր միւս բոլոր անկարկները եւ ուշացողները: Միքայէլ՝ իր ուսը վահան մը ըրած էր, եւ կը ստանար հարուածներուն մէկ մասը: Հսկելը կը հայտնէր, կ'անիծէր եւ երդում կ'ընէր, որ այդ յամառ ստրուկը պիտի չձգէ որ ողջ հասնի ճամբարին մուտքը: Միքայէլ արդարացուց քայլերը, շեղեց ճամբան, միշտ բազուկներուն մէջ առած արիւն-լը՝ այ մարմինը, եւ յալօղեցաւ անհետանալ ամբողջին մէջ, մինչ հսկելը կատարած խոյն մը պէս կը հարուածէր աջ ու ձախ ոտնալով:

Սակայն Միքայէլին միջամտութիւնը չփրկեց մարգը: Ան կամաց-կամաց կը ծանրանար, կը թուլանար, Ք'ոչնչանար: Միքայէլ դիտեց մը փրկելու համար՝ ինքզինքը վտանգած էր, եւ այս ժեսթը ըրած էր գիտակցաբար, որովհետեւ Օրհանին հանդիպելէն ի վեր, անցեալի ամբողջ քողորութիւնը խուժած էր իր դժբախտութիւնէն ներս, եւ այդ լաւ օրերուն վերադանայու միակ միջոցն էր մեռնիլ:

Մարմինը յանկարծ սասեցաւ քաղովներուն մէջէն եւ դիտելը կռնակին վրայ փոռեցաւ հողին վրայ, բաց աչքերը ուղղելով Միքայէլին, հաւատարիմ շան մը խոնարհ ու երախտազէտ նայուածքն պէս:

Գիակը ինկած էր ճամբարին մուտքէն ոչ հեռու, ուրիմ կորուստ մը չէր համարուեր: Նախ կարելի պիտի ըլլար դայն թուարկել եւ յետոյ փոխադրել սալ իր ընկերներուն մէկուն ուսերուն վրայ եւ երկուքով բազմապատկել կրեալութիւնը:

Սակայն Միքայէլ ցնցոտիներուն վրայ կը կրէր իր միջամտութեան անջնջելի փաստը: Ճամբարի իշխանութիւններուն աչքին մեծագոյն ոճիրը գործած էր՝ արգելք անդիտանալով հսկիչի մը սրբազան գործունէութեան, որ էր թուրքական ընկն անհնազանդ ստրուկ մը, որ կը մերժէր մեռնիլ եւ պէտք եղածէն աւելի կը յողովներ օսմանցի պաշտօնեայ մը:



Միքայէլ Պարթեւեան փաթթեց իր վերջին գրանիկը, կտոր մը հաստ թուղթի մէջ գնելով իր շորցած խոտի վերջին պաշարը եւ պարսպ տուփը նետեց փշաթելերէն անդին:

Ինչպէս ամէն իրիկուն՝ պահակները կը հարուածէին, կը մոլեղնէին պոռալով:

– Եարժեցէ՛ք, շարժեցէ՛ք:

Միքայէլ այլեւս չէր խուսափեր անոնցմէ: Հսկայ ճամբարը, շուրջի կոյս անդաստաններուն մէջ, կը տարածուէր անբուժելի վէրքի մը պէս, որ մարդիկը բացած էին երկրին անդդայ մարթին վրայ:

– Երբ արեւը մայր ժտնէ, ծխած պիտի ըլլամ վերջին գլանիկս, – մտածեց Միքայէլ, – եւ ուրիշ սփոփանք պիտի չունենամ: Ինչպէ՞ս պիտի կարենամ սպառել պալիք օրերու հասա տրցակը, ապրիլի ք սեւ օրերս, որ մէկիկ-մէկիկ ինծի պիտի ներկայանան չվճարուած օտուակներու պէս:

Սակայն արեւը չէր, որ այդ օր պիտի տար վարագոյրը բանալու ազգանշանը, որովհետեւ շապատուած մէկ պահուն, սուլիչները սկսան ցցուիլ իրենց շուրջ անժամանակ փուչեղու պէս: Միքայէլ ստիպուեցաւ նետել կծիկը, որովհետեւ ընկերները սկսած էին խուժել սովորական հաւաքատեղին եւ ամէն մէկը հրելով ու հրմշակելով կը ջանար հասնիլ ա՛յն տեղը, որ հեռու կը կարծէր հսկիչներու շարագուշակ նայուածքէն:

Հանապազօրեայ քեմադրութիւնն էր, հրամանատարին նոյն հարցումները, հրկիչներուն նոյն պատասխանները: Բայց այսօր ամէն բան անիրական կը թուէր Միքայէլին: Զայնը կու գային ուրիշ աշխարհէ մը, մարդիկը անբան խամսձիկներ էին կարծես: Միքայէլ չէր գիտեր, թէ մ'ը մէկ աշխարհին մէջ կ'սպրէր ինք: Մէկ բանի վստահ էր՝ շատերուն համար կը խաղցուէր ուղեբեգութեան վերջին արարը:

- Զատեցէ՛ք յանցաւորները, - պո-
նաց հրամանատարին ձայնը :

Եւ հսկիչները խոյացան կալանաւոր-
ներու հօտէն ներս եւ սկսան մէկէկէ-մէ-
կէկ դուրս հրել մահապարտները : Ընդ-
հանրապէս շէին մօտենար առանձնա-
շնորհեալներու փոքրիկ խումբին :

Յանկարծ ձեռք մը իջաւ Միքայէլի
ուսին : Իս դարձաւ ու ճանչցաւ այն պա-
հակը, որ զանկը ջախջախած էր ընկեր-
ներէն մէկուն : Չար ժպիտ մը կար երե-
սին վրայ : Միքայէլ շքողքեց, շքիմաղ-
րեց, երաւ շարքերէն ու միացաւ յանցա-
պարտներու խումբին : Այսօր անոնց թի-
ւը շատ էր, երկու հարիւրէն աւելի : Օր-
հանին միջամտութիւնը ունեցած էր հա-
կառակ արդիւնք : Հրամանատարը խոս-
տովաներ շտապած էր երիտասարդ սպա-
րիւն եւ անմիջապէս որ ան մեկնած էր,
կատաղութիւնը թափած էր խեղճ զոհե-
րուն վրայ :

- Այսպէս աւելի լաւ է, - մտածեց
Միքայէլ, - ուշ կամ կանուխ ճակատագ-
րին սլաքը պիտի անցնէր այս բոպէին
վրային : Մահուան դատապարտուած մը
իրաւունք չունի որոշելու իր գլխատման
մամը : Դատաւարները եւ դահիճները մի-
այն դիտեն այդ : Ինչ՞զ՞ Թրճան, ինչի՞ ծա-
ռայութիւն մը ընել ուղեցիր, կարծեցիր
բարւոյն մեր վիճակը քու միջամտու-
թեամբ... Աւզեցիր քու միջոցովդ քա-
րիք մը ընել ընկերներու եւ արդիւնքը
եղաւ ճիշդ հակառակը. դիակներուն թի-
ւը կրկնապատկուեցաւ :

Միքայէլ, իր ինքնութիւնը յայտնե-
լով հրամանատարին, կրնար դիւրու-
թեամբ մորթը փրկել եւ վերադառնալ
իր տեղը, միտնալ անոնց, որոնց մահ-
ուան ժամը տակաւին չէր հնչած : Երկրա-
շարինքը անձեռնմխելի էին, որովհետեւ
եթէ անոնցմէ մէկը մեռնէր, ուրիշ մը
տեղը պիտի շառնէր եւ կամուրջին շի-
նութիւնը պիտի կաղար : Հրամանատարը
այս լաւ գիտէր, Միքայէլն ալ լուր ու-
նէր անկէ : Կ'ուզէր կանուխ մեկնիլ եւ
այսպիսով պատճել իր դահիճները, ար-
դիւք ըլլալ կամուրջի շինութեան :

Միքայէլ դարձաւ իր ընկերներուն

կողմը եւ աչքերը հանդիպեցան թորդո-
մի աչքերուն : Առաջին անգամ ըլլալով
երկու ընկերները իրարմէ բաժնուած էին
եւ այս պիտի ըլլար վերջինը : Այնքան
կապուած էին իրարու, որ այս յանկար-
ծական դէպքը դիտենք շտեղծուցած էր :

Միքայէլի եւ թորդոմի աչքերը ի-
րարու ուղղուած կը խօսակցէին, կը
պատմէին իրենց վիշտը, կը բացատրէին
իրենց յուսահատութիւնը : Իրենց համար
մահը կը նշանակէր յաւիտենական բա-
ժանում :

Թորդոմին աչքերը, սակայն, տիրուր
շմնացին երկար : Անոնց մէջ ծնաւ ազատ
նշույլ մը, տեսակ մը ժպտացող շող, որ
կամաց-կամաց լոյսի կը վերածուէր, կը
հրահրուէր ներքին փոթորիկէ մը եւ կը
վերածուէր բոցի : Միքայէլ աչքերը դո-
ցեց, որպէսզի թորդոմին կամքը խորսի
իր կամքէն, եւ իրենցմէ իւրաքանչիւրը
բալէ իր ճակատագրին :

Յ

Եւ երկու հարիւր մահապարտները,
չոկատ մը դիտուորներով շրջապատուած,
դանդաղ քայլերով սկսան շրջիլ ճամբ-
րին մէջ, դիակներ հաւաքելու համար :
Պէտք եղաւ նաեւ փնտռել դուրսերը,
ճամբաներու վրայ, որպէսզի իւրաքան-
չիւրը ունենայ իր բաժինը :

Հսկիչը, սակայն, չէր հեռանար Մի-
քայէլէն : Մտքին մէջ դադարաւոր մը ծնած
էր եւ կ'ուզէր դայն գործադրել : Միքա-
յէլ իր արտաքինով կը նմանէր միւս
բոլոր գերիներուն, նոյն խիտ ու սեւ մօ-
րուքը, նոյն մորթի աղտոտութիւնը,
նոյն ցնցոտիները, միայն կուրծքին վրայ
կը տարածուէր չորացած արեան լայն բիծ
մը :

Մէկէ աւելի անգամներ, Միքայէլ
ծոեցաւ դիակ մը բեռցնելու համար ի՞նչ
ուտերուն վրայ, եւ ամէն անգամուն
հսկիչը արգելք հանդիսացաւ, անոր կո-
ղերուն կից մը տալով : Երբ հասան ճամ-
բուն վրայ ինկած դիակին քով, թորթը
ըսաւ .

- Դո՛ւն ուղեցիր այս շունին օգնել :

երբ տակաւին ողջ էր. հիմա որ սասկած է, քեզի կ'իյնայ զինք շալկել ու տանիլ մինչեւ իր վերջին բնակարանը:

Միքայէլ մեծ ճիգով մը վերցուց արեւմտայն եւ փոշոտ մարմինը եւ զետեղեց աջ ուսին վրայ, երկար պարկի մը պէս: Առաջին անգամն էր որ այսպիսի բնու մը կը փոխադրէր: Մանրութիւնը չէր, որ կը նեղէր զինք, այլ ձեւը եւ անհաստատութիւնը: Մարմինը երկուքի ծալուած՝ կը խախտէր իր հաւասարակշռութիւնը, մէյ մը ետ, մէյ մը առաջ մղելով: Բայց շատ շուտով վարժուեցաւ կացութեան եւ արագ քայլերով անդը տուր թափօրին գլուխը: Միւս բոլոր մահապարտները, կեանք իրենց բնուան տակ, կը քաշէին լուռ ու մունջ: Հակիչները, ընթացքը արագացնելու համար, անդադար կը հարուածէին այս երկոտանի գրաստները: Երթալով քայլերը կը ծանրանային: Իրենց ամբողջ ուժը սպառած էր: Շատեր զետին ինկան եւ մերժեցին սուքի ելլել: Վերջապէս մօտեցան բլուրներուն ստորոտը:

Ընդարձակ հողիտ մը կը տարածէր իրենց աջ կողմը: Թարմ հողի հոտ մը իրժեց իրենց առնդեբէն ներս, ուր կը խանուէր փտութեան մասնուած մարմիններուն դարձահոտութիւնը: Պահակապետը կը քաշէր առջեւէն, ստրուկները, մէկկիւմ-մէկկիւմ կը քաշէին իր ետեւէն: Այլ ու ձախ կողմերը հսկայ փոսեր կային, դիակներով լեցուն եւ հողով ծածկուած: Հոնդիւններ կը լսուէին հողին տակէն, ձեռք մը, ոտք մը, գլխու մը մտղերը դուրս ելած էին:

Պահակապետը կանգ առաւ պարապ փոսի մը առջեւ, որ նոր փորուած ըլլալու էր: Գերիները մէկկիւմ-մէկկիւմ բռնեցրը նետային վար, անկուշտ երախը լեցնելու: Սակայն փոսը, որ միւսերուն տարողութիւնը ունէր, չկրցաւ պարունակել բոլոր դիակները, այնպէս որ, գետնին մակերեսէն վեր բարձրացաւ մարդկային բուրբ մը, իրար անցած մարմիններ, ուրոնք տակաւին կը շարժէին, կը ցնցուէին, կը հասաչէին: Ժայռի մը մօտ, շարուած էին բաւեր ու բրիչներ: Եւ վեր-

ջուլոյսի մեղմ վարադոյրին տակ, որ զոյգութեան ալիք մը կը նետէր այս արեւէն ու շորութեան պատահասուած տուրածութեան վրայ, գերիներուն մէկ մասը սկսաւ նոր փոս մը փորել փորուն հողին մէջ, առաջիններէն աւելի ընդարձակ ու խորունկ, որովհետեւ յաջորդ օրուան հունձքը կը նախատեսուէր աւելի առատ:

Միքայէլ աչք մը նետեց շուրջը: Հողէ նօսը ծածկոցին տակէն ձեռքեր կը փորձէին բանի մը կառչիլ, ծանրութեան տակ ճզմուած կուրծքերէ յուսահատ հոնդիւններ կը լսուէին: Զմեռած միտեր կը փորձէին նետուիլ կեանքի ազատարար լաստին վրայ:

- Ինչո՞ւ այս բոլոր յոգնութիւնը քանի մը կեամբուրի լեշնեք թաղելու համար: Աւելի լաւ պիտի ըլլայ՞ր զանոնք գետը նետել, կամ այ հետու տեղ մը հաւաքելով այրել, - կ'ըսէր պահակներէն մէկը, որ այնեւ ձանձրացած էր այս միօրինակ դատարարէն:

- Սկիզբները այդպէս կ'ընէինք, - պատասխանեց իր ջողիները, որ աւելի հին էր այս գործին մէջ, - սակայն պերմանայիները ասիկա մտնում նկատելով արդէնք հանդիսացան: Իրենց դիտանները դիակները իրր հում նիւթ դարձածելու միջոցը դուստն են եղեր: Մանաւանդ շատ կարեւորութիւն կուտան սկիզբներուն:

- Ինչո՞ր կրնան ծառայել մեռած մարդու մը ոսկորները:

- Ըստ գերմանացիներուն, ոսկորները կը պարունակեն եղբր քիմիական շատ կարեւոր նիւթեր: Եթէ անոնք ասուն մը հողին տակը պահուին եւ յետոյ մանրուէին, կու տան փոշի մը, որ խառնուելով կիրին եւ աւազին՝ կու տայ ամուր շաղախ մը, որուն առաջին յատկութիւնն է կարծրանալ ջուրին մէջն իսկ: Արդէն քանի մը օրէն ազալու մեքենայ մը պիտի բերուի հոս եւ մասնագէտները գործի պիտի սկսին: Հին փոսերը պիտի բացուին եւ հոն գտնուող ոսկորները պիտի ազատուին եւ պիտի դործածուին կամուրջին շինութեան: Այս մեւով մեր երկրը

պիտի ունենայ աշխարհի ամէնէն ամօր կամօրջը:

- Ոչ միայն ամէնէն ամօրը, այլ մանաւանդ ամէնէն Հազուապիտը: Աշխարհի ո՞ր երկիրը կրնայ պարծենալ կամօրջով մը, որ չիմուած է մարդու ոսկորներով, մանաւանդ Հայու ոսկորներով:

Միջուկէ սկսաւ բաճով Հողերը մէկ կողմ նետել: Պահակներուն խօսքերը իր ուղեղին մէջ կը սղալային: Կ'երեւակայէր, թէ քանի մը ամիս ետք, իր ոսկորներն ալ պիտի աղացուէին ու գործածուէին կամօրջին շինութեան:

Լոյսը կամաց-կամաց կը նահանջէր երկիրքի երեսէն եւ սակաւին երկու Հարիւր Հոգի կար պատժելիք: Վէրը, դատարկ ցիցերը այրիացած կիներու պէս կը սպրտէին իրենց սիրահարներուն, զանոնք սեղմելու Համար իրենց կարծր կուրծքերուն վրայ:

- Ահմէ՛ա, էնվէ՛ր, Օսմա՛ն, - պոռաց պահակապետը, - չո՛ւտ ըրէ՛ք, տեղ պատրաստեցէ՛ք Հելբերուն:

Պահակներէն քանի մը Հատը մագրուցեցան զսահմանը եւ իրենց զանակներով կտրեցին կապերը, որոնք զիակները կը միացնէին ցիցերուն: Ոսկորներու կոյտին վրայ մարմինները կ'իջնային խուլ աղմուկով մը: Ողջերը աղաչող նայուածքներ կ'ուղղէին դահիճներուն, որպէսզի իրենց ալ կապերը կտրեն եւ վերջ տան խաչելութեան: Ստիպան, այսօր, իրենց կարգը չէր գետնին վրայ երկնատուն:

Եւ իւրաքանչիւր խաչին կապեցին նոր ու թարմ դատապարտեալ մը, դիակներու քուրջերով պատրաստուած շուաններով:

Բայց գիշերը կը շտապէր, եւ մութը կը սահմանափակէր տեսողութիւնը: Պէտք էր ճամբար վերադառնալ շուտով:

- Ապուշնե՛ր, աւանակներ, - կը պոռար լուսնու իր պահակներուն, - ձեռքի շուրճ, որ արագ աշխատէ: Ե՛րևա ըրէ՛ք, անտիջապէս մաքրեցէ՛ք միացեալներուն Հաչիւր: Խնայեցէ՛ք փամփուշտները:

Պերիները, որ կը շարունակէին հողը փորել, սարսափեցին յանկարծ, իմանալով որ մահը իրենց այսքան մօտ է: Բայց տնոնցմէ ոչ մէկը շարժում մը ըրաւ ոչտրեւիտ Համար տարածուող խաւարէն, Այնքան զիւրին էր սպրդել շարքերէն դուրս, պահուրտի փոսի մը մէջ ու չվերադառնալ ճամբար եւ չթաղուիլ փոսի մէջ:

Մէկը կը մրմրար.

- Եթէ նոյն իսկ կարենանք ազատիլ պահակներու ձեռքէն, ո՞ւր պիտի կարենանք ապաստան մը գտնել: Ամբողջ օսմանեան կայսրութիւնը մեզի Համար դարձած է մահուան թաղաւորութիւն, եւ իւրաքանչիւր օսմանցի՛ դահիճ: Ամէն տեղ մեր ճակտին վրայ պիտի կարգացուի Հայ անունը, որ կը նշանակէ մահուան դատապարտած: Թուրք երեխայ մը կրնայ մեղ սպաննել զուարճանալու Համար: Ինչո՞ւ ուրեմն նոր յոգնութիւններու, նոր վտանգներու ենթարկուինք:

Ապրիլ անկարելի էր. աներեւակայելի արկածախնդրութիւն մը, տեսակ մը առասպել, կախարդուած անտառ մը, ուր կը վխտային տարօրինակ գազաններ եւ աներեւակայելի թակարդներ:

Հրացանի կոթերով գիրենք շարեցին փոսին եզերքը, զոր իրենք իրենց ձեռքերով փորած էին: Չանոնք իրարու ետեւ շարեցին Հինգ-Յինգ: Եւ պահակը իր հրացանին փողը կը զնէր առաջինին կուրծքին եւ կը քաշէր բլթակը: Փամփուշտը կը ծակէր Հինգին ալ կուրծքերը եւ անոնք մէկ անգամէն կ'իջնային: Երբեմն կանգ կ'առնէր շորթորդին մարմնին մէջ. Հինգերորդին գլխուն կ'իջեցնէին դժբաւոր Հարուած մը՝ եւ բուլբուլ մէկ կը Հրէին փոսին մէջ, մեռած կամ վիրաստ: Երբ բուլբուլ լեցուցան փոսին մէջ, տեղի ունեցաւ ահաւելի իրարանցում մը: Ողջերը ձեռքով-ոտքով կը լանային դուրս գալ, իրենց վրայէն նետելով դիակները: Այն ատեն պահակները բա՛ ու բրբիլ առնելով նետուցան անոնց վրայ եւ սկսան Հարուածել: կուրծքեր կը ծակէին, թեւեր կը կտրէին: Ծխորը եւ

կրարանցումը կանգ չէր առներ սակայն: Գուրո ելան ու սկսան արագ-արագ բա-
 ճերով հող նետել այն տեղերը, ուր աւե-
 լի շարժում կար, ո՛չ միայն ծածկելու
 համար դիակները, այլ մանաւանդ լուեց-
 նելու համար ականջ ծակող աղաղակնե-
 րը: Եւ հողը կամաց-կամաց կը լեցուէր
 բացութիւններու մէջ, կը լեցնէր բերան-
 ները, կը խեղդէր շունչերը...

Ձիւղերը շատ գոհ էին, գոհ պի-
 տի ըլլար նաեւ հրամանատարը իմանա-
 լով, թէ քառասուն փամփուշտով միայն
 կրցած էին գործը վերջացնել:

Իսկ անոնք որ վերը, կապուած էին
 փայտերուն, կը տեսնէին այս բոլորը:
 Լնկերներուն շարուիլը, հրացաններուն
 փայտահուճները, աղաղակները, ու-
 րոնք կը բարձրանային դերեզմանին ան-
 ղունդէն, այդ սրտակեղեք ժխորը, որմէ
 ոստղերն իսկ սկսած էին սարսռալ: Եւ
 ձայն մը բարձրացաւ. բլուրին վրայ եւ
 հրամայեց.

- Աղօթենք մեր եղբայրներուն հա-
 մար. հողեհանգիստ ընենք շարշարուող
 մեակներու հողիին:

Եւ լուռ մըմունջ մը բարձրացաւ խա-
 չերու վրայէն, նոր կապուածները եւ հին
 կապուածները կ'աղօթէին, մինչ վարը
 կը շնչէր հողիներուն առկայծ լոյսը:

Եւ ջարդարները, հրացանները
 դնելով ուսերուն եւ ծածկելու համար
 հողէն բարձրացող սկար աւաչները,
 սկսան երգել սիրային տխուր երգ մը,
 կարծես իրենք ըլլային շարշարուողները
 եւ քալեցին խաւարը սրբապղծելով:
 Աստղերը կ'ամչնային երեւնալէ, սրով-
 հետեւ իրենց մայրը, դորովագուրթ պի-
 շերը, վերաւորուած էր իր սրտէն՝ կրա-
 կոցներու փայլակներէն, որոնք արուե-
 տական ասուպներու պէս կը լողային ար-
 եան ծովերու մէջ:

Եւ յաւիտենականութեան սկստա-
 կին վրայ, ճակատագրին ժամացոյցը
 դանդաղեցուցած էր իր սլաքներուն թա-
 ւալումը եւ խլացուցած էր իր թիթեա-
 քը, որպէսզի Աստուած կարենայ յստա-
 կօրէն լսել հազարաւոր մարտիրոսներու
 ողբը: Եւ տեսնելով այս նոր գողգոթա-
 ները, այդ վայրկեանին զղջաց՝ մարդ
 արարածը ստեղծած ըլլալուն համար:

Ն. Զ.

(Շար. 6)

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ**ՄԻ ՀԵՌԱԻՈՐ ԶԱՑՆ...**

Երգիւ Շիրա՛գ, նորից խառնի՛ր հոգիդ սրտում
 Արարատի գերած սրտին,
 Նորից հեծի՛ր ջութակի պէս,
 Ողբա՛ բանտում Վարսն ու Անին:
 Ու մոայլուիւր դու ցատումից,
 Բազա՛ս՝ ազատ Մուշն ու Վանը
 Թո՛ղ բողբոջ արձագանգի
 Լուսապայծառ Երեսներ:
 Խօտիւր, Շիրա՛գ, բիւր ցանքիդ վառող սեռողը
 Թող խաղաղուի քաղցրութեամ խօսքերի հեռ,
 Նորից լացի՛ր սուրբ Սիվանը
 Դու տեղի մէջ գաւազը մեր
 Զի ընդհատի լացդ նամը,
 Թող լին կազմուի քաղցրութեամբից
 Որ գարմանայ ջինջ Սեւանը.
 Երգիւ Շիրա՛գ, պատմի՛ր սրտիդ դարդը ամբողջ
 Միակ նանդի՛դ՝ ողջ սիրտիդ, Երեսներդ:

Ձայնակցում եմ մեկ քաղցր,
 Վերջը պիտի ամբողջանայ քա Նայիրին,
 Թէ՛ն գուցէ որդիքն էլ մեր
 Զարժանանա՛ն այդ մեծ օրին:
 Սակայն նրանց որդիքն էլ կան,
 Անկուսն է ցեղը Հայկի,
 Թէ՛ մեր երկրում, թէ՛ սիրտում,
 Հայ արիւնն է եռում հիմի երակներում՝
 Մեր հայրերի, եղբայրների,
 Որդիների ու բռնների,
 Որոնք ունեն պատիւն այն վեհ՝
 Հայ կոչուելու:

Արագածդ պիտի՛ ողջունէ իր երկուորեակ
 Սէգ Մառիտին,
 Վաճայ ծովդ պիտի՛ տուն դառնայ,
 Զոյգ աչք լինի Հայաստանին
 Սեւանիդ հետ.
 Սակայն երգի՛ր, գոռա՛, Շիրա՛գ,
 Ողբա՛ ցաւ մեր կորստի,
 Որ չմնայ վշտի նշոյլ
 Հայրենասէր քա հոգու մէջ:

Մենք սփռաֆի գաւակներն ենք
 Հեռու սօրբց,
 Մի՛ հախատիր դու մեզ, Շիրա՛զ,
 Բայաբս ենք սէն մի հօրից,
 Սակայն բախտդ մի՛ անիծիր
 Որ հօքն որդիքդ բանտումն են դեռ,
 Դու մի մեզ տե՛ս, անջատ սօրից
 Ո՞նց ենք հեծում մենք կարօտից,
 Ու շիկանում ենք ամօքից,
 Հեռու մեր քաղ հարայքներից
 Հեռու ջրից, հողից, սեղից,
 Հեծում ենք մենք...

Ձե՛նք զարմանում եքք զառում ես
 Ու դողացնում աշխարհն մէկէն,
 Բայց ձեռնածայ մենք չենք նստել,
 Բողոքել կէք մենք էլ անվերջ,
 Ու խառնելով մեր բողոքը
 Քո ասրք ձայնին,
 Ու որտե՛ն նրեւանի, վստահ ենք մենք,
 Որ Նայիրի մի օր նորից
 Պիտի խայտայ նարահարսի զգեստներում,
 Դու էլ անմահ պիտի մնաս
 Դարեր հայոց մեծ սրտերում:

Ռ. Գ.



ՍՈՍԵԱՑ ՏՂԱՆ

“ՏՈՒՆԻ ԶԱՑ”

Դարունը դարձեալ դոյն ու ժպիտ ընծայեց քաղաքին: Ամառը իր պղնձեայ շղարը տաբածեց: Աչունը խորացաւ կրկին եւ թեւաւոր ու ժամակաւոր հիւրերը վաղուց մեկնեցան: Արեւը ետ քաշուած դունտի մը նման չբացաւ: Երկինքը խոտոռեցաւ: Իջա՛ւ, իջա՛ւ հետզհետէ: Ու մութը, առտու եւ երեկոյ, խածաւ լոյսը՝ դայն սեղմելով, կարատելով, փոքրացնելով անընդհատ:

Եւ այդ մասյլ ամիսներուն, օր մըն ալ, յանկարծ, լո՛յս մը փայլատակեց Լեւոնի տեսողութեան առջեւ: Անոր մթամած հոգին պայծառացաւ: Զինք չէին կանխազուշացուցած: Թէեւ կ'ակնկալէր: Կը սպասէր: Նոյնիսկ մատներով հաշուեր էր շարաթն ու օրը: Բայց մեծ եղաւ դարմանքը, եբբ, անձրեւոտ գիշեր մը, օտուն դարձին, երեխայի յաց լսեց: Դրան ետեւ կանգ առաւ: Մէկ քանի օրով «սխալած» էր: Մի՞թէ, մտածեց: Միանգամայն հրճուեցաւ: Մայրին մութը յանկարծ փարատեցաւ: Եւրջը լուացաւ: Ամէն ինչ զեղեցկացա՛ւ: Եւ իբ սիրաբ, որ սեղմուած ու կծկուած էր ամիսներէ ի վեր, լայնցաւ, լիացաւ կրկին: Եւ երեխային լացին մէջ Լեւոն կարծեց ձայներն լսել իրեններուն...

Զգոյ՛լ՝ բարձրացաւ օանդուխներէն: Նոյն զգուշութեամբ բացաւ սենեակին դուռը: Սահեցաւ ներս: Կանգ առաւ պատին ջրով, մահճակալին մէջ շարժում կար: Երեխա՛ն էր՝ մօրը գէրկը... Իր արիւնին, իբ միտին, իր էութեան արդասօրբ, — մտածեց Լեւոն: Արդէն իսկ մարմնաւորուած ու յայտնուած: Իր յոյսն ու իր լոյսը: Ա՛ն՝ որ նոր իմաստ մը եւ նոր բովանդակութիւն մը պիտի տար իր կեանքին: Իր առջեւ պիտի բանար նոր աշխարհ մը: Իր ձայնով, մատիկներով, պծրուուն աշուկներով, իր ընդօժին ու անուամի ատակ ընդունակութիւններով կրկին պիտի օղակէր զինք — դառնութիւններու, սայթաքումներու, վարանումներու վրայէն — իր հայրենի տանը, հօրը, մեծ հօրը, իրենց անցեալ սերունդներուն, Գեաթիպեան զերգաստանին...

Եւ ուզեց տեսնել զայն: Առնել իր թեւերուն մէջ ու պարուրել, սեղ-
մել...: Բայց երբ փորձեց լոյսը բանալ՝ ակնարկը սեւեռած սենեակին այն
ժամին, ուր մահնակալն էր եւ ուր իրմէ մաս մըն էր յայտնուած:

- Գոցէ՛ լոյսը ... Ձգէ՛ որ քնանայ ... Կու լայ կ'որ, շե՞ս լսեր, -
լնջնուն սասարը եկաւ Արաքսիին:

Լեւոն ատուռն ելաւ տենչա՛ւար ու անհամբեր: Կանգնեցաւ ոտքերու
ժատներուն վրայ, հասակը բարձրացնելով, վիզը երկարած՝ տեսնելու հա-
մար սողեկը: Արաքսիին թեւն ու վերժաղը ծածկեր էին զայն:

Հազուեցաւ ու իջաւ վար: Երէկ իրեն յանձնարարած էին ջուր լեցնել
կաթասներուն եւ լողնատուտին մէջ: Վառել լուսացաբանին օճախը: Փայտ
կտարել: Այդ հրահանգը զինք զարմացուցած էր: Չէ՞ որ մէկ շաբաթ առաջ
լուսաց էին ըրած: Այժմ պարզ էր, թէ ինչո՞ւ: Ըրած էին այդ յանձնարա-
րութիւնը: Հրճուեցաւ: Նախ մաքրեց կաթասները, լուաց, ծփծփացուց:
Լեցուց երեքն ալ: Վառեց օճախը: Եւ սպասեց, որ դան, վար դան, արպէս-
զի խօսի ու լսէ անոր մասին:

Եւ նետուեցաւ սալօճ, Երբ լսեց ճանչիլը սանդուխներուն:
- Կ'երեւի ուղեցիք անակնկալ մը ընել ինձի, - ըսաւ՝ ժպտուն դի-
մաւորելով Սիրանը, - թոռնիկ ունիս աւ...:

- Ձուրբը լեցուցի՞ր, - ընզմիջեց Սիրան՝ իբրև թէ լսած չէր իրեն
ուղղուած խօսքերը:

Եւ, երեւի անդրադառնալով իր շէշտին ու վերաբերումին՝
- Տեսա՞ր... ի՞նչ կ'ած ու կրակ է, - աւելցուց:

- Ո՛չ, կը քնանայ:
Երկու ժամ ետքն էր, որ Լեւոն բարձրացաւ սենեակ: Երեխան կը
ննջէր անդորրութիւն մը ոչէ՛մքին:

Լեւոն կանգնած մնաց օրօրոցին առջեւ՝ Արաքսիի ձեռքի շարժումէն
կաշկանդուած:

Օրերը յաջորդեցին իրարու եւ փոքրիկը ընտելացաւ նասւ իրեն:
Ժպտեցաւ: Լեւոնի մատներուն եւ ձայնի կատակներէն ախորժեցաւ: Մա-
տիկը բերնին կամ տոտիկները օդին մէջ շարժելով ծիծաղեցաւ եւ երկարիւ
ուղեց դէպի ան:

Այդ պահերը, որոնք Արաքսիի բացակայութեան միայն կ'ընծայուէին
իրեն, թեթեւցուցին իր ֆիզիքական ու հոգեկան ծանրութիւնները: Երջա-
պարը մասամբ փոխուեցաւ: Ամէն ինչ ստացաւ նոր դոյն ու նոր ձեւ: Եւ
Լեւոնի հրճուանքը մեծ եղաւ, մկրտութեան նախօրէին, երբ ինք յայտնեց
իր ցանկութիւնը երեխան իր հօրը անունով Տիրան կոչելու, եւ Արաքսի
անմիջապէս՝

- Ես արդէն այդպէս որոշած եմ, - պատասխանեց՝ ակնարկը ուղ-
ղելով հօրը, որ յանկարծ իջեցուց թարթիչները:

Արաքսիի այդ քանի մը բառերը հրաշք մը թուեցան Լեւոնին: Ուրիմն
ինք զեռ փոխութիւն ունէր: Եւ իր հօրն ու գերդաստանին ուշադրութիւն
մը, յարգանք մը, իբրևունք մը կը տրուէր տանը մէջ: Իր դաւակը պիտի
կոչուէր իր հօրը անունով: «Շատաւիշ»-ը կա՛ր այլեւս: Ա՛յն, զոր կրագած,
ցանկացած եւ ակնկալած էր: Եւ մինչդեռ ինք ատեն մը կարծած էր, թէ
իրմով վերջացած պիտի ըլլար Գեաթիպեան գերդաստանը, այժմ, դիպ-
ածի մը բերումով եւ իր կամքին իսկ հակառակ, ինք դարձած էր հայր:
ո՛չքը զաւակի մը՝ թեւ նետելով մինչեւ երդիքն իր հայրենի, եւ գրեթէ

մոտցուած, այլեւս անվերադարձ եւ անվերականգնելի թուող անցեալ մը վերստեղծելով:

Թաւալող ամիսներուն հետ փոքրիկը հետզհետէ տնեցաւ: Նախ՝ աթոռին բռնուելով, պատերուն կամ սեղանին զսուրոտուելով եւ ինյալ-ելլելով սկսաւ տոտիկները նետել: Բերանը բաց եւ թեւերը տարածած օդին մէջ, կը ջանար համելլ Լեւոնի բաց բազուկներուն, երբ երկուքը առանձին կ'ըլլային: Օրուան ամէնէն հաճելի ժամերն էին Լեւոնի համար: Կը տըր-րէր, երբ արեւը կը սկսէր թեքիլ կամ լոյսը կը նուազէր: Հարկ պիտի ըլլար հեռանալ սենեակէն: Երբ տղեկը կը ննջէր, Լեւոն անշարժ ու անշուշտ կը նստէր փոքրիկ մահճակալին շուրջ ու կը նայէր մանչուկին, միշտ ջանալով անոր դէմքին, շարժումներուն, բաց-խփուող աչքերուն մէջ դտնել զի՞ծ մը, արտայայտութիւն մը, ցոյճ մը, որ յիշեցնէր իր ընտանիքէն սեւէ մէկը: Եւ, երբեմն, կարծելով նմանութեան եզր մը գտած ըլլալ, խանդա-վա՛ւ, «ճիշդ հայրս է՞» կամ «ճիշդ քրոջս պէ՞ս», կը պոռար: Եւ ատիկա բաւական կ'ըլլար, որ իր սէրը ամի: Հոգածութեան ու նուիրումի թափը ակնին: Փաթթուի տղեկին եւ ուժգին սեղմէ զայն, չրթներովը ճնշէ այ-տերն ու աշուկները՝ այնքան զօրաւոր, որ փոքրիկը ճշայ եւ արտասուէ:...

Եւ Լեւոն, սարսփա՛ծ որ Արաքսին կրնայ լսել, զալ ու սաստել, ինչպէս եւ զրկել զինք այդ երանելի առանձնութենէն, տղեկը կ'առնէր թեւերուն վրայ, կ'ը բարձրացնէր, կը վազվզէր սենեակին մէկ անկիւնէն միւսը, կը նստեցնէր ուսերուն՝ անոր օտները կախած իր ուսերէն եւ ձեռքե-րը բռնած օդին մէջ, - ճիշդ այնպէս՝ ինչպէս իր հայրը ստեղծ կ'ընէր իրեն, - եւ, այդ նմանութենէն թելադրուած, հօրը պէ՛ս՝ «չառաւի՛ղը», «Բեաթիպեան զերդաստանին շառաւի՛ղը», կը դռչէր:

Եւ մէկ առ մէկ կը կրկնէր այն բոլորը, ինչ որ իր յիշողութեան մէջ գրոշմուած էին իր մանկութեան ու պատանեկութեան շրջաններուն:

Երբեմն զայն կը կանգնեցնէր աթոռին վրայ, անոր թեւին կ'անցնէր զաւազան մը, քիթին կը դնէր փէնս-Աէ մը, կը կանգնէր դէմը եւ, մտա-բերելով հայրը, «Ճիրան էֆէնտի Բեաթիպեան», կը ձայնէր: Եւ, խան-դավառուած այդ նմանութենէն, «գիտատարան պիտի ըլլայ մանչս, երկրորդ Զահրապ մը», կը յարէր՝ միշտ կրկնելով հօրը բաները:

Օր մըն ալ կառք մը զնեցին տղեկին համար: Այդ կառքը նոր հա-ճոյք մը պատճառեց Լեւոնի: Ճաշերէ հտք, երբ արեւը կը ծկլար ամպերուն ետեւէն՝ բուռ մը ճառագայթ նետելով վար, Լեւոն լուռ ու անհամբեր կը սպասէր, որ հաղուեցնեն Տիրանը, փաթթեն բուրդերով ու շալերով, ծած-կեն մինչեւ քիթն ու բերանը, նստեցնեն կառքին մէջ եւ ըսեն իրեն.

- Տար պտըտցուր- շուք տեղեր շտանի՛ս, չմսի տղան:

Տղեկին օրերն ու ամիսները կը հաշուէր անշեղ ու անսխալ: Եւ իրեն այնպէս կը թուէր, թէ ամէն օր մասով մը կը մեծնայ ան: «Պիտի մեծնայ, պիտի մեծնայ, ի հարկէ՛»: Զայն պիտի սուղարկէ զպրոց: Անոր պիտի սորվեցնէ Փրանսերէն, ձայնադրութիւն, դաշնակ: Եւ այն ատեն այլեւս մինակ պիտի չըլլայ: Պիտի ունենայ յնարան մը՝ մանաւանդ տունէն ներս: Եւ անհամբեր կը սպասէր այն հրանելի օրուան, երբ տղեկը «հայրիկ» պի-տի կոչէր զինք: Այդ բառին կարօտը, տենչը, պահանջը ունէր: Իր դէրձն ու հանգամանքը ճշող ու վաւերացնող բառ մը՝ ընդդէմ լուռ կամ խօսուն արհամարհանքներուն:



Երեկոյ մը, նուազի դաղարի պահուն, պատանի մը արագ զայլերով մտաւ դարեջրատուն: Մօտեցաւ Լեւոնին, եւ ասանց արտասանելու որեւէ բառ, դաշնակին վրայ թողուց պահարան մը եւ անմիջապէս հեռացաւ:

Տղեկին ղէմքը ծանօթ թուեցաւ իրեն: Տեսած էր զայն ամառնային այն օրը, երբ ինք բարձրացած էր Հայկական Բլուրը, ուր հայ տղաք կը խողային: Եւ անոր կապակցութեամբ յիշեց պատուհանի մը առջեւ կանգնած այն աղջիկը, որ ամէն հանդիպումի ակնարկը կը սեւեռէր իրեն: Չախորժեցաւ, Բացաւ պահարանը: Անստորադիր դրութիւն մը, դրուած շեղադիր: Երկու տող միայն, — ճերմ դուք կը նուազէք, գիտէ՞ք, թէ՛ մեր կենը ո՛ւր եւ որի՞ հետ էն:

Լեւոնի դանկը յանկարծ մթազնեցաւ: Մտաբերեց զաշտի այն պատկերը, զոր տեսեր էր բլրակի զապաթէն:

Վրդովուեցաւ: Ջերմ ալիք մը կուրծքէն մինչեւ կոկորդը բարձրացաւ: Զլաց թէ անկարող է նուազելու: Ոտքի ելաւ եւ նստուեցաւ դուրս:

Տունէն ներս մտաւ, անսովոր արագութեամբ, եւ անսովոր ուժգնութեամբ թափահարելով սանդուղիները՝ բարձրացաւ սենեակ: Բացաւ դուռը: Փոքրիկը կը ննջէր: Արաքսին չկար: Նոյն թափով իջաւ վար: Սիրանն ու Գիրգորը նստած էին ճաշատենեակը: Անխօս՝ կրկին վեր ելաւ: Տղեկը արթնցուց աղմուկէն: Լեւոն նայեցաւ, երկա՛ր նայեցաւ անոր: Վերցուց զայն, առաւ թեւերուն վրայ, տարաւ լոյսին մօտ եւ նայեցաւ աւելի ուշադիր՝ անոր աչքերուն, ճակտին, մաղերուն, շրթներուն՝ սճիբի մը հետքերը զննող խոզարկուի մը բժախնդրութեամբը: Եւ փորձեց մտապատկերել հին խմբանկար մը, որուն մէջ մեծ հօրը՝ Քեթիպեան էֆէնտիին երկու քովերը նստած էին մեծ մայրը, հայրը, մայրը, հօրաքույրերը եւ անոնց առջեւ, գետինը, իրենք՝ փոքրերը: Այդ լուսանկարին ամէն մէկ ղէմքը բաղդատեց տղեկին ղէմքին հետ: Եւ ճիշդ այդ պահուն գոտը բացուեցաւ: Արաքսին էր: Մտաւ ներս, կրկին փակեց դուռը՝ զարմացած Լեւոնի անժամանակ ներկայութենէն, շտապունամ ղէմքէն եւ խիստ նայուածքէն:

- Ո՛ւրկէ կու գաս, — հարցուց Լեւոն՝ ակնարկը սեւեռած անոր:
- Ինչո՞ւ կ'ուզես իմանալ, — պատասխանեց Արաքսի արհամարհանքով, եւ ուղղուեցաւ ղէպի մահճակալը:
- Քեզի կը հարցնեմ, թէ ո՛ւրկէ կու գաս եւ որի՞ հետ էիր, — կըրկնեց Լեւոն աւելի խիստ:
- Ես պարտաւոր չեմ քեզի հաշիւ տալու, — յարեց Արաքսի՝ նոյնքան խիստ շեշտով:
- Պարտաւոր չե՞ս, — աւելի այլայլեցաւ Լեւոն:
- Ինչո՞ւ պարտաւոր պիտի ըլլամ:
- Իրբեւ կի՞նս...
- Կի՞նս... — Հեզանքով կրկնեց Արաքսի, — գեռ ի՞նչ... Դուն ո՞վ ես որ ես քու կի՞նս ըլլամ եւ պարտաւոր պիտի ըլլամ քեզի հաշիւ տալու...
- Դուն պիտի ըսե՞ս, թէ ո՛ւր եւ ո՛րի հետ էիր, — ձայնը աւելի բարձրացուց Լեւոն:
- Կ'ուզե՞ս իմանալ, լա՛ւ... Տիրանին հետ էի:
- Տիրանի՞ն հետ...
- Այո՛, անոր հետ էի եւ անոր հետ պիտի ըլլամ...
- Տիրանը քու ի՞նչդ է, որ անոր հետ էիր եւ անոր հետ պիտի ըլլաս:

- Տիրանը ինձի համար ամէն ինչ է... Ահա քեզի բացէ ի բաց: Ասիկա զիտցիր եւ այլեւս մի՛ խօսիր, - աւելցուց վճռական եւ վզկապը շարտելով մահճակալին վրայ:

Լեւոն կը գողգողար զայրոյթէն: Տղեկը թեւերուն մէջ՝ գէմքի այլանդակ արտայայտութեամբ մը նայեցաւ Արաքսիին, եւ կատաղութեան ցոլք մը եկաւ աչքերուն, երբ Արաքսի՝

- Չվէ՛ սղան, քեզի ո՞վ արտօնեց որ պրկես, - գոչեց:

- Չգե՛մ... Դուն կը յանդգնիս զուկիս մասի՞ն այլ հրամայել ինձի, պոռաց Լեւոն ձայնով մը, որուն մէջ, առաջին եւ վերջին անկամն ըլլալով, յայտնուած էր կարապետներով մարմնաւորուած թէքիրտաղցին՝ իր հպարտութեամբ եւ ինքնասիրութեամբ:

- Զուկի՞ր... Այդ զուակը քո՞ւկիչ է, - աւելի անպատկառ շեշտով մը պատասխանեց Արաքսի:

- Հապա որի՞նն է...

- Անունէն չե՞ս իմացած... Կարծեցիր թէ հօ՞րդ անունը դրած եմ զուկիս...

Տեսապէս հլու, երկշտ ու անկամ մարդը յանկարծ այլափոխուեցաւ՝ իր անհասական թէ ընտանեկան ինքնասիրութեան վերաւորանքէն եւ, խելացնօ՛ր, ինքնամոռաց, անզսպելի թափով մը՝

- Քանի որ այդպէս է՝ ա՛ն քու լակոսդ, - գոչեց՝ շարտելով տղեկը, որ, զարնուելով մահճակալին, արիւնլուայ ինկաւ գետին...

- Հըէ՛չ, - ճշաց Արաքսի՝ սարսափահար փռուելով տղեկին վրայ:

Լեւոն, այդ անտոր պատկերէն խուճապահար, աչքերը խոշոր բացած, արագ նետուեցաւ սննեակէն դուրս, սահեցաւ սանդուխներէն վար, սպորդեցաւ փողոց՝ առանց զլխարկի եւ վերարկուի, եւ ամայի փողոցներէն ու մութին մէջ անհետացաւ՝ ինքն իրմէ սարսափած եւ ինքն իրմէ հալածուած...:

~

Յաջորդ առաւօտ, շողեկառքի պաշտօնեաներ երկաթուղիին վրայ շտեր էին գրեկ մը՝ աջ կողմէն ջախջախուած:

Լուրը տարածուած էր արագ:

Այդ գոյժը Սըպորնա փողոցի փոքրիկ սրճարանը հաւաքեր էր սովորական այցելուները:

Լուռ էին ամէնքը:

Խորէն, ծխամորճը շրթներուն միջեւ, ակնարկը սեւեռած էր մոխրամահին:

Կարապետ իր սովորական աթոռին վրայ էր, մուշտակ-վերարկուն ուտերուն, քապէրը ճակատին ետեւ նետած եւ կռնակը պատին:

Ճարօրինակ կերպով սղջուած էր Օհան: Կծկուած, ամբած էր սրճարանին աջ անկիւնը: Ամէնքէն առաջ լսեր էր գոյժը: Սուրճը, զոր աղսալը՝ բած էր, պաղեր էր սկահակին մէջ: Ու բա՛ն չէր փոխանակեր սեւէ մէկուն հետ: Թորունի վիշտ մը համակած էր դինք: Իրեն այնպէս էր թուած, թէ Լեւոնի գործած ոճիբին եւ անոր եղերական մահուան մէջ մեղքի բաժին մը ունի: Լեւոնը ինք առաջնորդած էր այդ տունը: Յիշեց այն խօսքերը, զորո՞ք ինք արտասանած էր առաջին օրը: Անկէ ետք իր թելադրանքները եւ մղում-

ները: Ի՞նչ էր, որ հրած՝ քշած էր զայն, եւ յանձնարարած անոր, կատարէ թէ լուրջ ձեւի տակ, առեթիւր չփոխցնելը եւ ըլլալ յանդուզն...

Եւ ցաւեցա՛ւ: Խորապէս ցաւեցաւ՝ խղճի խորունկ խայթէ մը կիտւած: Եւ չզիտցաւ, թէ իրմէ չա՛տ առաջ, դեռ զպրոցական գրասենտաններուն վրայ, Լեւոնի դասընկերները զայն մղեր էին փորձութիւններու, ինչպէս՝ Ռոտոսթոյի մէջ, Ծովուն ափը, տղաքը օր մը զայն քեր էին ջուրին մէջ... Օհան չկրցա՛ւ անդրադառնալ, թէ կեանքի մէջ, զրեթէ ամէնքո՛ւ, պետակցարար կամ անդիտակցարար, եւ կամ՝ կամայ թէ ակամայ, տեւապէս կը հրուինք ու կը քշուինք ղէպերէ, պատահարներէ, խօսքերէ, նախածքներէ, շողողանքներէ, իղակրէ, կիրքերէ, ծանօթներէ թէ անծանօթներէ ու բարեկամներէ՝ ղէպի սայթաքումներ ու փորձութիւններ...

- Ա՛ռ քեզի գտունի հաց, - ըսաւ Խորէն՝ խղիւղ ճշող լուսթիւնը: - Ատանկ ունիրո՞յ ատանկ փեսայ, - աւելցուց Ատափաղարցին, որ ամէնքէն անտարբերն էր անոնց միջեւ:

Բայց, կարծէք յանկարծ զղջալով իր այդ դատաստանին համար՝
- Ի՞նչ տի ընես, էդածը էդած է, - աւելցուց:
Ամէնէն անողոքը եղաւ կարապետ:

Թէքիրտաղցի իր ինքնասիրութիւնը, անզիջող հպարտութիւնը եւ կեանքն ու ղէպերը անմշակ, այլ ընդոծին ընդունակութեամբ, ճարպիկութեամբ եւ յանդգնութեամբ զիմաստելու իր խտանուածքը խորապէս վերաւորուած կը զգար՝ իրբէս քաղաքակիցը Լեւոնի:

Ելաւ ոտքի: Վեր տուաւ ուտերը՝ տեղաւորելով վերարկուն, շակեց քաւէքը, արդէն իսկ սպառած գլանիկը առաւ չրթներէն, եւ, ծայրով մը, ուր թէ՛ «քաղցքի» ամօթը եւ թէ՛ գայրոյթ մը կար նոյն այդ ամօթէն ծնած՝

- Հայրը, Փէսին տակ, - գոչեց, - մա՛րդ էր եւ հա՛յ էր... Տղան, շափիան գլուխը, հայ շեղաւ՝ շեղաւ, մա՛րդ ալ շեղաւ... Տունի հաց... Հը՛... ա՛ռ քեզի տունի հաց... Ծօ՛, քանի որ լողալ չես զիտեր, ինչո՞ւ ծովը կը մտնես...

Ս. Տ.

(Շար. 4 եւ վերջ)



ՄԻ՝ ՔՇԻՐ, ԿԱՌԱՊԱ՛Ն.,.

Իմ հի՛ն, իմ ծանո՛ք, իմ լա՛ւ բարեկամ,
Շա՛տ անգամ եմ ես նստել քա կառքը,
Ու մի՛շտ էլ ուրախ – կարօտ ես իմ տան –
Կնդրել եմ ես քեզ. «Քշի՛ր, կառուպա՛ն,
Քշի՛ր ձիւնեք»:

Եւ դու էլ ինձ պէս գուարք, ժպտե՛րես,
Մտքակէք ես շարժել օդում շարունակ,
Իսկ գոյգ ձիւնեք – բաշով փրփրադէզ
Հանգիստ են տռել ծանօթ յարկի տակ,
Ուր սարժում էի երջամիկ հանդես:

Բայց հիմա՞...
Հիմա մի՛նա՛կ եմ, մի՛նա՛կ,
Հիմա տուն չունեմ, էլ չե՛մ շտապում,
Կառուպան, հիմա մի՛ քշի՛ր ձիւնեք.
Էլ ո՛չ ո՛ք այնտեղ ինձ չի՛ սպասում...
Եւ չունե՛մ էլ տուն...:

Ք Ե Զ

Սիրո՛ւմ, սիրո՛ւմ, սիրո՛ւմ եմ քեզ.
Դու՛ ես գարգը իմ երկնքի,
Իմ լուսինը՝ մոռյլ կեանքի...
Ու շա՛տ բարձր ես
Ինչպէս լեռներն իմ հայրենի:

Սիրում եմ քեզ՝ ո՛չ աւելի
Քան մի գետը իմ հայրենի,
Քանց Արագը մշտախոռով,
Որ կանչում է ինձ կարօտով:

Սիրում եմ քեզ՝ ո՛չ աւելի
Քանց աշխարհը իմ հայրենի.
Ո՛չ աւելի:

Թեհրան

Խ. ԵԳԱՆԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ո՛Վ ԷՐ Մ Ե Ղ Ա Ի ՈՐ

Ա.

ԺՁ. դարէն մնացած հին եկեղեցի մըն էր իր հօր եկեղեցին: Բակին մէջ լեքմաքարեր կային փէ. և ԺԸ. դարերէն մնացած: Ի՞նչ տխուր էր ամէն ինչ այլ բակին մէջ: Հողին մէջէն, կտորած սկրրներու նման դուրս ցցուած շիրմաքարեր՝ իրենց մալած արձանագրութիւններով, մտայն դանդաղատուն մը՝ իր դարաւոր կրչնակով ու հանդուցաւոր պարանոյժ, պարխապ մը՝ լերկ ու խոտոտ, և մամուպատ աղբիւրք, որուն ջուրերը կարծես կը մազուէին հողին տակ նիրհող պիակներուն ընդմէջէն:

Եւ այս տխուր լուսթեան մէջ, Հուրին՝ սպիտակ վարդի մը նման, իր ամօթխած վարդազոյնով ու շէնչող ժպիտով, Հուրին՝ դողացող ու կեանքի ծառու լրթներով, խելացի, խուրոք աչքերով, Հուրին՝ սպիտակ վարդ մը, անպանոյժ ծաղկամանի մը մէջ:

Առաջին անգամ երբ իրեն հանդիպեցայ, տանրեօթը տարու սիրուն աղջիկ մըն էր, խոնարհ աչքերով: Կարծես հիմա ալ կը տեսնեմ իր դէմքը, որ կը կարճերէր ամէն մէկ խօսք արտասանելէ ետք:

- Լաւ բան է լուրջ ու համեստ ըլլալ, - ըսի, - սակայն պէտք է դիտնաս որ

ամօթխածութիւնը ոչ մէկ տեղ կը տանի մարդս:

- Գիտեմ, - ըսաւ զեարին նայելով ու կարմրեցաւ:

Կը բնակէին եկեղեցւոյ բակին մէկ անկիւնը, ընդարձակ սրահի մը մէջ, որ մէջտեղէն դատուելով՝ վերածուած էր երկու սենեակի:

- Ժպտէ՛, Ծիծաղէ՛, - թելադրեցի իրեն, - աւելի համարձակ եղի՛ր և արդէն դուն ինքզ կը տեսնես, թէ ինչ մեծ յաղթանակ տարած ես դուն չու անձիդ վրայ:

Ակներեւ էր, որ շատ քիչ անգամ խօսած էր աղոց հետ, այս պատճառաւ կը շփոթէր ամէն անգամ որ խօսէի հետը:

- Գիտեմ, - ըսաւ աչքին ծայրով հայեացքս սրոնելով, - ես շատ կը ցանկամ որ ինձմէ մեծ մէկը, ո՛վ որ ալ ըլլայ, կեանքին պարզ ճանապարհները յոյց տայ ինձի:

- Այտեղ շատ աղջիկներու հանդիպեցայ, - ըսի, - բայց դուն տարբեր ես անոնց մէջ: Որովհետեւ քահանայ հայր ունիս, որ քեզ մեծցուցեր է եկեղեցւոյ հովանիին տակ ու դաստիարակեր է այնպէ՛ս, որ զպրօցէն ելլելով ուղղակի երթաս կուսանոց:

Այնքան կարմրեցաւ որ չկրցաւ ոչ իսկ բառ մը արտասանել:

ՄԻ՝ ՔՇԻՐ, ԿԱՌԱՊԱ՛Ն.,.

Իմ հի՛ն, իմ ծանո՛ք, իմ լա՛ւ բարեկամ,
Շա՛տ անգամ իմ ես մասնի բն կառքը,
Ու մի՛շտ էլ ուրախ - կարօտ ես իմ տան -
հնգրեկ իմ ես քեզ. «Քշի՛ր, կառապա՛ն,
քշի՛ր ձիւնքը»:

Եւ դու էլ ինձ պէս գուարք, ժպտերես,
Մտրակդ ես շարժել օդում շարունակ,
Իսկ գոյգ ձիւնքդ - բաշով փրփրադէզ
Հանգիստ եմ առել ծանօթ յարկի տակ,
Որ սարքում էի երջանիկ հանդէս:

Բայց հիմա՞...
Հիմա միմա՛կ եմ, միմա՛կ,
Հիմա տուն չունեմ, էլ չե՛մ շտապում,
Կառապան, հիմա մի՛ քշի՛ր ձիւնքդ.
Էլ ո՛չ ոք այնտեղ ինձ չի՛ սպասում...
Ես չունեմ էլ տուն...:

Ք Ե Ջ

Սիրում, սիրում, սիրում եմ քեզ.
Դա՛ւ ես գարզը իմ երկմէրի,
Իմ լուսինը՝ մասյլ կեանքի...
Ու շա՛տ բարձր ես
Ինչպէս լեռներն իմ հայրենի:

Սիրում եմ քեզ՝ ո՛չ աւելի
Քան մի գետը իմ հայրենի,
Քանց Արազը մշտախոռով,
Որ կանչում է ինձ կարօտով:

Սիրում եմ քեզ՝ ո՛չ աւելի
Քանց աշխարհը իմ հայրենի.
Ո՛չ աւելի:

Թեհրան

Խ. ԵԳԱՆՆԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ո՛Վ ԷՐ ՄԵՂԱԻՈՐ

Ա.

ՓՁ. դարէն մնացած հին եկեղեցի մըն էր իր հօր եկեղեցին: Բակին մէջ շիրմաքարեր կային ՓԻ. եւ ՓԸ. դարերէն մնացած: Ի՞նչ տխուր էր ամէն ինչ այդ բակին մէջ: Հողին մէջէն, կտորած ոսկորներու նման դուրս ցցուած շիրմաքարեր՝ իրենց մաշած արձանազրութիւններով, մոռյլ զանգակատուն մը՝ իր դարաւոր կոշտակով ու հանդուցաւոր պարանոսով, պարխազ մը՝ լեթկ ու խոժոռ, նւ մամռապատ աղբիւրը, որուն ջուրերը վարծես կը մազուէին հողին տակ նիրհող սիւններուն ընդմէջէն:

Եւ այս տխուր լուսթեան մէջ, Հուրին՝ սպիտակ վարդի մը նման, իր ամօթխած վարդագոյնով ու շէնչող ժպիտով, Հուրին՝ դողացող ու կեանքի ծաբաւ շրթներով, խելացի, խոշոր աչքերով, Հուրին՝ սպիտակ վարդ մը, անպատճառ ծաղկամանի մը մէջ:

Առաջին անգամ երբ իրեն հանդիպեցայ, տանընտեղ տարու սիրուն աղջիկ մըն էր, խոնարհ աչքերով: Կարծես հիմա այ կը տեսնեմ իր դէմքը, որ կը կարմըրէր ամէն մէկ խօսք արտասանելէ ետք:

- Լաւ բան է լուրջ ու համեստ ըլլալը, - ըսի, - ստիպիս պէտք է գիտնաս որ

ամօթխածութիւնը ոչ մէկ տեղ կը տանի մարդս:

- Գիտեմ, - ըսաւ գետին նայելով ու կարմրեցաւ:

Կը բնակէին եկեղեցւոյ բակին մէկ անկիւնը, ընդարձակ սրահի մը մէջ, որ մէջտեղէն դատուելով՝ վերածուած էր երկու սենեակի:

- Փայտէ՛, ծիծաղէ՛, - թելադրեցի իրեն, - աւելի համարձակ եղիւր եւ արգէն գուն ինքզ կը տեսնես, թէ ինչ մեծ յողթանակ տարած ես դուն քու անձիդ վրայ:

Ակներու էր, որ շատ քիչ անգամ խօսած էր տղոց հետ, այս պատճառաւ կը շիկնէր ամէն անգամ որ խօսէի հետը:

- Գիտեմ, - ըսաւ աչքին ծայրով հայեացքս որոնելով, - ես շատ կը ցանկամ որ ինձմէ մեծ մէկը, ո՛վ որ ալ ըլլայ, կեանքին պարզ ճանապարհները ցոյց տայ ինծի:

- Այստեղ շատ աղջիկներու հանդիպեցայ, - ըսի, - քայքայ գուն տարբեր ես անոնց մէջ: Որովհետեւ քահանայ հայրունիս, որ քեզ մեծցուցեր է եկեղեցւոյ հովանիին տակ ու դաստիարակեց է այնպէ՛ս, որ դպրոցէն ելլելով ուղղակի երթաս կուսանոց:

Այնքան կարմրեցաւ որ չկրցաւ ոչ իսկ քառ մը արտասանել:

իր դէմքը կը նմանէր բացուած սպիտակ վարդի մը, որուն վրայ դարնանային արևուր կարմիր ցուլքեր կը փռէ:

- Կեանքի եկուր, - շարունակեցի, - ամշկոտութիւնդ անցեալ դարը կը բուրէ: Ասիկա դիւր չի գար տղոց, որոնցմէ մէկը կամ միւսը, որ մը ձեռքդ պիտի խնդրէ:

- Ամէն ինչ վարդադոյն կը տեսնես, - ըսաւ:

Զգացի որ բաւական առաջ գացած էի եւ ուղիքի աւելի չափաւոր ըլլալ:

- Անշուշտ կը ներես, - ըսի, - որ հեռաւոր ազգականի հանդամանքովս, մեր առաջին իսկ հանդիպումին, կը համարձակիմ ըսել երեսնիչ այս բոլորը: Այս արարքս ամօթիածութեան հետ ոչ մէկ հասարակաց սահման ունի, ընդհատ կուտան, կը կոշուի անամօթութիւն:

- Ես քեզմէ երբեք չեմ նեղանար, - ըսաւ կազդուրուած...

Ի.

Մեր խումբը ջերմ ընդունելութեան արժանացած էր այդ արեւելեան քաղաքին մէջ: Մենք, մեր մարդիկի համադրեւաններով, շէնշող երիտասարդներ էինք ու մեր յաղթական սլացքները մեզ բարձրացուցած էին կուսքերու կարգին...

Հեռաւոր ազգական մը փնտռելու նպատակով՝ Հասած էի քաղաքին ծայրագոյն մասերուն մէջ զանուոզ հին թաղ մը, ուր հանդիպած էի Հուրիին, որ պրակիչ ու առինքնող աղջիկ մըն էր:

Տօնական օր մըն էր եւ եկեղեցոյ թակը լիցուն էր ուխտաւորներով, երբ երկրորդ անգամ հանդիպեցայ Հուրիին: Զիս տեսնելուն պէս, թողուց ընկերուհիները ու գրեթէ վազելով գիմաւորեց զիս:

- Ձեմ գիտեր ինչու, - ըսաւ, - դուն մեզ այսպէս շուտ մտացար:

- Կը ներես, - պատասխանեցի ժպտաւոր, - որ ամբողջ շորս օր, հակառակ իրասուսիս, չկրցայ հանդիպիլ:

- Մենք վախցանք որ հոս բան մը

պատահեցաւ քեզի, - ըսաւ դարձեալ կարմրելով, բայց շատ աւելի համարձակ:

- Մեր հանդիպումը կարճ եղաւ, - բացատրեցի, - բայց կրնաս վստահ ըլլալ, որ քեզ մոռնալը դիւրին պիտի չըլլայ:

- Ներէ՛, - ըսաւ շեկնելով, - եթէ յիրաւորեցի քեզ:

- Ներեիք բան չկայ, ինչո՞ւ այդպէս տակնուվրայ կ'ըլլաս:

- Ձեմ գիտեր, - պատասխանեց, - տրդէն նկատեցիր, թէ որքան դիւրագրած եմ:

Նկատած էի եւ ուժգնօրէն սպաւորուած: Զգացի որ պէտք ունէր խրախոյսի, իր աչքերուն խորը կը տեսնէի կեանքի եւ սպրելու ծարաւը եւ նա այդ վայրկեանին, ամէն ինչ կուտայի, զուարթացնելու եւ կեանքի կոշիլու համար իր վտիտ ու ազգուն հոգին:

- Բու մեծագոյն թշնամիդ առանձնութիւնն է, - ըսի, - առանձնութիւնը եւ այս եկեղեցին:

- Թող եկեղեցին, չեմ ուզեր, - եկեղեցին հօրս թող: Ձեռ գիտեր ի՞նչ ծանրութիւն կը դրամ հոգւոյս վրայ:

Յանկարծակիի եկայ: Սպիտակ վարդը սկսած էր իր թերթերը բանալ: Խոսակցութեամբ տարուած՝ արդէն անցած էինք զաւերթէն անդին: Հիմա մեր առջեւ կը բացուէր նոճիներով եզերուած ծառուղին, ու մենք կը քայլէինք դիտահակ:

- Կ'ուզե՞ս հասկնալ տխրութեանս պատճառը, - ըսաւ շեշտակի նայելով ինձի:

Առանց դուրս բարձրացնելու, հաւանութիւնս յայտնեցի:

- Ըսեմ, - ըսաւ աւելի ու աւելի համարձակութիւն գտնելով, - քանի որ դուն այսպէս շուտով մտերիմ դարձար ինձի, ըսեմ տխրութեանս պատճառը: Արդէն դուն շարաթէ մը կը մեկնիս, ու ես ամշնալու պատճառ մը չեմ ունենար...

- Ըսէ՛, ըսէ՛, - պնդեցի, այս անգամ կարմրելով իմ կարդէիս, - ամէն մարդ իրաւունք ունի լալու:

– Ահագին ծանրութիւն մը կը ճնշէ հոգւոյս վրայ, մեծ ցաւ մը, երազներ կան սրտիս մէջ, որոնց գիտեմ, երբեք պիտի չհասնիմ, եւ այս միապաղաղ կեանքիս մէջ բաղձանքներ ունիմ, որոնք պիտի չիրականանան: Այս բոլորը դաման ցաւ մը կը ներշնչեն ինձի ու կը թունաւորեն մտքերս, կը տանջեն հոգիս...

Իր խոստովանութիւնը կարծես ազերս մըն էր, ուղղուած երջանկութեան մտղերուն: Յուսահատ կանչն էր չքնաղ կոկոնի մը, որ կարծես դատապարտուած էր դեռ չբացուած թռչնելու:

– Մարդ երջանիկ ըլլալու համար այս աշխարհին մէջ, – ըսի գորովազին, – սէտք է փոխտփայ ըլլայ:

Ինք կլանուած էր իր ցաւերով ու բողձանքներով ու կարծես կը խօսէր լուրբովին անտեսելով ներկայութիւնս:

– Եստ անգամ, – շարունակեց տկար ու դողացող ձայնով, – պիշերները, անկողին մտնելէ ետք, որոշ բողձանքներու աւրելութեամբ բռնատեղծութեան սողիք կուգան մաքիս առջև եւ իսկոյն ցատկելով կ'արտադրեն զանոնք թուղթի մը վրայ, որպէսզի առաւօտեան շարունակեմ, սակայն, աա՛ղ, լոյսը բացուելէն ետք, անոնք կը թռչին խարխուլ մըտքէս եւ զիս կը թողուն ապշահար, սըրտում եւ դժբախտ:

Պահ մը լուսութիւն տիրեց:

Մենք կը քայլէինք դանդաղ, մեք հայեացքները գետնին դամուած: Միայն խիճերն էին որ կը ճոնչէին մեր կօշիկներուն տակ:

– Վստահ եմ որ կ'ուզես երջանիկ ըլլալ, – ըսի, – ո՞վ չ'ուզեր: Գու տխրութիւնդ կուզայ, նոխ՛քու ամչկոտ բնաւորութենէն, ապա՛ ջու երեւակայութեան գորութենէն:

– Ո՛չ, – բողբոջեց թախծոտ ու թախանձային, – ոչ, ես երբեք ամչկոտ չեմ:

– Հուրի՛, – ընդմիջեցի իր խօսքը, – դուն ամչկոտ ես, բարեկամներ չունիս, եւ առանձին կ'ապրիս: Առանձնութիւնը տաժանագոյն բանն է այս աշխարհի վրայ:

Արդէն ծառուղիին ծայրը հասած էինք: Կանգ առինք ու իրարու նայեցանք: Ինձքը սպիտակ էր, տխուր ու հանդարտ, միայն չրթները կը դողային:

Երբ մեր նայուածքները իրարու հանդիպեցան, Հուրին իր աղուոր աչքերը խոնարհեցուց ու սպասեց անշարժ:

– Վերադառնանք, – ըսի, – բաւական հեռացեր ենք:

– Գուցէ ընկերակցութիւնս չի՛ խանդավառք ձեզ, – հարցուց խուճապահար:

– Ընդհակառակն, Հուրի՛, ընդհակառակն, դուն ինձի համար շատ համակրելի եւ շահագանց հետաքրքրական սղջիկ մըն ես:

Կը քայլէինք դիտահալ, ու կը խօսակցէինք շատ մեղմ ձայնով, ընդհատ ու դանդաղ: Իր ձայնը կարծես հծծին մըն էր, որ կը ժայթքէր սրտէն:

– Տարօրինակ է, – ըսաւ, – վայրկեաններ կան, երբ իսկապէս կ'ուզեմ տխրիլ:

– Յիմարութիւն, – պատասխանեցի, – այդ դաղափարներդ ու զգացումներդ դործնական ու նորմալ աղջկայ վայել չեն:

– ձիւղ է ըսածս, կ'ուզեմ որ արեւութիւնը լեցնէ հողիս, – շնչաց, – թեւրես ինձի թոյլատրուած միակ երջանկութիւնն է սահկա:

– Ո՛չ, ո՛չ, – ըսի կանգ առնելով ու նախատական նայուածքս յատելով իրեն, – ո՛չ, ստիկա երջանկութիւն չէ՛:

– Նստի՛ք, – ըսաւ: Մտտի գոսացած կոնդի մը վրայ նըստեցանք:

Ոտքերը երկարեց ու փէշերով ծածկեց ծունկերը:

– Ըսէ՛, ըսէ՛ թէ ինչա՞նք երջանիկ են ուրիշները:

– Նախ անոր համար, – ըսի, – որ, բնաւ հոգ չեն ըներ. սա չի նշանակեր, թէ հոգ չունին, հոգ չունեցող մարդ չկայ աշխարհի վրայ: Կը բարկանան ու վայրկեան մը յետոյ կը հանդարտին, հոգ չեն ըներ, մարդոց մէջ կը մտնեն, կը խօսակցին անծանօթներու հետ, կը պարեն ու պարապ բաներու մասին կը

խօսին, արկածախնդրական վէպեր կը կարգան, պտոյտի կ'ելլեն ու կը քրքընեն:

- Ուրեմն այս առաքինութիւններն են որ կ'երջանկացնեն մարդը:

- Այո՛, Հուրի, այո՛, - Հաստատեցի, - այս առաքինութիւններն են որ կ'Գր-ջանկացնեն մարդը:

- Ի՞նչ տեսակէտներս բարձրովին տար-բեր են երջանկութեան մասին, - առաք-կեց սիրուն աչքերը ինծի գարձնելով:

- Իսկ ինչքինքը խելացի կը կար-ծես, - ըսի, - առաւել կ'արթննաս տիրուք, մտածկոտ, գպրոց պացած ատեն կը մտածես հազար բաներու մասին:

Ջրօսանքներուն, ընկերուհիի մը Հեա կ'առանձնանաս բակին անկիւնը ու տիրուք քննարկող մը կը պատմես մտածումներ-բուշ մասին, ծրարներնորոգ մասին, ու տիրութեամբ կ'աւելցնես, թէ չես յու-սար որ անոնք որ մը կ'երկանանան:

- Մարգարէ՞ս ես, ի՞նչ, - գուարճա-ցաւ, - եւ կամ արդեօք լրտեսած ես զիս:

- Երեկոյան տուն կուգաս միշտ ա-ռանձին, - շարունակեցի, - գոտերդ կը սերտես ու կը քննաս:

- Կը տեսնե՞ս ինչ տիրուք է, - մղկը-տաց, - ուրիշ ի՞նչ կ'ընամ ընել, ի՞նչ կերպ կ'ընամ շարժիլ: Տխուր մեղեդի մը կը տանջէ զիս, չեմ գիտեր ինչու: Ու-րախ անձ մը կը ջգայնացնէ զիս, չեմ գիտեր ինչու: Տիրութիւնը կը լեցնէ հո-զիս, անբացատրելի, դառն Հանոյքով մը, չեմ գիտեր ինչու...

- Պէտք է փիլիսոփայ ըլլաս, - Հան-պարտեցուցի զինքը, ոտքի ելլելով:

Ձեռքերը երկարեց ինծի:

Երբ վերցուցի, թեթեւ էր փետուրի նման ու իր նայուածքը հմայող էր ու իր ձեռքերը տաք էին ձեռքերուս մէջ:

Հովը կը թաղար իր մազերուն Հետ:

Ձեռքերը արձակեցի եւ իրարու նա-խեցանք:

- Ի՞նչ թեթեւ ես, Հուրի, - ըսի:

- Ի՞նչ պօրաւոր ես, - ըսաւ հիացած,

- որքան կ'ուզէի ես ալ տղայ ըլլալ:

- Մի՛ կարծե՛ր որ եթէ տղայ ըլլա-յիր, պիտի կարենայիր աւելի երջանկ

ըլլալ: Ես պիտի թելադրէի որ աղատու-թեանդ ներած չափով, վազես Հանոյք-ներու ետեւէն: Ես դեռ լաւ չեմ ճանչնար քեզ:

- Մի՞թէ՞, - կարմրեցաւ:

- Այո պատճառաւ չեմ կրնար վճիռ արձակել շատ մը հարցերու նկատմամբ: Բնաւ մի՛ զրկուիր Հանոյքներէն...

Հասած էինք պղտիկ առուի մը քով:

Գուցէ այդ մամուպատ աղբիւրին ջու-րերն էին որ զլուլուով կը սողային մի-շու չես հոս:

Նսճիները իրենց հպարտ կատարնե-րը ցցած էին վեր, կէսօրը կը մօտենար ու օդը արդէն բաւական տաքցած էր:

- Մի՛ զրկուիր Հանոյքներէն, կ'ը-սես, բայց ի՞նչ կը հասկնաս Հանոյք բե-լով:

- Հանոյքը, Հուրի, - ըսի յանկար-ծակիի եկած, - Հանոյք բառը սահմանե-լը շատ զուրիւն է եւ շատ ալ դժուար:

Հանոյքը սրտիդ ձայնն է, Հանոյքը ցան-կութիւն մըն է, որ կ'իրականանայ: Հա-նոյքը երգ մըն է, նուազ մըն է, շոյանք մըն է, Հանոյքը երբեմն համբոյր մըն է...

Հանո՛յքը... բայց չեմ գիտեր ին-չու, Հուրի, կ'ուզես նեղը զնել զիս, բնաւ չէի գուշակած որ տիրուք ու նուազ-կոտ տեսիլդ տակ այսքան չարանճի ես:

- Ես չարանճի չեմ, - պատասխանեց խայթող եղանակով, - ես պարզապէս կ'ուզեմ Հարցնել, թէ ինչու դուն ինքզ-նես գործադրեր ինչ որ ժամէ մը ի վեր կը քարոզես ինծի:

- Հուրի, Հուրի, թերեւս այս վայր-կեանիս, մարմինս կատարեալ է առող-ջութեամբ, ու բաւական տրամաբանող եմ, սակայն մի կարծե՛ր որ կատարեալ մարդ եմ ես:

Մեր նայուածքները իրարու սեւ-ուեցինք:

- Ես, - ըսաւ Հուրին երկիմաստ յպիստով մը, - առաջին Հայեացքով նկա-տեցի քեզ իրբեւ մէկը, որ գիտէ թէ ինչ կ'ուզէ: Արդեօք սխալած եմ:

- Սխալած չես: Ես դարձեալ գիտեմ, թէ ինչ կ'ուզեմ, գիտեմ՝ թէ դո՛ւն ինչ կ'ուզես այս վայրկեանիս... սակայն որ

լին տասնըեօթը տարեկան չեմ, Հուրի՛ :

- Հասկցայ, - ծիծաղեցաւ դառնօրէն, - Հասկցայ, դուն Հուրիին երկրորդ ստորագրութիւնն ես :

Հեռուէն, հղթայրներն ու երէցկիներ մեզի կը կանչէին :

- Վազենք, - ըսաւ, - կերակուրը չպաղէ :

Կարծես այժեամ մըն էր, որ հեշտ կը սուրբար :

Երկար ծամերը օդին մէջ կը պարէին : Ամէն տասը-տասներկու քայլին, զլուխը ետ կը դարձնէր, տեսնելու համար, թէ արդեօք կը հետեւէ՞ր իրեն : Չամբու կէսին կանգ առաւ .

- Եարժէ՛, շարժէ՛ փիլիսոփայ, - պրտաց քրջլաւով, - մարդ երջանիկ ըլլալու համար պէտք է վազել դիտնայ : Վազել՝ հասնելու համար երազներուն, վազել՝ հասնելու համար հանցանքներուն, վազել միշտ, չէ՞ որ արդէն կեանքը վազք մըն է :

Ինչ մը արագ քայլերով, արդէն հասած էի ետեւէն :

- Կը տեսնեմ որ քարոզներս ի դուր չանցան, կազդուրուած ես, կայտառ, եւ ինչո՞ւ չէ, երջանիկ :

- Հիմա ես անօթի եմ, - քրջլաց անլի բարձրաձայն, - վազէ՛, կարելի՞ է անօթի ըլլալ եւ միաժամանակ երջանիկ : Վազէ՛ !...

Գ.

Ճաշէն ետք պէտք է մեկնէի :

Մինչեւ դարպասը ընկերացաւ ինձի ու ձեռքս ուժգին սեղմելով յաջողութիւն մաղթեց, յետմիջօրէի ժրջումին համար :

Մինչեւ ճամբուն անկիւնադարձը, ուսերուս վրայ կը դրայի իր դորսօրտ ու հիասքանչ նայուածքը :

Ժամադրուած էինք յաջորդ առաւօտեան համար, սակայն միայն կէսօրէ ետքը կրցայ հասնիլ : Մեր ժամադրափոփոխումը : Նոյն եկեղեցւոյ նոյն արևուրտակը, լո՛ւր ու ամայնի :

Պարիսպին շուքին տակ, Հուրին

կ'երթեւեկէր, ու հին դարպասին ճոխնը իր ուշադրութիւնը իմ կողմս դարձուց :

Իր երազկոտ ու մտահոգ դէմքը յանկարծ պայծառացաւ ու եղած տեղը դամաւած՝ զլուխը ծոծց ու քրջլաց .

- Մարդ երջանիկ ըլլալու համար, պէտք է պարտուել դիտնայ :

- Ո՛չ, Հուրի՛, մի կարծեր որ մեր պարտութիւնն էր առտուայ բացակայութեանս պատճառը : Սակայն դիտես, մեր շրջանակը բուսական ընդլայնած ենք ու ժամադրութիւն մը յարգելէ առաջ, օտարուած ենք քանի մը անգամ սուտ խօսելի :

- Կատա՛կ կ'ընեմ, - քրջլաց, - չես դիտեր քանի մը օրէ ի վեր սիրտս որքա՞ն ուրախ է :

- Այո՛, - ըսի, - կը մայթեմ միայն, որ մեկնելէս ետք չայլափոխուիս, դարձեալ շքանաս մտայլ ու մտածկոտ :

- Ձեռքդ, ինչպիսի առանձնացած կեանք ունիմ, քանտարկելայի մը պէտ, երբեմն կը մտածեմ թուշուի պէս թոչիլ ու հեռանալ, սակայն կը մտաբերեմ ծնողքս, հղթայրներս, ընկերուհիներս : Այս տխուր բակը, եւ արդ միայրս ազբուրը, ի՞նչ հմայք կընան ունենալ որ թոյլ չեն տար ինձի հեռանալ :

- Հեռանա՛լ, Հուրի՛, կարծես պարզ բառ մըն է, որ կ'արտասանես այնքան հեշտօրէն, - ըսի, հետեւելով իրեն դէպի նոճիկներու ծառուղին : - Հեռանա՛լ, այնքան ալ դիւրին չէ : Հեռանալու համար մարդ պէտք է կամ քաջ ըլլայ, կամ ալ վտու, իսկ դուն, դիտեմ, ոչ քաջ ես, ոչ ալ վտու :

- Ի՞նչ եմ ես ուրեմն, - տակնուվրայ հղաւ, - ոչի՞նչ, ոչի՞նչ :

- Գուն սպիտակ վարդ մըն ես, Հուրի՛ :

Արեւը կը թեքէր դէպի մայրամուտ : Նոճիկները, մտայլ ու անլարժ, կը հսկէին մեր վրայ :

Ամէն ինչ լուռ էր ու մենք կը քալէինք անխօս, ինք՝ ըմբոստացած կեանքի ու երջանկութեան անդժուածին դէմ :

ևս՝ խոսով ու ալլալլած, երանութեան ու բաժանումի դադարաբերին դիմաց:

- Երբեմն կը մտածեմ, - պրոֆկաց ինքն իրմէ ելած, - ոտքի տակ առնել ամէն օրէնք, ընտանիք, տուն, մոռնալ ամէն ինչ ու մեկնել անյայտ:

- Ատիկա չի՛ լուծեր ամէն ինչ, Հուրբի՛:

- Ուրիշ բան կ'ըլլար, - շշմեց, - հիթէ դուն միշտ հոս ըլլալիք:

- Կարծես աշխարհի միակ բնակիչն եմ, - ծիծաղեցայ, - ազու սո՛վ կայ, ինչ է: Աջ ու ձախ քար նետեա, տղու կը դպչի: Յո՛ մը, վատահ եմ, անպատճառ կը հանդիպիս տիպար հրիտասարդի մը, զոր դուն կը սիրես, որ քեզ կը սիրէ...

- Գիտե՞ս ինչ, կարծես սկսայ ձանձրացնել քեզ, - ըսաւ յանկարծ ձայնին ելանակը փոխելով, - առաջին օրը այնքան ժպտուն եւ ծիծաղկոտ էիք, իսկ այսօր հազիւ երբեմն կը ժպտիս: Այլ չեմ սկզբ որ խօսինք իմ մասին: Քիչ մըն ալ խօսինք քո՛ւ մասին:

- Իմ մասին ի՞նչ պիտի խօսինք, - պատասխանեցի լուարած, - այցելած եմ աշխարհի բոլոր ցամաքամասերը: Բայց ի՞նչ վերցուցած եմ այս բոլորէն: Յիշատակներու փունջ մը միայն: Ու այդ բոլոր ուղեորութիւններէն ի՞նչ մնացած է կը կարծես: Ապրումներ, որոնք երբեմն կը սահին ուղեղէդ գէպի սիրտդ, ասուպի մը նման: Միայն այսքան:

Հիմա արեւը կրակի գունդ մըն էր, որ կը հալէր արեւմուտքի լեռներուն վրայ: Երկինքը կը բոցավառէր այլազան գոյներով, գորտերը կը կոկոսային հեռաւոր ճահճներուն մէջ, ու մեզմ սիւքը կը լոյսէր նոճիներուն հպարտ կատարները: Իրիկուան վեհութեան մէջ, Հուրբիին դէմքը կը փայլէր լուսնի նման, իսկ իմ հօգիս կը կսկծար խոսովքներով...

- Երջանի՞կ ես, ըսէ՛, երջանի՞կ ես, - հարցուց քաղցր ժպտով մը:

- Ըստ իս, մէկը անմիջապէս չի զգար որ երջանիկ է, եւ յետոյ՝ երջանկութիւնը այնպէս՝ ինչպէս դուն կ'երեւակայես, երբեք չի կրնար գոյութիւն ունենալ:

Միշտ վախ մը պիտի պատէ սիրտդ, միշտ բնո մը պիտի ունենաս խղճիդ վրայ, միշտ յիշատակ մը պիտի տանջէ միտքդ, ու միշտ մտահոգութիւն մը պիտի մաշեցընէ քեզ: Կատարեալ երջանկութիւն չկայ, ու ան՝ որ կը փնտռէ զայն, երջանիկ պիտի չըլլայ: Կան երջանիկ վայրեր կեանքեր, նոյնիսկ ժամեր, բայց աւելին յուսալը յիմարութիւն է: Չանցնիր օր մը, որ մէկու մը տրամադրութիւնը լաւութի, ու յարատեւ երջանկութիւնն իսկ, ըստ իս, առդակալի է ու կարծեմ թէ ձանձրոյթը ոչ մէկ աղբրս ունի երջանկութեան հետ:

- Ախտո՞ս, - հառայեց, - իրաւունք ունիս: Մակայն տակաւին հարցումիս ուղղակի չպատասխանեցիր:

- Այդ հարցումդ, Հուրբի՛, պատասխան չունի: Երէկ հարցուցիր, թէ ի՞նչ է հաճոյքը: Այսօր ես քեզի կը հարցնեմ. ի՞նչ է երջանկութիւնը:

- Երջանկութիւնը, - զարմացաւ, - ես երջանկութիւնը չեմ ճանչցած, որ կարենամ բացատրել ինչ ըլլալը:

- Ես ըսեմ քեզի, - հանդարտեցուցի զինքը: - Վիքթոր Հիւկոն, «Այնքան տնօրէններ» բանաստեղծութեանց հատորին մէջ քերթուած մը ունի, «Ո՛ր է երջանկութիւնը» խորագրով մտիկ ըրէ՛:

Գոսացած կոճղին տոջիւ հասած էինք, ես նստեցայ ու ինք, գիմացս կանգնած, նայուածքը սեւեռած դէտին, մտիկ ըրաւ անշարժ: Ես ալ կը նայէի գետին, ու ձեռքիս ստաի ցլիկով, հողին վրայ այլանդակ դիծեր կը քաշէի:

Ո՛ր է երջանկութիւնը,
կ'ըսէի տրամազին,
Երբանկութիւնը որ ինձի տուիր,
Աստուած իմ:
Ինձի, եւ չգիտեալ թէ անցաւոր
մանկաբիւնը
Որ կաթէ առուակի մը մտան կը հասի,
կ'երթայ,
Երբանկութեան տարիքն է եւ յաւազոյն
ժամանակը
Որ մարդ կարող է ունենալ այս
Երկնքի տակ:

Ապա սիրելի, իր երիտասարդ սրտին մէջ
 պահել
 Անուն մը խորհրդաւոր որ մէկուն
 չես յայտներ,
 Նախանձի հասող չուրին ու թուշազ
 ամպին,
 Երագել օրումն մէջ ու տանգուի գիշերը,
 Միշտ տառապիլի:

Ապա երջանիկ ըլլալ, ու թէև անգգայ,
 Գրեթէ լալագին նայիլի դէպի անցեալը,
 Առանց վերածնութեան յոյսի,
 Իսմրիլը տեսնել
 Իր գարնան, իր առաւօտեան,
 Իր երիտասարդութեան,
 Կարնցնել խաբկանքը, յոյսը, նա զգալ
 Սր կը ծերանաս գոյումի յարսնում
 րեռան տակ,
 Ու տառ տարի ետք, ամբողջ օր մը
 փակուիլ տան մէջ,
 Լայով կարգաւոր համար սիրային
 նամակներդ:

Մերանալ, ապա ծերանալ, թօշմած
 ծաղիկներու պէս
 Մագերուդ ներմկիլը տեսնել նա
 տարիներու փախուստը,
 Ձգացած երգանիկ օրերը և մանկութիւնը
 վերջիշի,
 Իմաստուն ըլլալ ու ծաղրել սիրահարն
 ու քերթողը,
 Ու երբ համր գերեզմանին կը մտնանք,
 Թաց աչքերով կանչել մեր գաւակները
 Որոնք արդէն դարձած են իրենց
 գաւակներուն:

Այսպէս, Աստուած իմ, մարդը միշտ
 մտայլ
 Կը քալէ փայլուն օրօրոցէն, դէպի մութ
 գերեզման:

Ա՛յս է ուրեմն կեանքը, ուրախութեան
 եւ սիրոյ մէջ, ա՛յս է մեր բաժինը:
 Յիմարութիւն է գանգատիլը:

Ափա՛ս, ծնիլ՝ մանը ցանկալով
 ապրելու համար,

Մեծնալ՝ փնտռելով մանկութիւնը,
 երբ սիրտը կը նիրհէր,
 Մերանալ՝ ափսոսալով չճացած
 երիտասարդութիւնը,
 Մեռնիլ՝ ցանկալով ծերութիւնն ու
 կեանքը:

Ո՞ր է երջանկութիւնը, կ'ըսէի
 տրամագին,
 Երջանկութիւնը որ ինձի տուիլը,
 Աստուած իմ:

- Անշուշտ ասոնք հասուածներ են,
 - բացատրեցի:

- Ո՛հ, ինչ լա՛ւ ուսումնասիրած է
 կեանքը Վիգբոր Հիւզօն...

- Ձե՛ս գիտեր ինչո՛ւ, այս քերթողը
 միշտ տիրութեամբ կը համակէ հոգիս:

- Կ'ընամ ըսել, թէ կեանքիս մէջ ո՛չ
 մէկ բանաստեղծութիւն այսքան տպաւո-
 րած է զիս, - հաստեցի:

Դարձեալ իրարու նայեցանք:

Դէ՛մքին վրայ արտասովոր խայտանք
 մը կար ու կարծես կեանքը կ'ետար իր
 երակներուն մէջ:

- Ձյոզնեցա՞ր այդպէս ոտքի կանգ-
 նած, - հարցուցի սկստ, հագուել լսելի
 ձայնով:

Եկաւ ու նստեցաւ քովս, շատ մօ-
 տիկ: Մարմնին յանկարծական հարումէն,
 յանկուցիչ սարսուռով մը ցնցուեցայ:
 Կը զգայի որ տակաւ կը տկարանայի,
 հողեպարտք աւելն մը կը մագլցէր սը-
 րունքներէս վեր, կը համակէր էութիւնս:
 Ձեռքս կը փնտռէր իր ձեռքը: Մեր
 մատները իրարու մէջ կ'անցնէին ու կը
 սեղմուէին պինդ: Ապա կը լսէի իր
 կուրծքին հեքը, ու իր տաք շունչը դէ՛մ-
 քիս վրայ: Իր շրթները կարծես կ'ազեր-
 սէին ցաւազին պրկումով մը:

Արեւը շատոնց կորուսած էր հորի-
 ղոնի մոայլ լեռներուն ետեւ: Ձգլիկները
 կը պարէին օդին մէջ ու քիչ մը անդին,
 ատուակը կը գլչար: Դեռ մ'ընցած չէր,
 սակայն բաւական ուշ էր:

Հետուէն մեզ կը կանչէին:

Ընդոստ ոտքի կանգնեցանք, յանցա-
 ւորներու նման:

Ընտանեօք կանգնած էին եկեղեցիին
զաւիթը ու թեւերով պանազան շարժում-
ներ կ'ընէին:

Մեր ձեռքերը տակաւին իրարու մէջ
ուղմուած կ'այրէին:

Երբ եկեղեցի հասանք, արդէն եր-
կուքս ալ կը ծիծաղէինք:

Ես տէրհօր անը առի ու համբուրե-
ցի: Ի՛նչ սառն էր անոր ձեռքը ու մահա-
բոյր:

Երբ ընթրիքի նստեցանք, ամէն կող-
մէ հարցումներ կը տեղային ու ես ակա-
մայ կը պատասխանէի: Եւ երբ յաճախ
նայուածքով կը փնտռէի Հուրին, կը
տեսնէի որ թէթեւ կը դառնար մեր շուր-
ջը, ճառագուռն ճնճողակէ մը նման:

Գ.

Գետը կ'ոռնար մուկերն: Տեղ-տեղ
տարադիւրեւ ժայռերուն շուրջ փրփու-
րի պսակներ կը կազմուէին, մինչ ջրուե-
րը, ալիք-ալիք, կը փախչէին խելակո-
րոյս:

Մենք, պայուսակներով ու կերա-
կուրներով բեռնաւարուած, անցանք կա-
մուրջին վրայէն եւ ուղղուեցանք քովքն-
տի կածան մը, ուր եղեւիններ եւ ուռե-
նիներ, իրենց սաղարթներու վեհու-
թեամբ կ'իշխէին: Հոս-հոն կը տեսնու-
էին տուակներ, որոնք իրենց շնչին
կոթիւնը կուզային հաշել պազազած գե-
տին մէջ, որ կը մոռնէր, կը շտապէր
անվերջ, իր խօլ արշաւին մէջ տանելով
արմատախիլ ծառեր, թուփեր ու ոստեր:

Տափարակ տեղ մը դտանք ու մեր
բեռները վար դրինք. քաղաքէն մէկ ու
կէս ժամ ինքնաշարժով հեռանալէ հտք,
կէս ժամէ ի վեր, բեռները շալկած կը
քալէինք:

Լեռնային վայրի օդը, ծաղիկները,
խոտերն ու ծառերը այնպիսի հմայիչ սպ-
ղեցութիւն մը կը գործէին, որ սկսանք
ցատկոտել, մազլցիլ ծառերէն վեր, դա-
լարուիլ խոտերուն մէջ ու ոտտոսուել
վայրի նժոյզներու նման:

Պումբը շատ մեծ չէր, երէցկիինն ու

իւր հայրը, ես, Հուրին եւ իր երեք եղ-
բայրները, սակայն կարծես ամբողջ դո-
րասիւն մը բանակած էր այնտեղ, այն-
քան իրարանցում եւ պոռչուող կար:

Մեր գինովութեան ու կայտառու-
թեան սութած այս Փիլիքական պոռթ-
կումը հազիւ քառորդ ժամ տեւեց, ու
մենք բոլորս, պարտասած, հեւասպառ,
երկնցանք խոտերուն մէջ, հսկայ ուռե-
նիին հովանիին տակ:

Նախաճաշը կազդուրեց մեզ: Երե-
խները սկսան պարան ցատկել ու դըն-
դակ խաղալ: Մեծ հայրիկը սամովարէն
չէր հեռանար, ամէն քառորդ ժամը ան-
պամ մը ջլայ անելը-ու համար: Երէցկի-
նը կորսուած էր իր պնակներուն մէջ,
իսկ Հուրին կուժը առաւ ու սկսանք
միասին աղբիւր մը փնտռել, ըմպելի
ջուր ճարելու համար:

- Վաղը կը մեկնիս, - ըսաւ ժպտա-
լին աչքերուս նայելով, - ու չես գիտեր,
մէյ մըն ալ ե՛րբ կը տեսնենք զիրար:

- Գիւ կանուխ է բաժանումի մտախն
իօսելու համար, - վաղուան մասին մի՛
մտածեր:

- Կը ներես, - թախանձեց, - սակայն
քանի օր է, այս մտածումն է միայն, որ
կը լարչրկէ միտքս:

- Մի՛ սկսիւր, Հուրի՛, կ'աղաչեմ, ա-
հա՛, ահա՛ ալ մը:

Ժայռի մը ճեղքէն, բարակ ջուր մը
կը մաղուէր:

Հուրի ընդվզեցաւ.

- Ձէ՛, ըսաւ, - այս ջուրը հազիւ եր-
կու ժամէն կարենայ լեցնել այս կուժը:

- Պայման չէ՛ որ սպասենք, - ըսի, -
կուժը ձգենք հոս ու վերադառնանք եր-
կու ժամէն:

- Ո՛չ, - ըսաւ, - քիչ մը անդին դու-
ցէ աւելի մեծ աղբիւր մը դռնենք:

- Գուցէ չգտնենք, Հուրի, ու վերա-
դառնանք դարձեալ այս ակին, բուսական
ժամանակ կորոնցնելով: Ունեցածովդ
դուհաղիւր որ երջանիկ ըլլաս:

- Երջանիկ բառը հորովելով, կ'երե-
ւի դիս ի վերջոյ պիտի երջանկացնես, -
- եղիցի կամք քո:

Կուժը դրինք ու վերադարձանք:

Հմայուած էի: Կ'ուզէի կեանքը բռնել, ու կեցնել, այնքան կախարդող էր ամէն ինչ, գետը, ժայռէ կղզեակները, ուռենիներն ու եղևիները, եւ Հուրին՝ որ ինքն իրմէ ելած էր այլեւս, կը ծիծաղէր, կը քրքար, ծառերուն ճիւղերէն կը կախուէր...

- Հուրի՛, - կանչեց երէցիկներ, - այսօր կատղե՞ր ես ինչ:

Հուրին արդէն մագլցած էր ծառէն վեր, իսկ ես բունին կոթնած, կը խօսէիք, սառնց իբր տեսնելու:

- Ի՞նչ տեսակ օղջիկներ կը սիրես, - Հարցուց յանկարծ:

Փէշու իմ սիրած տիպարս ճիշդ ինքն էր, սակայն ստեցի: Ըսի՝ նախապատուութիւն կուսայի աղջկայ մը, որ ունենար կայրոյտ աչքեր, դեղին ծամեր ու մեղմ բնանութիւն:

- Ախտ՛ս, շատ հեռացար: - Իսկ դո՛ւն, Ի՞նչ տեսակ տղայ կը նաւերս, - Հարցուցի հետաքրքիր:

- Զօրատրները, - ըսաւ սքանչազած, - կ'ուզեմ մէկը, որ ծեծէ զիս ամէն անգամ որ չարութիւն քնեմ, մէկը՝ որ տիրէ թէ՛ մարմնիս, թէ՛ հոգիիս:

- Փնտածող բանակալ մըն է, - ծիծաղեցայ, - կը տեսնե՞ս, Արեւելքը որքան ազդած է վրաս: Կը մնայ լուշակը, որպէսզի ուղղակի մտնես Հարեմ:

Երբ ծառէն վար ուղեց իջնել, օգնեցի իրեն:

- «Ջառիվներ դիւքին, բայց զստի՛ վարը դժուարք, դիտե՛ս, - ըսի, - Զարգարհանը դրած է «Ջարմուած որսարզը» պատմութիւն մէջ:

Ես իբ թեւերէն բռնեցի, իսկ ինք մեռքերը ուսերուս դրաւ, ու երբ ծառէն իջաւ, գրեթէ վզիս փաթթուած էր, ու այդպէս ալ սպասեց:

- Ձե՞ս դիտեր, Հուրի՛, - թախանձեցի, - ես վաղը պէտք է մեկնիմ, գիտե՛ս ինչ ըսել է՝ մեկնիլ: Դուն կ'ուզես դառնացնել մեր բաժանումը: Ո՛հ, ի՛նչ կը ջանկութիւն կը հրամայես ինձի. կարծես Վիրամ մըն ես խարուսիկ, ու ես իմ սննդի տէրը չեմ հիմա:

Իբ թեւերէն աղատեցայ ու ճակատս ծառին կոթնեցուցի:

Ինք սահմակած էր, չփոթած, լուռ ու անշարժ:

- Ին՞չո՞ւ տղայ, դո՛ւն ալ վարակուեցար հիւանդութենէս:

Ըսաւ՝ թէ ծարաւ էր, կ'այրէր, պէտք է կրթայինը կուժը բերելու:

Իրեն հետեւեցայ անխօս:

Այլեւս խամածիկ մըն էի իբ մեռքերուն մէջ, ու իբ հմայքը կ'անած էր հուրիւն:

Ծառերուն մէջ կորսուած աւերակի մը առջեւ կանգ առինք:

Մարդկային ո՞ր մեռքը նկրտած էր այս քարերը բերել մինչեւ այս հեռունները: Փոքր թոնրատուն մըն էր, մէջը խաւար:

Հետաքրքրութենէ ժողոված՝ ներս մտայ: Հագին գլուխս կը յաջողէի շտկել, այնքան ցած էր ու մութ: Միակ լուսամուտը՝ կամարածու ցած դուռն էր:

Պահ մը ամէն ինչ մթաղնեցաւ թոնրատան մէջ: Հասկցայ որ Հուրին հետեւած էր ինձի, ու հիմա իր տաք շունչը կը զգայի ծոծրակիս վրայ:

Հովը չոր ոտեր ու տերեւներ բերած էր ներս, ժամանակի ընթացքին, ու մեր ամէն մէկ շարժումին, կ'ընկերանար տխուր խշրտուք մը:

- Կարծես աշուն է հոս, - ժղկտաց, - կարծես կեանքիս աշունը կ'այրիմ: Ինչո՞ւ խոռվեցիր իմ միայր, տխուր բայց խաղաղ կեանքս:

Պատասխանի չսպասեց ու շարունակեց:

- Գիտեմ, դուն շատ բարի ես, շարժումներդ ու արարքներդ հաշուրուած են, սակայն չե՞ս տեսներ ինչպէս խոռված եմ... ես կը խենթեմ'մ...

Գլուխը ուսիս դրաւ յուշիկ, ու տաք շունչին հետ՝ դժուար տաք արցունքները:

- Երթանք Հուրի՛, - ըսի, - երթո՛ւնք, քանի գեռ ուշ չէ:

- Ձերթանք, - հրամայեց ճամբաս փակելով, - ո՛ւ, չիբթանք: Այնքան մը ուժ, քաջութիւն եւ հմայք ունիմ, ստիպելու համար որ կենաս:

Ձինք թեւերուս մէջ առի, շորցուցի աչքերը, ժպտեցայ եւ թախանձեցի որ ինք ալ ժպտի:

- Կարծես ինքզինքս կորոնցուցեր եմ, - շշմուշացի, - ու չես գիտեր ի՞նչ յո՞ր գեր կ'այլեկոծեն հոգիս:

- Ինչո՞ւ սակնուվրայ կ'ըլլամ, - հարցուց, - ինչո՞ւ կը խանդավառուիմ ամէն անգամ, որ քեզ տեսնեմ, ահա՛ հարցումներ, որոնց կ'արժէ պատասխանել քանի որ գետնէն, եւ աշունը շատ հեռու:

Երբ համարեցի, դէմքը հանդարտ էր, կարծես կը նիրհէր երանութեան մէջ: Երկուքս ալ վերացած էինք: Ձեմ գիտեր որքան ժամանակ, մոտցինք այդպէս անշարժ, իրար դրկած:

- Երթանք Հուրի, - ըսի, երբ սթափեցայ:

- Կենա՞նք, կենա՞նք, - թախանձեց, - կենանք մինչեւ որ մտահոգուին ու կանչեն մեզ, կենանք մինչեւ որ մեր հոգիներուն պարապը լեցուի:

- Կենանք, Հուրի՛, այո՛, կենանք, յայտ մինչեւ ե՞րբ: Արդէն կէտոր է, քանի մը ժամէն կը վերադառնանք ու վաղը կը մեկնիմ: Վե՛րջը, մտածած ես, թէ վերջը ինչ պիտի ըլլայ:

- Կենա՞նք, - ըսաւ, - չեմ ուզեր մտածել վերջի մասին, կենանք ու սիրտս լեցուր հաճոյքով, հոգիս ողողէ երջանկութեամբ: Ի՞ դուր կը ճշմանի ինձի բացատրել հաճոյքն ու երջանկութիւնը: Կը հասկնամ, հիմա շատ լաւ կը հասկնամ...



Երբ ակին քով հասանք, կուժը սկըսած էր յորդիլ:

- Կուժը ջուրով, իսկ մեր սրտերը երջանկութեամբ կը յորդին, - ակնարկեց ձեռքս պինդ սեղմելով:

Երկուքս ալ փոշտած էինք:

Ինք իմ վրաս թօթուեց, ես իր վրայ ի շորցած շիւղերը մաքրեցի, լուացուեցնեք սառ ջուրով ու վերադարձանք:

Ճաշէն ետք հեռացանք քիչ մը ու դարբար խոտերուն վրայ երկնցանք:

Մեր վրայ հողեպարար խաղաղութիւն մը իջած էր:

- Վաղը առաւօտ կը մեկնիմ, - ըսի, - չեմ ուզեր որ օդակայան դաս դիմ ճամբելու:

- Ինչո՞ւ, ինչո՞ւ չգամ, կ'ամ շնա՞ս ինձմէ:

- Ո՛չ, Հուրի՛, - հանդարտեցուցի զինքը, - ես հպարտ եմ քեզմով, սակայն եթէ դաս, չես գիտեր որքա՞ն դաժան պիտի ըլլայ բաժանումը:

- Խաղաղութիւնս խոտովեցիր, - հեծկըլտաց, - երջանկութեան պատրանքը օտեր ինձի, ու հիմա կ'երթաս, առանց ետիդ նայելու կ'երթաս, ու ինձի բաժին կը թողուս նոյն սխառ բազն ու մամոսպատ տուակը: Եւ տակաւին կը թելադրես որ երջանկը ըլլամ...

Երկուքս ալ պառկած, կը դիտէինք օդին մէջ թեթեւ սաւառնոց ծիծեռնակները:

- Մի՛ լար, Հուրի՛, - ըսի, - սիրտդ մի կորուր, յոյսով ապրէ, երջանկի ըլլալու համար տակաւին ժամանակ շատ կայ:

- Առտուն կ'ընէիր որ գուցէ չըլտանեք աւելի մեծ աղբիւր մը, ու վերադառնանք այս ակին, բաւական ժամանակ կորոնցնելով:

- Ի՞նչ բան կ'ուզես, - զարմացայ:

- Ըսել կ'ուզեմ... - թոթովեց, - ըսել կ'ուզեմ որ թէեւ դեղին մազեր ու կապոյտ աչքեր չունիմ, սակայն անչափ կը սիրեմ քեզ: Ինչո՞ւ չես ուզեր հասկընալ:

Երկու ձեռքերով աչքերը պոցեց ու սկսաւ արտասուել:

- Առաջին նայուածքով ե՛ս ալ սիրեցի քեզ, սակայն մինչեւ վերջ խուսափեցայ, զգալով վտանգը...

- Վտանգ, հա՛, - զայրացաւ, - եւ այս վա՛ռ սէրը վտանգ կոչելու յանդրակութիւնը ունիս: Անցեալ օր դուն ըսիր, վախչելու համար մէկը կա՛մ շատ քաջ ըլլալու է, եւ կամ վատ: Ձեմ ըսեր որ վատ ես, ամենեւին, սակայն մէկ քան

վատահորէն կ'ըսեմ. ըրածդ քաղութիւն չէ...

- Հուրի՛ր, - աղաչեցի, - հասկցի՛ր, ևս լուրջ պատճառներ ունիմ երջանկութենէն խուսափելու... ես վաղը կը թեկնիմ: Զիս նամբելու չգաս: Կը նեղուիմ: Ինձմէ պահէ քաղցր եւ մտերիմ ընկերոջ մը յիշատակը միայն: Մի՛ կապուիր ինձի: Ես կ'երթամ: Իրարմէ բաւական հեռու եմք: Ձեռք դիտեր բախտը ինչ կը բերէ: Կը գրեմք...

- Վե՛րջը, - հարցուց անհամբեր:

- Վե՛րջը, ջուրը իր նամբան կը պտնէ:

Ք.

Հակառակ էր խոստումին, զիս նամբելու համար օդակայան եկած էր, եղբորը հետ:

Աւելի զգաստ էր ու կ'ըմբռնէր կայութեան ներուժիւնը:

Եղբոր ներկայութիւնը բարեբար ազդեցութիւն գործեց ու մենք երկուքս ալ մինչեւ վերջ պահեցինք ներհուն լրջութիւն մը, երբեմն տիրուր ժպտելով:

Իր աչքերը ծածկած էր մուկ ակնոցներով, չէր խօսեր, կարծես եկած էր հասարակ պարտականութիւն մը կատարելու, կարծես յուզարկուող մը ըլլալ, որ եկած էր թաղելու մեր վառ սէրը:

Այդ վայրկեանին, հոգիս՝ քանաքեռները կրծնառոց զագան ծրն էր: Դէմքիս ու մարմնիս վրայ շլմած ապուշութիւն մը կար տ. աչքերուս մէջ պիտուր հարցախոս մը՝ ձիւնը:

- Երանելի ես որ աշխարհէ-աշխարհ կը պտըտիս, - ըսաւ մտեմբօրէն, - ասմենամեծ ցանկութիւններէն մէկն է եղած ման գալ աշխարհը:

- Թերեւս կարգացած ես Պարոն Սէ-հէնի այծա-ին մասին, - ըսի: - Պատմութիւնն է այժի մը, որ արօտավայրէն շատ կը հեռանայ, կը հասնի մինչեւ սարերը, շուգեր վերադառնալ տուն, ուր կը սպասէ տիրոջ յուանը, եւ, լուսաբացին, կը յօշոտուի գայլէն:

- Շատ տխուր է:

- Այո, եւ որքա՛ն իրաւ, - եղբակապուցի: - Մարդ արարածը, նոյնիսկ եթէ թագաւոր է, միշտ դժգոհ կ'ըլլայ, Վատրոն Սէհէնի այծա-ին նման: Դուն ալ պէտք է դիմէ՞ր հանես աշխարհը ման գալու երազներդ...

Ապա, երբ եղբոր ուշադրութիւնը սուրիչ տեղ կեղբորնացած էր, մեկուօր փոփոսացի ականջին.

- Ըսել չեմ ուզեր որ այս քաղաքէն դուրս շեջես: Կրնաս դալ մինչեւ մեր քաղաքը, ոչ աւելի: Եւ վտտահ եմ, օր մը անպատճառ պիտի դաս:

Զխանդափառուեցաւ: Դէմքին հանդարտ արտայայտութիւնը մնաց անփոփոխ: Կարծես խօսած չէի, կարծես լսած չէր:

Երբ բարձրախօսները, զանազան լեզուներով, զուտեցին մեր մեկնումը, ես ու Հուրին ողջադուրուեցանք: Ամէն ինչ մթազնեցաւ շրջապատ:

- Գնա՛, - ըսաւ, - միայն գիտցի՛ր որ հոգիիս մէջ անդունդ մը կայ, զոր միայն դուն կրնաս լեցնել:

- Կը գրեմ, - ըսի, - կը գրեմ ամէն ինչ, նամակներուս սպասէ...

Ե.

Գիտէի որ սիրահարութիւնը, ասմունութեան մէջ, ճախողութեան կը յանգի, որովհետեւ սէրը, որ էր զագաթնակէտին հասած է՝ առաջին օրն իսկ, կը սկսի տակաւ թուլնալ, պաղիլ: Իրական ու հաստատ սէրը սրամաքանութեան վրայ հիմնուած կ'ըլլայ, քիչ-քիչ կը սկսի ու կ'աճի: Իսկ ամուսինները սրտակից ընկերներ են միայն...

Այս պատճառով, առաջին իսկ վայրկեանին խուսափած էի Հուրիէն, զգալով որ այդ փութուն մարմնին մէջ նստած էր գիւրաբորբոք սէր մը: Վստահ չէի, թերեւս իր զգացածը սէր չէր, իր փրձոտածը սէրը չէր...

Իր նամակներէն, որոնք սկսած էին մակերեսային դառնալ, զդուցած էի եր-

բորդ անձի մը ներկայութիւնը, շար կասկած մը համակած էր հողիս: Նախանձի եւ արտասանքի խառն զգացումներ պատճառ դարձան, որ ես անպատասխան թողում իր նամակները, որոնք ստափանամար դարձած էին անշունչ, կարճ ու անհարգ եւ հուսկ ուրեմն՝ լռութիւն, ոչինչ...

Սակայն սրտիս մոխիրներուն սակ կայծեր կային, որոնք կրնային մէկ անգամէն հրդեհել ամբողջ էութիւնս... Հուրին սրտիս զահակալն էր ամբողջ շրջա տարի:

Եւ յանկարծ, անհրապոյր կեանքիս մտայլ հորիզոնին վրայ, յոյսի նշույլ մը փայտատակեց ու ճակատադրի անմիկնելի մէկ քայլը դիտ վերստին նետեց նոյն արեւելեան քաղաքը:

Յետ միջօրէի ժամը երեքին, օդակայանէն զայցի պանդոկ:

Ապա ինքզինքս ինքնաշարժի մը մէջ նետեցի ու քառորդ ժամէն հասայ եկեղեցի:

Մեծ պարպասը բաց էր: Երեկոյեան ժամերգութեան համար՝ քանի մը պանուներ կային բակին մէջ:

Գաւթի սիւներէն մէկուն կոթնած՝ Հուրին ընկղմած էր ընթերցանութեան մէջ ու երբ զիս նշմարեց, համարձակորէն մօտեցաւ:

- Բարե՛ւ, - ըսաւ ձեռքս առնելով, - ի՞նչպէս ես, այս ուրիշ՞ ուր:

- Բարեւ, Հուրի՛, - ըսի տխուր, - այնպէս եմ, ինչպէս կը տեսնես:

- «Վշտի կսկիծը ժամանակը կ'ամոքի», ըսած է Ակնունդին, - ծիծաղեցաւ բարձրաձայն, - ժամանակ որ կ'ըսէ, արդեօք շրջա տարիէն աւելի՞ ըսել կ'ուզէ:

- Ինչ որ ես կը զգայի, Հուրի, - պատասխանեցի միշտ տխուր, - եւ ինչ որ ես կը զգամ այս վայրկեանին, վիշտ չէ տակուին: Զպացածս պուցէ անկարելի երազ մըն է, կամ հեշտալի երանութիւն մը... մի՛ ձգեր որ այս բոլորը վիշտի վերածուին:

- Կը կարծե՞ս որ այդքան հմայք ու-

նիմ տակուին, - ըսաւ դառն ու ժխտական ժպետով մը:

- Դուն համակ հմայք ես, Հուրի՛, անշափ դեղնակայեր ես:

- Ատիկա երեւակայութեանդ ստեղծած մէկ խարկանքն է, - ըսաւ, - չէ՛ս տեսներ, արդէն սկսած ես ծերանալ:

Երէցիկներ եկաւ, քահանան ու աղաքը՝ անոր ետեւէն:

Միջնորոտը քիչ մը զուարթացաւ:

Հուրին պէտք է երգչախումբի փորձի երթար, ու միտսին մեկնեցանք:

Ճամբան լուռ կը քայլէինք:

Երբ սրահ հասանք, զուգերդ մը կը փորձէին: Կանդ առինք ու մտիկ ըրինք, խոհուն ու ինքնամփոփ:

Տարիներ եմ անցել,
Երգիկներ եմ բացուել,
Ի՞նչ օգուտ վերյիշելի ամէն օր,
Արդեօք մ'ըվ էր, արդեօք մ'ըվ էր
Մեզմից մեղաւոր...

Տխուր ժպտեցանք եւ իրարու նայեցանք:

- Ես հոս պէտք է մնամ, գոնէ երկու ժամ, իսկ դո՛ւն ինչ պիտի ընես:

- Ես կ'երթամ պանդոկ, - ըսի կըտրուկ:

- Ո՛ր, չեմ ուզեր որ այդպէս վերաւորուիս, - ըսաւ, - ըսել կ'ուզեմ՝ կամ սպասէ ինձի, եթէ կ'ուզես, կամ երկու ժամէն վերադարձիր, իսկ եթէ զբաղած ես գիշերը, վաղը առաւօտ ես քեզի կը հեռաձայնեմ պանդոկ:

- Հիմակուհիմա միակ զբաղումս դուն ես, Հուրի՛, - խոստովանեցայ անկեղծ, - սակայն ինչպէս որ պատշաճ է, այնպէս ընեմ:

Ժպտեցաւ:

- Ուրեմն վաղը կը հեռաձայնեմ, - ըսաւ պահունակ, - վաղը անպայման կը հեռաձայնեմ, իսկ առայժմ՝ ցտեսութիւն:

Ինք ներս մտաւ, իսկ ես սկսայ հեռանալ դանդաղ:

Նոյն զուգերդն էր, որ տակուին կը փորձէին ու երգին անուշ հնչիւնները կը

Հետեւէին քայլերուս, քաղցր իրեկուան մէջ:

Գարուն է նորից, սէր իմ հեռաւոր,
Լիսնամանք օրը տխուր բաժանման,
Զհարցնեմ իրար՝ ս՞վ էր մեղաւոր,
Եւ սիրեմք զիրար, անցեալի մնամ...

❖

Հեռամասնեց, Ապա խնչրեց, դրեթէ ստիպեց որ այդ կէսօր իրենց ճաշի հիւրը ըլլային:

Ձմերժեցի: Ի՞նչպէս կարող էի մերժել: Կը տառապէի անուշ տառապանքով մը, որովհետեւ հակառակ էր անտրամագրութեան, յոյս ունէի տակաւին որ յախար կրնար իմ կողմս դառնալ: Խորտակուած չէի, ժախողութեան հետապատկերին զիմաց ունէի յաջողութիւնը, զևս կրնայի ինքզինքս խաբել:

Ճաշէն ետք, առաջարկեց որ ինծի սոյց տայ իրենց եկեղեցին:

Թերեւս պատերուէ ջանդակներն ու խորանին մանրանկարները արուեստի պուրի-գործոցնէր էին, սակայն ինչ որ զիս տպաւորեց, լուսթեան վեհութիւնն էր:

Նստարանի մը վրայ նստեցանք, բով-բովի, ու լուս ունկնդրեցի ամէն ինչ, որ ըսուեցաւ եկեղեցւոյ մասին:

- Ձեզ՝ որ հայրդ զրապի եկեղեցիով, աւելի կարեւոր բաներ ունինք խօսելիք:

- Արդե՞ք, - ըսաւ անտարբերութեամբ:

- Ձերս տարի երազեր եմ վերադառնալ մօտդ, եւ երբ այսքան մօտեցեր եմ քեզի, կը փախչիս ինձմէ:

- Փախչելու հարց չկայ, սիրելիս, պէտք է ամէն ինչ ճակատէն դիտել:

Ի դուր կը ջանայի ստեղծել ցանկացած մթնոլորտս: Ինք միշտ կը խուսափէր:

- Ի՞նչ յոյսերով ու խանդով եկայ, - աի: - Օղակայանէն երբ դուրս եյա, տառջին անգամ աչքերս քե՛զ փնտրեցին: Ամէն անցնող աղջկայ մէջ ցանկացայ

տեսնել քո՛ւ պատկերդ, եւ երբ հանդիպեցայ քեզի հոս, դառն ժպիտով մը դիմաորեցիր զիս: Բոլոր երազներս ցընդեցան վայրկեանի մը մէջ, սեւը իջաւ սրտիս, եւ երբ պանդոկ հասայ, երեխայի պէս լացի:

- Լացը լաւ է, - շնջաց, - կը զգաստացնէ, մտքերդ կը պայծառացնէ, կ'արթընցնէ, կ'օգնէ որ հաշտուիս իրականութեան հետ:

- Ո՛ր իրականութեան, - ընդվզեցայ, - իրականութիւնը ա՛յն է՝ որ կը սիրեմ քեզ: Ի՞մ համակրանքը սկսաւ այն օրէն, երբ առաջին անգամ տեսայ քեզ, հոս, ասկէ շորս տարի առաջ, ընկճուած, միտակ, տխուր... մէկ ցանկութիւն ունեցայ. երջանկացնել քեզ:

- Մասամբ յաջողեցար, - հաստատեց, - ամբողջ կեանքիս ընթացքին, շնորհապարտ պիտի մնամ քեզի: Որովհետեւ, դուն ինծի ցոյց տուիր ինչ որ քաղցր է կեանքի մէջ:

- Կը սիրե՛մ քեզ, Հուրբ՛, - շնջացի, - չե՞ս ուզեր հետս ամուսնանալ:

- Ամուսնանալ... - ծիծաղեցաւ, - ամուսնանալ, Թաղել կեանքի բոլոր հաճոյքները, ամուսնանալ ու կապուել առնել, լուսացը ընել ու կերակուր եփել, ամուսնանալ ու երեխաներ շարել, լաց, ճիւղ, կեղա եւ ուրիշ ուրիշ:

Նստած էինք նոյն նստարանին վրայ, մեր դէմքը սեւեռած խորանին, եւ եթէ մէկը այդ վայրկեանին մտնէր եկեղեցիէն ներս, պիտի կարծէր, թէ երկու հաւատացեալներ էինք, ամփոփուած ազօթքի մը վեհութեան մէջ:

- Հուրբ՛, դիտեմ, - ըսի, - ինչ որ կը խօսիս քու անձնական, անկեղծ մտածումները շնն: Գ'ուզես, որ այլեւս շանհանգստացնեմ քեզ:

- Մոռցի՛ր, մոռցի՛ր զիս, - ըսաւ ինծի դառնալով, - ես հին Հուրին չեմ, Հուրին՝ որ ճանչցար ասկէ շորս տարի առաջ, քու Հուրին մեռաւ, եւ դո՛ւն սպաննեցիր զայն...

Ի՛նչքը դարձեալ խորանին դարձուց: Գիտէի որ կ'արտասուէր:

Այդ վայրկեանին, ինչպէ՛ս կը ցան-

կայի զինք առնել թեւերուս մէջ, սակայն
բաշտութիւնը կը պակսէր ինծի, այնքան
կրկնուս դարձած էի ու տկար:

- Այլ չեմ անհանգստացնէր քեզ, Հու-
րի՛, - ըսի յուսահատ: - Ասիկա կրնամ
ընել: Սակայն մոռնալ քեզ, չեմ կրնար,
անկարելի է: Աւելս թէ շուգեա, դուն իմ
կեանքիս մաս կը կազմես, եւ ես կը սի-
րեմ քեզ նոյն երազային, նոյն ապերախտ
ու շքաշաւերուած սիրով: Ատր հակա-
ռակիւր թու ուժերէդ վեր է եւ քու իրա-
ւունքդ դուրս: Բե կը սպասեմ, կը սպա-
սեմ մինչեւ մահ, յամառօրէն, որովհե-
տեւ գիտեմ, որ մը պիտի գաս, անպատ-
ճա՛ն պիտի գաս, հող չէ թէ ուշ, շատ
ուշ, ես պիտի սպասեմ քեզի:

Ձգեցի եկեղեցին ու ելայ դուրս: Ար-
ցունքներս շորցնելու համար, ուղղուե-
ցայ դէպի աղբիւրը: Ետևարած էի: Ձէի
գիտեր ինչ ընել: Երբ երեսս շորցուցի,
տեսայ որ ինք ալ ընկնուած դուրս կու
գար:

- Հիմա ի՞նչ պիտի ընենք, - հար-
ցուց:

- Ոչինչ, - ըսի, - հիմա ես կը մեկ-
նիմ ու այլեւս հանդիստ կը թողւմ քեզ:

- Ո՛ւշ, - ընդդիմացաւ, ճամբաս փա-
կելով, - չեմ ուզեր որ այդ տրամադրու-
թեամբ բաժնուինք իրարմէ, պէտք է ա-
մէն ինչ ըսենք իրարու, ասիկա՛ իրբեւ
խղճի պարտք:

- Ի՞նչ ունինք իրարու ըսելիք, Հու-
րի՛, եթէ ոչ երեք բառ. ամէն ինչ վեր-
ջացաւ:

- Ո՛ւշ, ո՛ւշ, դգաստացիք, չես գիտեր
ինչ վի՛շտ պիտի պատճառես ինծի այս
վայրկեանին մեկնելով, - ըսաւ ու սկը-
սաւ սիրուն աչքերը շորցնել:

Ատալարկեց որ քալենք դէպի ծա-
ռուղին:

Քանի մը վայրկեան լուռ ու մտած-
կոս քալեցինք զով-զովի, առանց լուռ-
թիւնը խզելու քաջութիւն ունենալու:
Քանի մը անպամ աչքերս իրեն դարձուցի
ու տեսայ դէմքը, որ ժուայլ էր, տխուր
ու մտահոգ:

- Ձեռ գիտեր քանի՛ անգամ առանձ-

նացած եմ այստեղ, - շնորհաց մեղամաղ-
ճոտ, - յիշելու համար այն բոլոր տեսու-
մտածումներն ու խօսքերը, որ քուզ
էին, կեանքի ու երջանկութեան մասին,
հաճոյքի ու երանութեան, սիրոյ ու բա-
նաստեղծութեան մասին: Միայն նոճի-
ններն էին, որ փոխուած չէին եւ եթէ
տրամադրութիւնս բարձր ըլլար, պիտի
կարծէի, թէ ժամանակը կեցած է, շորս
տարիները անցած չեն, ես այդ չէնչոյ
երիտասարդն եմ եւ Հուրին, հրատարակ
սիրատուրոյ այժեամբ մը: Սակայն այս
բոլորը անցած էին: Ես խլիակ մըն էի
եւ տակաւին չէի հասկցած թէ Հուրին
ինչ էր:

- Գիտե՛ս, - ըսաւ յանկարծ, - ես
հիմա նշանած ունիմ:

- Նշանած, - կատա՛կ կ'ընես:

- Նշանած ունիմ, այո, նշանածս
բանակի բժիշկ է եւ կ'ապրի ուրիշ քա-
ղաք:

Պապանձեցայ: Աչքիս առջեւ նոճի-
ները սկսան պարել մահուան պարը: Ի-
րիկնային սիւքը անկարող էր զովացնե-
լու այրող ճակատս:

- Ինչո՞ւ մինչեւ հիմա չըսեր, ես
ձեռքդ մտտանի չտեսայ, եթէ ոչ...

- Ի՞նչ ըսել կ'ուզես, եթէ ոչ ըսելով:
Մատներէս մինչեւ մազերս, մազնի-
սացած էի:

Երկինքը ջինջ էր ու լիալուսինը
երկուքիս ստուերները կը նկարէր ծա-
ռուղիին խիճերուն վրայ:

Լուռ գիշերուան մէջ, զլլջան առ-
ւակը համարձակ կ'աղմկէր ու շատ հե-
ռուէն կը լսուէր գորտերու կռկոցը:

Հիմա առեղծուածը լուծուած էր ու
ամէն ինչ պարզ էր ու խօսուած:

- Ամիս մը առաջ, - սկսաւ պատմել
մեզմ ու քաղցրամայն, - երբ իմացայ
զայլուք մասին, շատ համառօտ ու ջղա-
նացնող նամակ մը գրեցի իրեն: Երկու
օր ետք եկաւ: Չարձացած իմ վարձուե-
քէս, ամէն օր կը հանդիպէր մեզի ու
հարցումներ կ'ընէր, նոյնիսկ ամբողջ օր
մը արցունք թափեց, թէ ինչո՞ւ կ'ուզեմ
զաւանձանել իրեն, Վերջապէս եկայ այն

կողակացութեան, որ պէտք է հաշտուէի դառն իրականութեան հետ ու յարգէի առած խոստումս :

- Նշանանդ կը սիրե՞ս, - հարցուցի :

- Ո՛չ :

- Ապա ի՞նչպէս եղաւ :

- Մայրս ստիպեց : Զգայուն ու խն-լօք աղայ է, սակայն, ասիտ՞ս, երբեք հաղորդական չէ ինձի :

Գոսայած կոնգին առիւ հասած էինք :

Իբարու նայեցանք : Այդ փոստ փայտը հիմա աւելի հաղորդական էր իրեն, քան իր թփիկ նշանածը :

- Հուստա՛, - խզեց լուսթիւնը, - հաւատա՛, որ քեզի չափ էնք ալ կը սիրէ զիս :

- Հօգրե՛, գեղեցիկ Հուրի, - շննջա-ցի, - մէկ բան կը խնդրեմ քեզմէ, վնուէ այնպէս, որ երջանկութիւնը չվանադուի : Գու. երջանկութիւնը աւելի արժէքաւոր է ինձի համար, քան իմ երջանկութիւնս :

- Ես դիտեմ երջանկութեան ճամբան, - հեծկլտաց, - սակայն օր մը ըսի քեզի, կ'երևի ինձի թոյլատրուած միակ եր-ջանկութիւնը արտութիւնն է :

Ձեռքերը ասիւրուս մէջ առի աւ շըրթ-նեքուս գիմաց պինդ սեղմեցի :

Գլուխը աւսիս դրառ ու սկսաւ ար-ասսուելի :

Լուսնի շողերուն տակ, իր արցունք-նեքը ազամանդի խոշոր հատիկներու կը նմանէին :

Համբուրեցի աչքերը : Մասներս իրելով իր երկար ծամերուն մէջ, կուրծ-քիս վրայ սեղմեցի սիրուն գլուխը :

- Հուրի՛, Հուրի՛, կը բաւէ տառա-պիս ու տառապեցնես զիս :

- Կը զգամ տառապանքդ, - մզկտաց, - սակայն կ'աղաչեմ, ետ դարձիւր այս ճամբէն ու զիս ձգէ մտքիդ պողպատէ, վարադոյրին հետեւ :

- Միտքս պողպատէ վարագոյր չու-նի, Հուրի, ես երեխայ չեմ :

Վերադարձած էինք գոսայած կոն-դին մօտ :

- Գիտե՞ս, - ըսաւ, - հո՞ս էր, որ արտասանեցիր Վիքթոր Հիւկոյի գաւուր

պատշաճից բանաստեղծութիւնը : Գուե նոստած էիք, իսկ ես կանգնած էի հոս, Ի՞նչ երանելի ու երջանիկ օրեր էին : Նո-րէն բան մը չուեի՞ս արտասանելիք :

Ես դարձեալ նստեցայ կոնդին վրայ, ինք դարձեալ կանգնեցաւ դիմացս :

- Մտիկ ըրէ, - ըսի, - ասիկա Ձա-րենցէն է :

- Յաւ, ցաւ էր տեղուշտ, Կուե երբեք, երբեք ինձ չես ժպտացել, - Քա ժպիտն անգամ ցաւ է բուացել իմ հագուստիս...

Ես քեզ կամչեցի երկար ու երկար Գու չեկար, չեկար - Յանկացայ լինել քա դեմ մի հլու ևս անկամ գերի եւ ես իմ սիրով քեզ ճանաչուցի բերի :

- Յուրի է, - շննջաց, - բայց... կը ներես :

- Զյոզեցա՞ր այդպէս ստեղ, - ըսի, - եկուր նստէ քովս :

- Ո՛ւշ է, պէտք է վերադառնանք, արդէն պատշաճութեան սահմանները բռնարարեցինք եւ դիտուր նշանածս կրնայ պատերազմ յայտարարել մեզի :

- Ուրեմն դաշնակիցնե՞ր ենք, Հու-րի, - ըսի ստեղի ելլելով :

- Ո՛չ, յոյսդ վրաս չգնես, կրնամ ամէն վայրեկան դաւաճանել ու անցնել թշնամիին կողմը :

Կը զգայի որ ամէն ինչ վերջացած էր, ըսուելիք քեզ բան կար :

Միայն գիշերն էր, որ կը յամենար, տիրուր բայց լուսաւոր :

- Գիտեմ, - ըսաւ եզրակացնելով, - սիրողը միշտ կը սպասէ իր սիրած էակի վերադարձին, նոյնիսկ մինչեւ իր ծերու-թեան օրերը : Բայց չէ՞ որ գուե երիտա-սարդ ես, նոր կը սկսի կեանքիդ գարու-նը, կ'աղաչեմ, մտցիր իմ սիրոյս պատ-ճառած վիշաք :

- Ուրեմն ամէն ինչ վերջացա՞ւ :

- Գուցէ օր մը դժբախտ ու անյոյս ըլլամ, - շննջաց - ու տարիներ յետոյ ծե-րութեան վարժամ ձիւնը զարդարէ վար-

սերս, զիս մոռցած ըլլաւ ու դատապարտած անցեալի գառն իրականութեան համար և յանկարծ հանդիպինք ու ճանչնաս զիս: Արդեօք այն ատեն կ'ընդունի՞ս զիս այսօրուայ անբիծ ու երկնային սիրով:

- Հուրի՛, չեմ ուզեր որ սպիտակը ինչէ՛ք ծամերուք, չեմ ուզեր մոռնալ զեզ, ոչ ալ բաժնուիլ զեզմէ՛:

- Կ'աղայեմ, - ըսաւ ձեռքս սեղմելով, - եթէ կ'ուզես որ զեզ յիշելով միշտ չ'առնուիմ, աշխատէ կերպով մը թեթեցնել սրտիդ զիդուած մտածումներու ու վերջերու ծանր բեռը:

Եկեղեցիին կը ժամանայինք: Կարծես յուսիչ ներկայացումի մը վերջին արարը կը խաղցուէր: Գիշ հոգ ամէն ինչ պիտի թաղուէր այս նոճիներուն ներքեւ, դիւշերուայ խաւար վարազոյրին ետեւ:

- Ի՞նչ կրնամ ընել, ի՞նչ, - ըսաւ, պարզապէս լռութիւնը լեցնելու համար, - բախտը այսպէս հարուածեց զիս, ու այս հարուածը հաւատարապէս կը դժբախտացնէ երկուքս:

Դարպասին առջեւն էինք:

Այդ դժխեմ զարպասը կարծես զըժոխիբի դուռն էր ու բարբի հրեշտակները զիս կը վտարէին դրախտէն:

Շչմած էի ու մոլոր: Կարծես կը մեռնէի:

Օղակայան կկած էր առանձին, զիս ձամբելու: Թելադրեց որ զբեմ իրեն:

- Ո՛հ, - ըսի, - ոչ, - կը թելադրեմ որ երջակացնես բժիշկ նշանածո՛ղ:

- Կ'աղայեմ, կ'աղայեմ, - հեծկըլտաց, - փորձէ հասկնալ վիճակս:

Արցունքներս թոյլ չէին տար, որ կարենամ խօսիլ:

Թեւերուս մէջ՝ ի՛նք ալ կ'արտասուէր:

Վերջին անգամ համբուրուեցանք:

Պէտք է բաժնուէինք:

- Մնաս բարո՛վ, - հեկեկացի, - պաշտելի ոճրագործ, մնաս բարով, Հուրի՛ս, մնաս բարով...

Ճ

Մեր բաժանումէն վեց ամիս անցած էր, երբ ծնունդի շնորհաւորական շարժի մը ստացայ:

Կը շնորհաւորէր Նոր Տարին, երջանիկ տարիներ կը մաղթէր ինձի, ու ապա՝ կը յիշեցնէր Վահան Տէրեանի մէկ զերթուածը:

Մի օր առյաւելոյ կեսմէր կ'անիծեմ, Ու զունաս լոյսի քայլերով դանդաղ, Կը գտնեմ ուղիմ հեռաւար քա տոմ, Ու քայլ սնոքեքով, դուռն կը ծեծեմ:

Բնա յանկարծակիի չեկայ, անպիտոյ զարժած էի ու շչմած՝ դպացած առաւպանքէս, սակայն շուպեցի անպատասխան թողուլ իր յուսահատ կանչը: Գիտէի որ իր տրամադրութեան մէկ քմայքն էր այս զարթը ու իր միսթիք հողիին տկար արձագանդը՝ Տէրեանի այս մեղմազմոտ զերթուածը: Պատասխանեցի զբեթէ նոյն լատերով, զարթի մը վրայ, ուր կը տեսնուէր աշուհը, ու մաղթանքներս վերջացուցի Յովհաննէս Շիրազի մէկ զտեսակով:

Կը գաս, քայց ուշ կը լինի, Աշխ մշուշ կը լինի, Միմեւ սէլոյ խելքի գայ, Վարդի տեղ փուշ կը լինի...

Ս. Ս.

30 Մայիս 1969
Պեյքուք

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Ա.

Տղաքը դպրոցէն կու գային ժամը չորսի ատենները: Մինչեւ այդ պահը Յովսէփ Ամուն առանձին կը սպասէր տան մէջ: Բայց բնաւ ներդա-
քիւն չէր գգար մինակութենէ: Սննեակին պատուհանէն կը դիտէր թաղին
մանուկները, որոնք խումբ կազմած՝ մեծ շէնքի մը բակին մէջ կը խաղա-
յին:

Տղաքը կու գային դպրոցէն, եւ Յովսէփ Ամուն անոնց անգլխերն խօ-
սիլը լսելով՝ կը սրտնեղէր: Անհամբեր կը սպասէր, որ շուտով վերջացնէին
իրենց մախընթրիքը, եւ երթային միանալու մեծ շէնքի բակին մէջ գրօս-
նոց մանուկներուն:

Յովսէփ Ամուն այլեւ չէր մտածնար լուսամտին: Ան կ'երթար տան
արեւմտեան կողմը, ուրիշ կարելի կ'ըլլար փողոցէն անցնող ինքնաշարժ-
ները դիտել: Անոնք կը տարային եւ երբեմն աննցմէ մէկը կանգ կ'առնէր
դիմացի մայրիկն առջեւ: Յաճախ այդ ժամուն կու գար վերի յարկը բնա-
կոց երիտասարդ կին մը, որուն սեւածիր գեղեցիկ աչքերը Յովսէփ Ամունին
Յունաստանի աղբիկները կը յիշեցնէին:

Կը լսէր ձեզունէն հասնող ուռնաւայները, որոնք երիտասարդ դրա-
ցուհին կը վերածէին կարօտալի երագային ներկայութեան մը: Յովսէփ
Ամուն չերմտէր քաղցր գուշակութիւններ կ'ընէր եւ ինքզինքը աւելի ա-
ռանձին կը գգար մէկու մը նման, որ բոլոր կապերը խզած է մարդոց աշ-
խարհին հետ եւ սոսկ մահուան մասին մտածելով կ'անդորրացնէ իր խոռ-
վակած հոգին:

Քիչ ետք, երբ դիմացի ուռնիին մագերը մութ գոյն մը առին, սգա-
ւոր կնոջ մը ուռնբուն վրայ թափուած մագերուն պէս, Յովսէփ Ամուն պա-
տուհանէն կանչեց տղաքը:

Առանձնութիւնը կը խորանկնար անդունդի մը նման, որուն մէջ
անտեսանելի աչքերէ արցունքներ կը հաւէին:

Յովսէփ Ամուն գգաց, որ թաց էին իր աչքերը:

Բ.

- Ձափը մի' անցրենք, գաւակս, մօրդ կա՞քն է ստիկա:

Մամի Սիման էր խօսողը: Ծիսխտտին համար էր: Մարտիրոսը ծը- խիկին սպառելու մօտ կրակովը նոր մը կը վառէր, այնպէս որ մասնեքուն ծալլը կարծես դեղին ներկած էին:

Մամի Սիման Եղիպտոսէն գաղթած էր վեց-եօթը ամիս առաջ իր Մարտիրոս անուն տղան ինչ: Անտիք կը բնակէին ինչի տունը, այնպէս որ երբ Յովսէփ Ամուն լուսամտին առջեւ նստած կ'ըլլար, կրնար խօսակցութեանց հետեւիլ զիրար քեանք: Մօրը եւ գաւակին միջեւ: Կնոջ եւ ամուսինին, որոնք երբեմն բարձրաձայն կը խօսէին, կռիւ ընկու պէս:

«Մօրդ կա՞քն է ստիկա»:

Հիմա շատ մը երիտասարդներ, այս օտար փիերուն վրայ, կը մտա- ծէր Յովսէփ Ամուն, զոր կը խառնեն իրենց մօր անարատ կաթին: Կը մտա- նան հայադրօշմ ամէն ինչ, որ մեր պատերէն հրիտակուած է. աւանդու- յիւնները, որոնց մէջ ընտանեկան սրբութեան եւ թիրախներու օրհնութեան խնկարայր շունչը կը ծաւալի:

Իայց Յունաստան այսպէս չէր, ըստ ինքն իրեն Յովսէփ Ամուն, հան ազգիկներն ալ այստեղի ազգիկներէն աւելի գեղեցիկ էին: Հայ սպառն աւելի հայ ազգիկներու կը կապուէին: Գոնէ իմ ապրած քաղաքս այդպէս էր:

Յովսէփ Ամուն նորէն լսեց Մամի Սիմային ձայնը.

- Ա՛լ չափը անցուցիր. Մարտիրոս... Մօրդ կա՞քն է...

Իրեն համար ալ առանձնութիւնն էր մօրը կաթը, ինչքան զառնա- նաւ, գոր կը ծծէր անյագութիւն, ցաւատանց գինովութեամբ:

Գ.

Առաւօտ մը, փոքորը, հանդիպեցաւ իրեն տարիքը ունեցող ծերու- նիի մը, որուն աչիքը հին օրերու մտոցում ծանօթ մէկու մը պատկերը արքնուցին իր յիշողութեան գիշերին մէջ: Նաուվ ուղեւորութեան մը ըն- քացիին նանչցած էր գայն: Պայտահայ փաստարան մըն էր: Երկուսն ալ Ֆրանսա կ'երթային: Ճիշդ ու նիշդ ինքն էր: Յանկարծ կանգ առին զէմ դիմաց:

- Յովսէփ Ամունն ես, - հարցուց փաստարանը:

- Գուն ալ կիրակոսեանը թլլալու ես:

Մօտակայ դարաստան մը կար: Նստեցան հոն ինչ-ինչ, իրարու յարեցան եւ կարծես արեւի լռային դէմ տանջանքով բացուած աչիքերուն մէջ անցնալին պատկերը փնտռեցին: Կորուած եւ անդառնալի կեանքի մը ցոլ- քը, որ անոնց հագիին մէջ ցաւագին արծարծում մըն էր հիմա:

Շարք մը ետք, հայաց եկեղեցիին երասարակած պարբերութիւններէն Յովսէփ Ամուն այդ մարդուն մահուան գոյժը իմացաւ: Կարծես բան մը փլու յանկարծ իր սրտին մէջ: Անի կը տեղար քաղաքին վրայ: Մտախ- լապատ երկինքը իջած միացած էր երկրին, ուր հեռուար գերեզմաննայի մը անյիշատակ մէկ խորշին մէջ կը ննջէր մէկը, որուն հետ սրտակցօրէն կապուելու յոյսը ունեցած էր պահ մը: Երկարօրէն եւ դառնօրէն մտածեց

անոր մասին: Երանի թէ համդիպած չլլալի, կ'ըսէր ինքնիրեն, եւ գլուխը ծանրօրէն կ'իյնար կուրծքին վրայ:

Ձիւնը կը տեղար անընդհատ, եւ երբէ ամբողջ գիշեր մը երկրին վըրայ դիզուէին երկնքի պարտեզներուն մէջ մեռած այդ ներմակ թիթեռնիկները, բաց պիտի մնար միշտ այն տեղը, ուր պանդուխտ հայտ մը հոգաբուսը կար:

Առանձին կը հսկէր հոն հոնի մը, ուրուն արմատները իրենց աւիշը կ'առնէին սրտի մը կարօտագին անձկութենէն:

Այնուհետեւ Յովսէփ Ամուն կը վայտնար ինն օրիւնն ծանօթի մը հանդիպելէ:

Գ.

Ատենօք կը կարծէր, թէ մէկ օր իսկ պիտի չկրնար այլիլ առանց իր գիրքերուն: Հիմա տարին կ'անցներ եւ ան գիրք մը չէր բացած: Անոր կեանքին եւ աշխարհին միջեւ իջած էր կարծես անառատ գիշեր մը: Միտքը սափայլն շարունակ եւ մէկը միւսէն տարբեր անդրադարձումներ կ'ունենար: Մեծութիւնն էր արդեօք, որ անցեալէն անոր տեսողութեան ծիրին վրայ կը բերէր յարուցեալ աշխարհի մը խաչածն հարկոնները: Անոր առանձնութիւնը յամառօրէն կը յաճախէին հիմա կորսուած բնկերները, որոնք ուղեւորութեան առաջին օրն իսկ, երկնքի յայտները չվառած, նոր նամբաներ բռնած էին: Բայց հիմա յուսովառ գորութեամբ անոր ճայերը դէպի անհասանելի բարձունք մը կը դիմէին:

Վերելքը այն չէր երբեք, որուն կը յուսար մօտենալ երիտասարդ տարիքին: Վաղուց արդէն անկումէ անկում, եւ յետոյ մահառումէ մահառում, ուզած էր հաւատալ երազի յաղթանակին: Բայց երազը փշէ պսակ հիւսած էր անոր հակտին շուրջ եւ փուշերը արիւնած էին մինչեւ ուղեղը:

Պատանեկան տարիքէն առանձնութեան խաչին վրայ ընտելած էին զինք ամայի գողգոթայի մը վրայ, եւ մինչեւ ծերութիւն շարժարանքը տնտնաւոր էր, առանց մահուան պատկարար միջամտութեան:

Շատերն աննցմէ, որոնք ծագրած էին անոր դառնահաս արցունքները, չկան այլեւս, անհետացան այս աշխարհին երեսէն. մինչդեռ ան կրկէսին մէջն է սրտերու եւ աննց բարախումներուն ջերմութիւնը կը զգայ:

Ա. Ե.

Ո Չ Ը

Մինչև երկ կը փորձէր
Բաժանն ըմպել խոր սեմութեան
Ու գինովնալ մոռացութեան
Իռպէին մէջ այդ խարկանքի:
Աւ չճիշտի քեզ ալ երբեք,
Ու չճիշտի «սոյն» այն անփոյթ,
Զոր շրթներուդ մէջ ծամելով՝
Սպասումիս մէջ թեցիր:

Ու գիտէիր, որ այդ դաժան մերժումէդ ետք,
Թէ պատահէր հանգիպումի մ անըջանքով
«Ոչ»դ լուծել արցունքիդ մէջ՝
Պիտի երբեք չտեսնէիր
Դեռ միացող կարօտներու ծուխը նոյնիսկ:

Բայց դուն եկար անյուսօրէն,
Ու ցնդեցաւ վայրկեաններուս
Մոռացութեան հնային անուշ-
Բարեւեցիր, չխօսեցայ.
Դէմքիդ վրայ ժպիտ մը նոր
Լուս դառնութեան մաղձը ծածծ՝
Թաց աչքերուդ մէջ կը ծորէր:

Ժամերուն հետ մերկ նայուածքներ իրար գտան,
Բառեր թռան էու շրթներէդ,
Մտիկ չըլի, տժգունեցար,
Բայց աչքերուդ լուս դառնութեան թախիծն ամբողջ
Կաթիլ-կաթիլ
Նայուածքիդ հետ երակներուս մէջ մագունեցան:

Մոռացութեան բաժանը պիղծ փշրուած է արդէն հիմա,
«Ոչ»դ չկայ,
Դո՛ւն ես նորէն,
Բայց դառնօրէն ինչո՞ւ, ինչո՞ւ
Դեռ կը փորձեմ
Զնաւասալ այս անուրջինն,
Այս տեսիլքին, այս ցնորքին...

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ



« ՅԱՏԿԱՊԷՍ ՀԱՅՏԵՐՍ »

« Էկոմանազրով մեր լեզուին փոթաթուածո՞ւ ու հայ կոնգրէին համար զմի փորձանք՝ դարձած օտար բառերու խլացուցիչ խուժանին ղէմ Պարսից Անտիկ Ժառանգումէն (1982) հետք, մեր լեզուին մաքրութեան համար բաւական մեծան հոսեցաւ Հայաստանի մէջ, Հայաստանի մտաւարկանութեան ջանքերի մեծամասնութիւնը, որ սրբութիւն սրբոց կը դուանի հայոց լեզուն, խորութեամբ կը նանչնայ Մեծաստուածին ինքնաբաւութիւնը եւ քուէն կու տայ անոր զարգացման ինքնուրոյն հարաւարութիւններուն, երկու տարի առաջ տեղամ մը եւս յայտնեց իր հաւատարմութիւնը՝ տիրաւորակ Արտաշէս Ռուկերիանի նոյնքան տիրաւորակ օտարամտութիւնը մողկնելու կորովի նախանձանդորութեամբ: Ռուկերիանի ղէմ «Սովետական գրականութիւն» ամսագրին եւ «Գրական քերթ»-ին մէջ պատերազմ հուշակեցիք Ռաֆայէլ Իշխանեան, Սերգէյ Արրաւանեան, Բաղիշ Յովսէփեան, ուրիշներ եւ հայոց լեզուի զբառաստեղծման, թուածանցման եւ բառաբարդման նոր կարելիութիւններուն կոթնած՝ բուրբոյլին փեռաթափ ըրին ստրկահատութեամբ իր տարիները իրարու վրայ դուժարած եւ իր դարը շատնոց աստուծ մերոյնչեալ հին մեծասարը: »

Հայոց լեզուին մաքրութեան եւ անոր դասական կառուցին համար անզիջող պայքարի մեծանարեան ամենաուժեղ ղէմփոխին մէկը հանդիսացաւ Ռաֆայէլ Իշխանեան, որ «հայ փողովքի ամենամեծ հարգարմութիւնը» հարուստ առեւանջերով վեր հանելէ եւ օտար բառերու անհարկի գործածութեան ղէմ ամբողջ մայրով պրտալէ ձեռք, վերջերս քննութեան ենթարկեց Մեծաստուածին կապուած ուրիշ ցաւած հարց մը, նորէն «հրոմանազրով» Հայաստանի Ժողովուրդին պարտագրուած 1922-ի ուղղադրութեան նոր մեւը, որ «ուղղադրական պատեհէն» ստեղծեց եւ առաջ բերաւ «ըմբոսութիւն եւ պատակտու» միայն: »

Քննարկուած այդ երկու կէտերուն առնչութեամբ՝ մենք կատարած ենք շարք մը հաստատական ու հակասական ընդգծումներ, որոնց պիտի անդրադառնանք մեր յաջորդ համարներէն մէկուն մէջ: Մինչ այդ, սակայն, որպիսութիւն է վերջին կարգաւ 1922-ի ուղղադրական կարգադրութեան դասն հետեւանքները սեւազգող Ռաֆայէլ Իշխանեանի առաջ բերած մէկ պարզ նշմարտութիւնը, այն՝ որ

« Էլին գրաւար մշակոյթ աննցող մի ազգի համար զատկան դարձած ուղղադրութիւնը կամուրջ է հնի եւ նորի միջեւ, եւ շատ զգայլ պիտի է վարանլ այդ կամուրջի հետ: Յատկապէս ձայնը պիտի է զգայլ վարուելով մեր դասական ուղղադրութեան հետ, քանի որ այժ կամուրջ է նաեւ մայր կայրներէի եւ սփիւռքի գրականութեան միջեւ: »

Հ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՄԵԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԺԳ. - ԺԴ. ԴԱՐԵՐՈՒՆ

Բ.

Դ. - ՎԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՊՈՄՓՆԲՔԱՆԵՐԸ

Ինչպէս բուռեցաւ արդէն, ԺԳ.-ԺԴ. գարեբու Հայաստանի ճարտարապետութեան ամէնէն յատկանշական երեւոյթը վանական քովիլիտիւններու ամբողջացումը կամ ստեղծումն է: Մեծ վանքերու բաղկացուցիչ մասերուն, զաւիթներուն եւ սեղանատուններու ճարտարապետական յորինածքին մէջ յաճախակի կերպով գործածուած խաչաձև կամարներու վրայներուն մասին խօսեցանք արդէն (ԲԱԳԻՆ, - Օգոստոս 1969, էջ՝ 65-67):

4. Յովհաննիսեանը յատկանշական կը գտնէ կառուցուածքներու կուտակումը՝ վանական քովիլիտիւններուն մէջ: «Ճարտարապետական ձեւերի կազմաւարման համար, - կ'ըսէ ան, - սովորաբար օգտագործուում են հարեւան շէնքի կանգուն պատերը, կամ յաշարման մերձ տարածութիւնները, ինչպէս օրինակ՝ Սանահնում, Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը: Յամայն առանձին կանգնած պատը հանդիսանում է կապող էլե-

մենտ (տարր - Հ. Տ.)՝ տարբեր շէնքերի համար (Սանահնիմ, Կեչառիս), որը վանքային կոմպլեքսները դարձնում է տարբեր ծաւայների մի ընդհանուր ճարտարապետական զանգուած: Այս առումով, կազմակերպուած բակ, որպէս այդպիսին, վանքերում գրեթէ գոյութիւն չունի, այլ կամ պարփակուած կամ բաց տարածութիւններ, որտեղ իշխում են վանքապատկան շէնքերը:» (Ակնարկ Հայ ճարտ. Պատմութեան, - էջ՝ 218-219):

Հասկնալի է, ուրեմն, որ վանքի մը ճարտարապետական ձևերուն ամբողջութեան գեղարուեստական ընկալումը միաժամանակ հնարաւոր չլըլլայ, քանի՛ «քոշ ծաւայներ իրար ծածկելով, տարածութեան մէջ քացուում են յաշարաբար, ստեղծելով նրանց ընկալման համար գեղատեսիլ դիրքակէտեր:» (Եոյն, էջ՝ 219): Եւ այդպէս է, - Հայկական միհենոյն վանքին իւրաքանչիւր անկիւնը տարբեր հմայք մը ունի ընդհանրապէս, որդիւնք՝ կառուցողական տարբերուելու ծուալներու իւրայատուկ դասաւորման մը: Բայց պէտք է ըսել, որ վանքերու

կարգ մը ընդհանուր տեսարաններ, անհրաժեշտ հետաւորութիւնէն ղեկուած, ծաւալներու կուտակումին մէջ իսկ՝ ակնարար են եւ ղեկարուեստական բարձր վայելք կ'աւելնեն (Հաղթատ, Սանահին, Կեչառիս, Հաղարծին, Գոշավանք և ուրիշներ)։ Այդ վայելքին մէջ կարեւոր դեր ունի նաեւ, շատ յաճախ, մեր հայրենի աշխարհին հմայիչ ղեղեցկութիւնը (Հաղթատ ու Սանահինը՝ Գուգարաց աշխարհի մարձուկներուն վրայ, Հաղարծինը՝ անտառներու մէջ կորսուած, Տաթևը՝ Որոտանի խոր կիրճին իշխող, եւայլն)։

Ինչպէս տեսանք արդէն, կարգ մը կարեւոր վանքերու գլխաւոր եկեղեցիները (Վարազ, Տաթև, Կեչառու վանք, Սանահին, Հաղթատ, եւայլն) Թ.-ՖԱ. դարերու կառուցումներ են։ Ժ. դարու ծնունդ են նաեւ սաւղին դաւիթները (կամ ժամատունները), կառուցուած սկզբնապէս՝ իբրև տոհմային դամբարաններ, գլխաւոր եկեղեցիի արեւմտեան մուտքին շուրջ։ Երբ տամարի ներքին տարածութիւնը անբաւարար ըլլար, ժամատունը կը ծառայէր նաեւ իբրև պատասպարուած կայան՝ ծիսակատարութեանց հետեւիլ ուղղակի հաւատացեալներու յաւելիալ բազմութեան համար։ Գաւիթները ծառայած են նաեւ իբրև ժողովատեղիներ։

Իրենց ճարտարապետական կառուցումով գաւիթներուն կը նմանին նաեւ սեղանատունները։ Անոնք ընդհանրապէս թառանկիւն յատակագիծ ունին, եւ լուսաւորուած են վերէն միայն՝ հազարաւէնը իրենցնող ղրբութեամբ։

Գրատուններն ալ յաճախ կը նմանին սեղանատուններուն։ Անոնք ալ լուսաւորուած են վերէն միայն, եւ համեմատաբար փոքր բացուածքով։ Պատերուն ներքին ճակատներուն մէջ կը գտնուին յատուկ խորշեր, ուր կը պետեղուէին ձեռագրերը։

Ձանգակատուններու կը հանդիպինք ժ.Գ. դարէն սկսեալ։ Իրենց վերամարմնաւորութիւնը եւ բոլորաձև սինալարքի վրայ հանդիսւած կոնսոնս վարդապետի տ-

նոնք ղեկարուեստական անշատ ամբողջութիւն մը կը կազմեն եւ ընդհանրապէս կը տիրապետեն վանական քովիլիքսին, թէևս գլխաւոր եկեղեցիի գմբէթէն աւելի վեր չեն բարձրանար։ Աւելի ուշ՝ զանազան կաթողիկէն կը սկսի բարձրանալ մերթ ժամատան (Յովհաննավանք), մերթ գրատան (Գոշավանք) վրայ։ Ժ.Գ. դարուն սկսող վերջին վերածննդեան ընթացքին է միայն, որ զանազան տունները վերստին կ'անջատուին իբրև ուրոյն կառուցուածքներ, տեղ գտնելով սովորաբար մեծ եկեղեցիներու (ոչ անպայման վանական) արեւմտեան ճակատի կողքին (Տաթևի մայր եկեղեցի, Էջմիածին, Աղթամար, Հոփսիսի, եւայլն)։

Նշենք նաեւ, որ մեծ վանքերը, իրենց հիմնական քովիլիքսին դուրս, ունեցած են նաեւ անոնքին եկեղեցիներ կամ մատուռներ։ Օրինակ՝ Կուսանաց Անապատը Հաղարտէն քիչ հեռու, Մր. Գրիգորի մատուռը՝ Կեչառու վանքին դիմաց, եւայլն։ Օժանդակ այդ շինութիւնները երբեմն կը վերածուին նաեւ, իրենց կարգին, վանական փոքր ամբողջութիւններու, ինչպէս է պարագան, օրինակ, Տաթևի Անապատին՝ Որոտանի կիրճին մէջ։

Տանք սակայն գլխաւոր կարգ մը վանքերու ճարտարապետական ամփոփ նկարագրութիւնը։

ա) Հաղթատի վանքը։ Հաղթատ եւ Սանահին վանքերը կը գտնուին Գուգարաց աշխարհի այն մասին մէջ, ուր ժ.Գ. դարերուն կը տարածուէր Տաշիր-Ձորագետի «թաղաւորութիւն»ը, ներկայ Այլրահիւրտի քաղաքէն ոչ հեռու (Լօսի)։

Այս երկու վանքերուն եւ անոնց արձանագրութիւններուն նուիրուած իր ընդարձակ մենագրութիւններուն մէջ (Սանահինի վանքը եւ նրա արձանագրութիւնները՝ Երևան, 1957, եւ «Հաղթատ», Երևան, 1963), Փրոֆ. Կարօ Ղաֆազարեան, յետ մատենագրական քննութեանց, կու գայ այն եզրակացութեան, որ Սանահինը հիմնադրուած է



Հաղրատի ընդհանուր տեսարանը

966-ին, իսկ Հաղրատը՝ անկէ տասը տարի ետք՝ 976-ին: Այս երկու վանքերու գլխաւոր եկեղեցիներուն մասին առիթուն հասած ենք խօսելու մեր «Հայկական ճարտարապետութեան վերածնունդը» ժ. - ժ.Ա. գարեբունջ յօդուածին մէջ (ԲԱԳԻՆ, 1968 Հոկտ. եւ Նոյ-մեկտ.):

Հաղրատի գլխաւոր կառուցուածքներն են, ըստ Փրոմֆ. Ղաֆազարեանի տուած նկարագրական շարքին.

1.- Սուրբ Նշան մայր եկեղեցին, կառուցուած 976-էն սկսեալ՝ Խոսրովանոյ թաղուհիի նախաձեռնութեամբ: Կառուցումը աւարտած է Հաւանաբար 991-ին: Կը կարծուի, որ Ս. Նշանը գործըն է Անիի Հռչակաւոր Տրդատ ճարտարապետին (այս կարծիքին ի նպաստ կը վկայեն ոճական յտակ նմանութիւններ եւ Յովհաննէս Ղրիմեցիի մասնագրական տեղեկութիւնները): Կը պատկանի գմբէթակիր սրահներու ճարտարապետական ընդհանուր կերպարին: Արեւելեան պատի արտաքին երեսին վրայ բացած խորշի մը մէջ գետեղուած են Բաղ-

րատունի Սմբատ եւ Գուրգէն (Կուրիկն) իշխաններու արձանները, եկեղեցիի «մաքէթ»ը բռնած: Ս. Նշան եկեղեցին ենթարկուած է մասնակի նորոգութիւններու՝ հետեւեալ Հաւանական թուականներուն, - 1188, 1221, 1655, եւ վերջապէս 1940-45 (Սովետ. Հայաստանի Յուշարձաններու Պահպանութեան Կոմիտէին կողմէ):

2.- Ս. Նշանին կից՝ մեծ գաւիթը կառ ժամատունը, կառուցուած 1208 - 1210 թուականներուն, (*) նախապէս գոյութիւն ունեցած փոքր դամբարան - դաւիթի մը տեղ եւ Հաւանօրէն անոր սրու ճասերուն օգտագործումով: Ժամատունը ուղղանկիւն-քառանկիւն դահլիճ մըն է, 21.18 մեթր չափերով, որմէ դուրս կան նաեւ կողմնակի կարգ մը աւանդատուներ: «Հաղրատի մեծ ժամատունը» հայ միջնադարեան ճարտարապե-

(*) Ճարտ. Կաստանիմ Յովհաննիսեանը, իրեն մեծ գաւիթի կառուցման քառանկ, կուտայ 1185-ը:

աւութեան գլխաւոր գործողներէն է եւ իր կառուցածքով եզակի օրինակ է ողջ միջնադարի համար», - կը գրէ Կարօ Ղաֆազարեանը: Հիմնական գեղեցկութիւնն ու արժէքը կը կայանան ծածկը բոլորովին ինքնատիպ դրութեան մէջ, երկարի խաչաձեւութեամբ կամարներով եւ կեղրոնական երդիկով (լուսամուտ): Գուրտէն, բոլորակաձեւ սիւնաշարքով, երդիկին վրայ կը բարձրանայ կաթուղիկէ մը:

3.- Գրատունը, որ օրին, իր ձեռագրերու ճոխ հաւաքածոյով, նշանաւոր է եղած: Հաղբասը ունեցած է գրչութեան իր առանձին դպրոցը: Գրատան կառուցման թուականը ստոյգ յայտնի չէ, բայց ծանօթ է, որ Մարգարէ նկարիչը այնտեղ գրած է Հաղբասի 1211 թուականի աւետարանը: Ղաֆազարեան կը խորհի, որ գրատունը ժ.Ա. դարու կառուցուածք է: Գրատան սկզբնական ծածկը եղած է փայտաշէն, բայց ժ.Գ. դարու հիմնական նորոգութեամբ՝ ան դարձած է քարաշէն, խաչաձեւութեամբ կամարներով եւ կեղրոնական լուսամուտով:

4.- Համազասպ վանսօր կամ անաղորդի կառուցել տուած առանձին ժամատունը ընդարձակ, գրեթէ զառանգուրի (չուրջ 20-20 մեթր), բայց համեմատաբար ցած (7,5 մեթր) շինութիւն մըն է, որու արեւելեան կողմը կը գրտնդի փոքր մատուռ մը: Ժամատան համեմատած՝ եկեղեցիին այսքան փոքր ըլլալուն համար է, որ շինութիւնը յաճախ նկատուած է այժմէ կեղեցական զաւեթ, այլ անկախ մէկ կառուցում (տրուած են «ժողովարան», «ճակարկ», «առճար», «թագաւորական ստեան», եւայլն առանձիններ): Համազասպաշէն ժամատունը կը կրէ կեղրոնական ցած զմբէթ մը, հանդիսէ չորս սիւներու վրայ: սիւները իրարու եւ պատերու որմնասիւններուն միացուած են կամարներու միջոցաւ: Այս ժամատունը, արձանագրութեանց համաձայն, կառուցուած է 1253 թուականին:

5.- Համազասպաշէն ժամատան եւ Ս. Նշանի միջեւ ինկած համեմատաբար

նեղ տարածութիւնը գրաւուած է փոքր գաւիթին կամ փոքր ժամատան կողմէ: Այս մասը կառուցուած է 1270-ական թուականներուն, գրատան վերակառուցման շրջանին: Իսկ գրատան միջանցքը կամ գրատան քանիը ցածադիր օժանդակ կառուցում մըն է նոյնպէս, որ կը գրաւէ Ս. Նշանի արեւելեան պատէն մինչեւ գրատան երկարող նեղ տարածութիւնը:


6.- Հաղբասի հնագոյն կառուցուածքներէն է Սուրբ Գրիգոր փոքր եկեղեցին (1025), վանքի պարիսպէն ներս՝ հարաւարեւմտեան անկիւնին մօտ, իր մէկ անկիւնով գրեթէ զպատ մեծ ժամատան հարաւային թեւին: Ս. Գրիգորը արտաքինպէս զառանկիւն է եւ ներքինպէս գրեթէ խաչաձեւ. թաղածածկ է (չուրտէն՝ երկթեք տանիքով) եւ զմբէթ լուծի:

7.- Պաթուհաշէն Սուրբ Աստուածածին մատուռը կեղրոնագրեթ զողորմիկ շինութիւն մըն է, ժ.Գ. դարէն մնացած: Կը զանուի Ս. Նշանի մեծ ժամատան հիւսիսային կողմը:

8.- Ձանգակատունը.- «Հաղբասի զանգակատունը հայկական միջնադարեան մարտաբարձութեան նշանաւոր կոթողներից մէկն է եւ իր ձեւերով ու տեսքով միակը հայկական ողջ մարտաբարձութեան մէջ», - կը գրէ Փրոֆ. Ղաֆազարեանը: Ձանգակատունը վերամարմն էր եռալարի շինութիւն մըն է, որու վրայ կը հանգչի հովհորածեւ ծածկով կաթուղիկէն՝ բոլորածեւ սիւնաշարքի մը վրայ: Ուշագրաւ են զանգակատան արտաքին պատերու անկիւնները կազմող խորշերու շքաբային զարդաքանդակները: Ձանգակատունը կառուցուած է Համազասպ տաշնորդին օրով, 1245-ին:

9.- Համազասպաշէն ժամատան հիւսիս արեւմտեան անկիւնին մօտ կը գտնուի Ուխտանց իշխանական տոմ գամբարանը, որուն վրայ կը բարձրանան ղեկաքանդակ խաչքարեր: Ամբողջութիւնը ծածկէ շեռայնաբար խաչքարեր անունով:

10.- Հաղբասի սեղանատունը կազ-



Սանահինի վանքը

մրևած է մէկ ամբողջութիւն կազմող յաջորդական երկու դահլիճներէ. դահլիճներէն իւրաքանչիւրը ունի խաչածեւ աղեղներու գրութեան մը վրայ հանդիտող գմբէթիկ մը՝ կեդրոնական յուսամուտով. դահլիճները իրարմէ պատով բաժնրւած չեն, այլ կամարակիր երկու սիւներով միայն: Սեղանատունը, Փրոֆ. Դաֆադարեանի կարծիքով, ժ.Գ. դարու գործ է: Անոր ներքին չափերն են՝ մօտաւորապէս 20.9, 25 մեթր, բարձրութիւնը՝ 8 մեթր:

11. — Հետաքրքրական շինութիւններ են նաեւ վանքի պարիսպը, եռակամար և սիւնապարզ բացուածքով աղբիւրը, կուսանաց անապատ կամ Տիրամօր փոքր եկեղեցին (հաւանաբար ժ.Գ. դարու, բայց նորոգուած 1676 թուականին՝ ըստ արձանագրութեան), Սիւն եկեղեցի կոչուած մատուռը, եւայլն: Վերջին այս շինութիւնները կ'իյնան վանքի պարիսպներէն դուրս:

Ուկեցինք տալ Հաղբատի վանքի բաւական մանրամասն նկարագրութիւնը, որը հնարաւոր էր շնորհիւ Փրոֆ. Կարօ Դաֆադարեանի արժէքաւոր մենագրութեան, իբրեւ տիպար՝ ժ.Գ. ժ.Գ. դարերու: Հայաստանի վանական քանդակագործութեան վրայ կամ պակաս չափով՝ բոլորն ալ մօտաւորապէս կը նմանին իրարու, ունենալով, ինչպէս ըսինք արդէն, զլիւտօր տաճար մը, եւ անոր շուրջ՝ տարրեր ժամանակներու կառուցուած այլ եկեղեցիներ, մատուռներ եւ ուրիշ շինութիւններ (գաւիթ, դրատուն, սեղանատուն, դամբարան, եւայլն): Կարեւոր վանքերուն մեծագոյն մասը ունեցած է պարիսպներ:

Բ) Սանահինի վանքը. — Սանահինը կը գտնուի Հաղբատէն սուղի գծով շուրջ երեք քիլոմէթր հեռու: Իր ճարտարապետական յղացքով եւ կառուցողական մանրամասնութիւններով՝ ան բաւական կը նմանի Հաղբատին:


Հետեւելով դարձեալ Փրոֆ. Ղաֆազարեանի նկարագրական շարքին, կուտանք Սանահինի վանքի դիւանոր կառուցածքները. -

1.- Աստուածածին եկեղեցին կը պատկանի դմբէթակեր սրահներու կերպարին, ներքնապէս ու ծածկով խաչածեւ: Գմբէթի թմբուկը բազմանկիւնի է, այլ բոլորակածեւ, ինչ որ ընդհանուր երեսոյթ է աշխարհագրական այդ շրջանի եկեղեցիներուն համար՝ տուեալ ժամանակաշրջանին (Հաղբատի Ս. Նշան եւ Պաթուսաչէն եկեղեցիներ, Սանահինի Աստուածածին եւ Ամենափրկիչ եկեղեցիներ, եւ այլն): Կառուցուած է Ժ. դարու առաջին կիսուն, Արաս թագաւորի օրով: Ղաֆազարեան կը խորհի, որ սկզբնական դմբէթը ունեցած է բազմանիստ թմբուկ, որ վերածուած է ներկայ

դրանաձեւ թմբուկին 1652-ի նորոգութեանց ժամանակ:

2.- Սանահինի ամենամեծ եւ դիւանոր տաճարն է՝ Ամենափրկիչ եկեղեցին, կառուցուած 966 թուականին՝ Ռոբրովանոյ թագուհիի ջանքերով: Կը պատկանի դարձեալ դմբէթակեր դահլիճներու կերպարին, Աստուածածին եկեղեցիին եւ Հաղբատի Ս. Նշանին նման՝ անկիւնային փոքր աւանդատուներով: Տաճարին արեւելեան արտաքին ճակատը մշակուած է որմնասիւնիկներով եւ խուլ կամարաշարքերով:

3.- Աստուածածնայ եկեղեցիի մեծ գաւիթը, ներքնապէս սիւնազարդ եւ եռանաւ կառուցուած է 1211 թուականին: Բնորոշ է անոր դամբարանային բնոյթը, ջանի ամբողջ յատակը ծածկուած է տապանաբարերով:



Սանսահին, - գաւիթ (ուսամկար ճարտ. վարիճակ խոյարիստի)



Մանեհիմ
Գրիգոր Մագիստրոսի նմարանը

4.- Անճափրկիչի գաւիթը կամ ժամատունը կցուած է Համանուն եկեղեցիի արեւմտեան եւ Աստուածածնայ ձեռն աւրիթի Հարաւային պատերուն: Կառուցուած է 1181-ին, Յովհաննէս առաջնորդի կողմէ: Ունի կեդրոնական շորս սրահներ, սրահը կը կրեն կլոր լուսամուտ անկեցող զճրէթ ձը:

5.- Երկու եկեղեցիներուն միջև գոյացած շուրջ է մեթր լայնք ունեցող տարածութիւնը Հետագային օժտուած է սրմամույթերու վրայ Հանդամ թաղակաղ ծածկով (ԺԱ. դար), յառաջացնելով Գրիգոր Մագիստրոսի նմարանը:

6.- Զանգակատունը աշտեղ եւս եռաշարի բարձրադիր շինութիւն ձըն է, որու զազաթին, բարձրաձեւ սրնայարջով կը բարձրանայ կաթուղիկէն: Ըստ Ղաֆաղարեանի, զանգակատունը պէտք է կառուցուած ըլլայ ԺԲ. դարու վերջերէ կամ ԺԳ. դարու սկիզբը:

7.- Մանեհիմի գրատունը կառուց-

ուած է վանական Էմիլիոսի Հիւսիսարեւելեան անկիւնին վրայ, 1063-ին: Կոչուած է նաեւ Աշխարատուն: Իր յատակազմով՝ գրատունը կանոնաւոր քառակուսի ձըն է. ծածկը, իր կեդրոնական երգիկաւոր զճրէթով, Հանդամ է որմնաքիւններու վրայ Հաստատուած խաչաձեւ կամարներու վրայ:

8.- Արտաքինապէս բոլորակաձեւ, ներքինապէս խաչաձեւ-քառասթերթ է Սուրբ Գրիգոր Լուսաւորչի փոքր մատուռը, գրատան շտա մաս, Աստուածածնայ եկեղեցիէն դէպի արեւելք: Գճրէթի թմբուկը նոյնպէս բոլորակաձեւ է: Արտաքին պատերը կը կրեն որմնաքիւններ: Ըստ Փրոֆ. Ղաֆաղարեանի, Ս. Գրիգորը ԺԱ. դարու շինութիւն է (Հաւանարար 1061), մեծապէս աւերուած եւ մեափոխուած 1652-ի Նորդուքեանց Հոսեւանջով:

9.- Մանեհիմի վանքի այլ կառուցուածքներէն՝ յիշենք տակաւին Զաւարեաններու տանիայիմ դամբարանը (տապանատուն) իր երկթեք տանիքով, գրատան Հարաւային նախարանը, եիփատունը, որ այժմ գոյութիւն չունի, վանքի աղբիւրը, Տաւտարդիի եւ Սարգիսի դամբարաններն ու Եւանուար խաչաքարը, եւ այլն:

Գ) Տաքիի վանքը.- Տաշիր-Զորպետի այդ երկու հռչակաւոր վանքերէն նաք, քանի մը իտեք նաեւ Միւնեաց աշխարհի Հոգեւորական-ձառնութային ոչնուազ Եւանուար կեդրոնին՝ Տաթևի մասին: Զանգեզուրի Հոյակաղ քնութեան վրայ իշխող այս շքանդակերտ թաղուէին աւերակներու կոչոյս ձըն է այժմ, որի թէ ամբողջովին քանդուած ըլլալով 1931-ի ձեռն երկրաշարժէն: Ժ. դարուն, սակայն, այնտեղ ապրած են շուրջ Հինգ Հարիւր վանականներ: Սեյնուքիան արշաւանքներու շրջանին բաւական աւերուած՝ Տաթևի վանքը Հիմնովին կը վերանորոգուի ԺԳ. դարուն, Հարստանալով եկեղեցական եւ ոչ-եկեղեցական յանելումներով: ԺԳ. դարուն ձեռն հռչակ ունէին Տաթևի եւ Ընտանաւորանքը, եւ Ըմանրանկարչական



Տարեի վանքի աւերակներէն մաս մը

չգրողը: Վանքը զբոսի յաւելումներ կը կրէ նաեւ ժէ. դարուն:

1.- Առաջինը կամ Չօղոս-Չտրոս ստաբ առճառքը կը զբաւէ վանական նստիպետի կեդրոնական մասը: Ան կառուցուած է վանահայր Յովնանիւսի շնորհիւ 895-896 թուականներուն: Կը պատկանէր զմբռնակիչ զոհարարներու ընդհանուր տիրութիւն, սակայն արեւելեան որմնաւորները անջատուած են պատերէն եւ կը կազմեն անկախ մոյթեր: Եկեղեցիի շարք անկիւններուն՝ կը զբաւեննէր աւանդատուներ: Տաճարի արեւմտեան կողմը, մուտքին առջեւ բարձրացող զանգակապարզ զանգակատունը շատ աւելի նոր, զբեկի է ժամանակակից կառուցում է: Գմբէթը, ներկայիս փլում, ժԱ. դարու վերակառուցման ժը արդիւնք է (անտեղ այս մասին Մեսրոպ Մաշ. Արքեպիսկոպոս Տէր Մովսիսեան, - «Հայկական երեւ մեծ վանքերի» Տարեի, Հաղարծնի եւ Գաղի եկեղեցիները եւ վանական շինութիւնները», - (Նրուստայէմ, 1938): Նայն աղբիւրէն կ'իմա-

նանք, որ Չօղոս-Չտրոս եկեղեցիին սեղ նախապէս զոյսութիւն անկում է հասարչի եւ աւելի փոքր եկեղեցի մը, իսկ 20-րդ դարու սկիզբը կառուցուած զանգակատան սեղ՝ սաճարի մուտքին եզամ է Միւնիսայ իշխաններուն եւ եղբայրացիներուն յատկացուած փոքր զանգարան-ժամատուն մը:

2.- Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, շատ աւելի փոքր, երկթեղ շամկով եւ թաղակապ ձիւնու կառուցումը մըն է, մայր սաճարի հարստային պատին կից: Առաջին անգամ կառուցուած է Փրիլիպպէ իշխանի կողմէ՝ 848-ին: 1046-ին՝ հաւանաբար փայտածածկ ուղղ եկեղեցին հրոյ ճարակ կը դառնայ, եւ Յովնանիւս եպիսկոպոսը գոյն կը վերաշինէ հիմնովին: Եկեղեցին վերաշին կը բանուի 1138-ի երկրաշարժին հետեանքով, եւ ներկայ (մինչեւ 1931) ձեւով կը կառուցուի 1295-ին միայն:

3.- ԺԱ. դարու Սուրբ Առաւուտածին փոքր եկեղեցին կը գտնուի վանքի պարիսպներէն դուրս, զլիտապ մուտքին

ժամ դանուող դամբարանին վրայ: 1931-ի երկրաշարժէն ամենաուշադէպ փերով ազդուած շինութիւնն է: Տակաւին 1962-ին՝ կանգուն էր իր հովհարածն զեղեցիկ զմբէթը, թէև բաւական վնասուած, ու վտանգաւոր ճեղքերով:

4.- Տաթևի ու-ճուռազ ծանօթ յուշարձաններէն է՝ իր տեսակին մէջ միակը համարուող ճոճուող սիւնը, կիսա-կնդածնէ յատկով՝ հաստատուած քարէ ցողաւոր սալի վրայ:

5.- Կեդրոնական դուռ եկեղեցական շինութիւնները (որոնց վրայ ատենօք կ'իջիէր Պօղոս-Պետրոս եկեղեցիի լայնահաս եւ բարձրադիր զմբէթը) զբեթէ ամէն կողմէ շրջապատուած են օժանդակ, ու-եկեղեցական կառուցումներով, - սրահ-գաւիթ, սեղանատուն, տունիք ու դարանի կողմէ սենեակները, խուցերը, բազմաբանները, անտեսական շինութիւնները (միթհանք, հնձան, խոհանոց, եւայլն): Եւրոպական աղ շինութիւնները կարեւոր մասով մը կ'եղերեն Որոտանի անդնդախոր ձորը: Տեսակ մը ամրոց-մանր է Տաթևը, իր կարերու մեծագոյն մասով անմասելի է անտարիկ:



Գեղարդ, - վիմափար տաճարներէն մէկը


Տաթևի վանքին ենթակայ օժանդակ շինութիւններ են եղած Որոտանի ախին դանուող Մեծ Անապատ ու Հարանց Անապատ վանքերը, Պօղոս-Պետրոս մատուռը, եւայլն:

Գ.- Գեղարդ կամ Այրիվանք - Երեւանէն շուրջ 40 քիլոմէթր դէպի արեւելք, ժայռոտ լեռներու զրկին մէջ, կը զբոսնենք Հայաստանի միջնադարեան վանական քաղաքներու ամէնէն լաւ պահպանուածներէն մէկը՝ Նշանուոր Այրիվանքը կամ Գեղարդի վանքը (այսպէս կոչուած, քանի, ըստ անանդութեան, հոն պահուած է Գրիգորոսի կողը մարմնուած Սուրբ Գեղարդը):

1.- Գեղարդի մայր տաճարը (կարողիկէ եկեղեցի) կառուցուած է Չաքարեաններու օրով, 1215 թուականին: Ուշաձեւ կեդրոնազմբէթ կառուցուածք մըն է ան, չորս անկիւններուն՝ երկյարկ խորաններով: Ուշազբաւ են եկեղեցիի արտաքին քանդակները՝ մեծ նրբութեամբ մշակուած:



Գօշավանք (Լուսավար ճարտ. Վաղինակ Խաչատրեանի)



Գեղարդ կամ Այրիվանք, - ընդհանուր տեսարան
(Լուսանկար Յարու. Վաղինակ Խաչատրյանի) .

2.- Արևմտեան ճակատին կից կը գտնենք ջրառակուսի գաւիթը՝ բաւական ընդարձակ, կտր չորս սիւներու վրայ հանդիշող կեղբոնազմբէթ եւ չթաքարային զարդարանդակներով օժտուած ծածկով:

3.- Այրիվանքը մասնաւոր կերպով նշանաւոր է սակայն իր վիմափոր մասով, որ մէկ կողմով կու գայ միանալ գաւիթին: Այնտեղ, ապառաժներու մէջ փորուած, կը գտնենք Պոօշեան իշխաններու տեմալիսն շքեղ դամբարանը, ամբողջովին ջանդակազարդ որմերով, խաչածեւած աղեղներու դրուեթեամբ (բայց միշտ վիմափոր) Աստուածածին եկեղեցին (1282), այլ դամբարաններ եւ բողմաթիւ ժայռափոր սենեակներ ու խուցեր:

Վիմափոր մասէն ներս թէ դուրսը, կը գտնուին կարեւոր թուով խաչարեր, մէկը միւսէն աւելի նորը ու տպաւորիչ:

4.- Եկեղեցական յուշարձաններու խոճար արեւելեան եւ հարաւային կողմերէն շրջապատուած է խուցերու շար-

քով, որոնք ուշ շրջանի կառուցումներ են:

Ե.- Մշոյ Սուրբ Կարապետի կամ Դլակայ կամ Իճնակեան վանք.- Արեւելեան Հայաստանի Հռչակաւոր այս շորս վանքերէն ետք, կ'արժէ դադար մը ունենալ նաեւ Արևմտեան Հայաստանի սշնուազ կարեւոր վանական քովի-լեհաներէն՝ «Մշոյ Սուրբան» Սուրբ Կարապետի կամ Դլակայ վանքին մասին: Սուրբ Կարապետը երկար ատեն է վեր գոհ դացած է թուրքերու ճարտարակոտական եղեռնին. Տարօնի աշխարհի հոգևոր ու մշակութային մեծարժէք այլ կեղբոնը այսօր չկայ: Մեր տեղեկութիւնները կը հիմնուին Սահակ Մ. Վարդապետ Աստուածատուրեանի հրատարակած յատակագծին եւ Հայր Համազասպ Ռսկեանի «Տարօն-Տարուքերանի վանքերը» աշխատութեան վրայ:

Սուրբ Կարապետը «Ենոի է ի Մշոյ եօթն կամ յութ ժամաւ յարեւմալուս երեսիտայ, կառուցեալ է կողաց լեքին Քարէտայ ի դիր վայրի, եւ երեստայ իր

ուճելով գրեթե և յարմարից եւ յա-
յնուսից գայլ եւս բարձունս կամ գօտիս
նայն լերին եւ ի հարաւոյ այլեւայլ ճո-
րամիջով տարակացեալ ի դաշտէն Մշոյ»
(Հ.Ս.Սարգիսեան, «Տեղագրութիւնք»):

Հայաստանի ամենահին վանքերէն է
Սուրբ Կարապետը, աւանդութեան եւ
Ձեներ Գլխի վկայութեան համաձայն՝
հաւանորար Լուսաւորչալէն: Պարզ է
սակայն, եւ այդպէս ուլ կը վկայեն անոր
զմբէթներու եւ յատկազօժային ժան-
րամանութիւնները, — որ ներկայ (ժին-
չեւ 1915) Բովիլեօր ուշ միջնազարին
ամբողջացած կառուցում մըն է: Գծաբա-
նարար զանազան տաճարներու եւ ժա-
սերու կառուցման ստոյգ թուականները
կը պակսին:

Վանքը եղած է ընդարձակ: Չայն ե-
ղբած են, դրեթէ տմէն կողմէ, ոչ-կրօ-
նական զանազան շինութիւններ, հաւա-
նարար ուշ շրջանի (վանականներու եւ
ժողովրդեան յատկացուած խոյցեր, ա-
ռաշնորդարան, գպրոց, եւայլն): Ամ-
բողջութիւնը առնուած է պարիսպներու
մէջ:

Չուս կրօնական-եկեղեցական Բովի-
լեօր կը գրուէ բակին կեդրոնական մա-
րը: Ան ալ իր կարգին կը կազմէ մէկ ամ-
բողջութիւն՝ առնուած արտաքին ընդհա-
նուր պատերու մէջ, թէեւ ներքնապէս
բարդ է եւ կազմուած՝ իրարու կից բազ-
մաթիւ մատուռներէ եւ այլ բաժիններէ:
Ինչ որ պարագայարար կ'ընէինք Արեւել-
եան Հայաստանի վանքերուն կապակցու-
թեամբ — միեւնոյն պատի օղտազործ-
մամբ՝ իրարու կից ասրբեր ծասերու
կառուցում — ընդհանուր երեւոյթ է
Սուրբ Կարապետի եկեղեցական կեդրո-
նական Բովիլեօսի պարագային:


1.— Արեւմտեան միակ մուտքին,
չէնքի մարմնէն դուրս յառաջացած գա-
լիքամամ փոքր փակ շինութեան մը
մըայ, կը բարձրանայ զանգալատունը,
իւր սիւնակիր կաթողիկէով (երկյարկ,
խկ ամբողջութեան մէջ՝ եռայարկ):

2.— Փոքր դաւիթէն ներս անցնելով,
կը մտնենք բուսական ընդարձակ (չուրջ
12-12 մեթր) սրահ մը, որը Հայր Հ. Ու-



Գեղարդ կամ Այրիվանք
գլխաւոր եկեղեցին

կեան կը կոչէ ճմեծ կամ տաւա տաճար,
սժտուած չորս շարքով 16 սիւներու
վրայ հանգչող կամարապատ առաստա-
ղով մը, ու զմեթակիր: Հակառակ ա-
նոր, որ այս սրահի արեւելեան կողմը
կը գտնենք երեք խորաններ (կեդրոնա-
կանը՝ աւագ խորան Սուրբ Խաչի, մեր
աջին՝ Ս. Գրիգոր Լուսաւորի ձեղանը,
եւ ձախին՝ Ս. Յակոբայ սեղանը), ինչ
որ անոր կու տայ իսկական տաճարի
քնոյթ, անոր սիւնազարդ ամբողջու-
թիւնը, ինչպէս նաեւ Մամիկոնեաններու
տունմային դամբարանին եւ թոռնիկ իւ-
լսանի, Մուշեղ Մամիկոնեանի եւ ուրիշ-
ներու զերեզմաններուն այնտեղ գտնուի-
լը ենթադրելու հու տան, որ սրահը, զէթ
սկզբնապէս, կառուցուած է իբրեւ ծա-
մատուն կամ գաւիթ: Բազմաշարք սիւ-
ներով անդամթ եկեղեցիներ չկան հայ-
կական ճարտարապետութեան մեղի ծա-
նօթ տիպարներուն մէջ, Յայց այդ կա-
սոյցը բաւական կը մօտենայ արեւելեան



Հագարձիճի վանքը

Հայաստանի մեծ եւ սիւնազարդ ժամատուներու կերպարին: Ուրանները կրնան հետազայ յարմարեցումներ կամ յաւելումներ ըլլալ, ինչպէս պարագայաբար եղած է նաեւ արեւելեան Հայաստանի կարգ մը գաւիթներու զարագային:

3.— Աւագ սեղանին երկու կողմերը գտնուող դռներէն՝ կը մտնենք իրարու կից երկու փոքր տաճարներէ ներս: Աւագողմեան տաճարը Սուրբ Կարապետի մատուռն է, կամ, ըստ Հ. Հ. Ռսկեանի, «Սուրբ Կարապետի գերեզմանը կամ վկայարանը», որ ժամէնէն հիմ շէնքը կը համարուի: Չախակողմեան տաճարը՝ Սուրբ Ստեփաննոսն է: Երկուքն ալ զբմբռէթակիք են, — Ս. Կարապետը՝ համեմատաբար փոքր եւ ընդերկայնական յատկագծով, կը պատկանի գմբէթակիք սրահի կերպարին. Ս. Ստեփաննոսը խաչաձեւ կեդրոնագմբէթ կառուցուածք ունի, անկիւնային աւանդատուներով:


4.— Այսքանով՝ մեծ սրահին եւ երկու տաճարներուն ամբողջութիւնը պիտի կազմէր գրեթէ կառարեսու քառան-

կիւնի մը, ինչ որ ենթադրել կու տայ, որ քամփլեփին մաս կազմող միւս երկու սկիզբիցիները — աջակողմեան Սուրբ Գէորգը եւ ձախակողմեան Սուրբ Աստուածածինը հետազայ յաւելումներ են: Երկուքն ալ անգմբէթ թաղակապ սրահներ են: Սուրբ Աստուածածինը օժտուած է գաւիթով մը, ուր կարելի է մտնել գլխաւոր սրահէն:

Իսկ Ս. Կարապետի եւ Ս. Գէորգի մատուռներուն միջեւ կ'իյնայ արեւմտաֆէն արեւելք երկարող նեղ անցք մը, որ գործածուած է իբրեւ նզնարան:

❖

Միջնադարեան Հայաստանի գլխաւոր կարգ մը վանքերուն այս հսկիւրճ նկարագրութիւնը չի սպառեր անշուշտ մեւերու եւ քամփլեփիստներու այլազանութիւնն ու ճոխութիւնը: Ան զաղափար մը միայն կու տայ վանական խմբաբաժաններու ներքին ընդհանուր գոտաւորման եւ հիմնական կառուցումներու տեսակին եւ դերին մասին: Հնարաւոր է՝



Ստդուսավանք



Յ. Վան Գրեկի Կիչաուս վանքի ընդհանուր տեսարանը

նման սահմանափակ քննութեան մը ընթացքին անդրադառնալ գլխաւոր բոլոր վանքերուն, քանի միջնադարեան Հայաստանի վանական կեդրոններու անուններու թուումն իսկ կրնայ տասնեակներով էջեր լեցնել: Հաղարծին, Գօշավանք, Հոռոմոս կամ Ուռավանք, Կեչառուք, Սաղմոսավանք, Օհաննավանք, Մակարավանք, Գլաձոր, Հաօխճավանք, Վարդ, Աղթամար, Սուրբ Յակոբ, Թովմաս աստաբալի վանք, Նարեկայ վանք, Առաքելոց վանք, Վանդիր, Կարմիր վանք, Եւայլն - եղած են հոգեւոր եւ մշակութային կեանքի անուանի կեդրոններ, յիշատակած ըլլալու համար ամէնէն անուանիները միայն: Վանական այլապէս կեդրոններու ստեղծումը կամ ամբողջացումը, անոնց ճոխացումը, հա-

րստացումը, միջնադարեան խաւարին եւ քաղաքական ամենասնկատու ալալմաններու մէջ այդ կեդրոններու առկաթումը՝ իրրեւ հայկական բազմադարեան քաղաքակրթութեան եւ մշակութի վառարաններ, անոնց պարսպապատումը, որ զանոնք կը վերածնէր արտաքին աշխարհէն կտրուած եւ թշնամիներու յարձակումներէն որոշ չափով պաշտպանուած հոգեւորական ամբողջներու, - այս բոլորը կը կազմեն ԺԲ-ԺԳ դարերու հայկական ճարտարապետութեան եւ քաղաքակրթութեան ամէնէն բնորոշիչ բաղկանիշներէն մէկը:

Նաեւ յստակ արտայայտութիւնը՝ Հայ Ժողովուրդի ինքնապաշտպանութեան բնազդին, անոր ստեղծու, տեւելու, յաւերժանալու կամքին:

Հ. Տ.

(Շար. 2 և վերջ)





ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՋԱԼՈՅՍԸ

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ՍԱՍՈՒՆԱԿԱՆ)

(ՍՈՄՈՆ ՍԻՄՈՆԻԱՆ)

ՊԵՂՈՒՔ - 1968

Միմե Միմեան է կե սասուցի, որովհետեւ սասուցի է միայն ի հորէ: Աւելի ճիշդը՝ է քսուորդ սասուցի, որովհետեւ ի ժօրէ սասուցի չի չիւլի զատ, ծնած ու ազգած է Յասուցի զ Երս, էքրքրաւ մարտս: (Մայրիկը աշխարհէ):

Բայց այս քսուորդ սասուցիին՝ էր ճիւղմա-կանկրու վերջալոյսը: զերգով ճգտած է ըլլալ ամբողջական Սասուցի: Եւ պէտք է խոստովանիլ, որ յաջողած է եւ յաջողած է յաջթականորէն: Այսուհետեւ թո՛ղ Աստուած պահէ զինքը սասուցական սրբութեան մէջ, անսայթաք յարանէ՛ք սրտքով սասուցական, ի մի յան՝ սասուցականամբ, որ մեր ըմբռնածով, ակմբռնած է ստաղծութեան, սրբութեան եւ Հայութեան:

Եւ այսպէս, ընդունի զովական օրհնութիւնը էր հոր, ինչպէս նաեւ բոլոր սասուցի վարչական Հայրերուն, որոնք ընդմիջու հեռացած են այս հակասասուն, զամեն աշխարհէն:

Սասուցիները իրենց ծննդավայր զինդերէն զորս (ժանաւորապէս Հալալայ քաղաքին մէջն ու չուրջը) եղած են նախնական զարեասէրերը կամ զարեասէրները հանապազօրեայ Հայրին: Ծնած են փոսպան կամ ջողացպան: Բանած ու բաշխած են Յիսուսի մարմինը, համադամ հասցը, մասլով արդար ու Հայ, նման Հայրի:

Երանի՛ր անոնց, որոնք հաղորդուած են սասուցիներու հետ, բարձրացնելով աստիճանալափը իրենց Հայութեան: Ինչպէս որ Քրիստոսի փառաքինները կը բուժուէին, հիւանդ Հայութիւն ունեցողներն ալ պէտք է Հպին սասուցիներուն, յանուն ազգային առողջութեան: Կան նաեւ բուժարար եւ առողջարար Տարօղիք, ինչպէս Սուէտիացիները, ներկայիս քարծած Այնեարցի:

Ծայտնուեցան Սասուցիներ ալ, թի՛ սր-ասասուհմանի, թի՛ Հայրենիքի մէջ, որոնք մեզի սկսած բաշխել յանձնական հարցեր, սարքելով գր-բական Հայկերոյթներ, պարզելով պայծառ երեւոյթներ սրբախալի: Անոնցմէ է Միմե Միմեան, որ չոյս ընծայեց հիանալի հասարակ (թի՛ արտաքուստ, թի՛ մանաւանդ ներքուստ), վե-ժանի ու ողբերգական վերջալոյսը, վերնաշա-ւառի մը ընդհանրուն, որոնք Հանդիսարար են Հայութեան արժեքները, յաւէտ պանծողի:

Միմեան իր արքամատեսանը ձօնած է էր ողբացեալ Հայրիկին, սապէս:

- «Հօրս՝ ջողացպան Օվէին Սանոյ կերթաւ (Աւերմ) զիւրջն: Հայկ նահապետի պէտ ան-սառ ու ըմբռստ մարդուն, որուն կը պարտի՛ այս պատմութեանքը՝ արհեստ էտք»:

Մենք՝ ընթերցողներս ալ մեր զբական վա-թիւք կը պարտինք ջողացպան Օվէին: Բիւրիցս օրհնեալ են, լուսափունները Սասուցի, ըլլան ան-յայտ կամ յայանի: Լոյսը ընդմիջու խաղայ անոնց հոգիներուն մէջ, որոնք արքանութիւնն եղան լուսոյ, որ աղասութիւնն է ու արգարութիւնը եւ եղբայրութիւնը, երեքն ալ որք ի հօրէ եւ ի մօրէ: Որքան ասին որ Սասուցը, յափշտակուած սրբութիւնը, կը պատկանի վիշապներու, վան-տաններու, վամբրիներու:

Մեզի կը մտնէ մասեաններ, զիրքեր յիւ-տակաց, անէն վերջալոյսներ, որոնցմէ է ճՕ-վէի աղայ Միմոյթի երկը:

Կու տանք զիրքին պատմութեանքին քանի մը տիպարներ ուրուպիներով միայն, ներկա-յացնելու համար խոնարհ գծուածքը Սասուցի: Անոնք իրենց սարքին վարքաբարբին հակառակ, կը ման աշխարհ համակրելի, համարելի:

Յարժանային Վենճ վերնագրով պատճառներն ճշել, որ քրոջս ն, մեծանուն պէս, ուղարկէ կնակին, ինչ ներկայացուին երկու ստանդարտներ. մին միտեր լայնը նկրտելին, միւրը միտեր կարգադրելն Աւեր. երկուսն ալ ճաշակից աւ զազագորակէն, որոնց Վենճ ճշել ստանդ ճանկու, կու ստանդ ստանդին մասնակներն աւ զարդարակերը:

Հայր Օմէն հողին հրահանուած է մեծագործ պէսն ճաշել, եւ սու թէ ինչէ՛ր կ'ընէ իր սրտինը, ճանմանակից կայերուն:

- Դրեկ համառ չունիք: Է՛ր ինչն ինչ: Նամուով Հայ իսկի՛ շինողայ: Անփերպէնիւ է կու... Քարգուց ինչ հայ մարդ իրուանց լայնը ծիծաղու:

Հոսքը երեսուն տարի լէ ինչպստմ: Եւ իրուանց լի սարքով ներքէ կայուն որ ինչպայ, այլ անմարտիկաց իսկի՛րին ճաշել. եւ անպատիւ կ'անուանէ այն կայերը, որոնք ինչպայու սիրա ունին:

Ինչ շարունակէ.
- Զերթուար ինչու մնն կտորում, կոխ քերէ նրին, Հայ ուրք պրին մահուց, իսկի՛ լայնը ինչայ, կոսի ճիւղ ուր սան, ինչպ զո մասնակուց նին... Մտազոլ մարդ համասով լնչին:

Նշանուար նշանորուն է, պատուական պատկերն աւ պատկերը:

- Ձեռքեր մտնանք:

Պարկէու Հայը պէնք չէ մտնայ:

Դոբարտարար, շատեր մտայն:

Յուկան, շահը, շուայուսթիւնը շատերուն մտայնին, շատերուն մէջ կայը մտայնին, մտայնին բարոյայն:

Հայր Օմէն կ'ստէ թուրքը, արգարտրին կ'ստէ շինակները, սասանները, այսինքն ճարպագի կեթանու զրիտանանները, որոնք պաշտանակա նշին շրին, արգիւնու համար ցեղասպանութիւնը: Աշին շինէ զստ, վարձատրեցին թուրքը:

Օմէն կը շահի:

- Փուլու է՞, զբիկ ինան (երկէ մարդ) լիք, Դրեկ Հայպու աղլաքէ իր... է՞ ո լէ կննկու զորն է:

Կ'ստէ ինչ որ եւրոպայուն է, մինչեւ սեղամ կնկարական լայնը:

Աւ կ'աջոթէ:

- Ես՛ բարի լուս ևստուած, ստեղծեցիք շինակն եւ զերկէ... Մուս Կուսթան Սուրբ Կու

բարեմ, ողոս նիս զ'ընթ Կտանու շարին...

Ան թէ ինչ կ'ընէ, իր ուրք փոփոքով էրք իր սան մէջ կը զնտկուի լայն կնկարական:

- Դրեկ մէ կայ համառ չունիք... է՞ լուս կայու լը: Երկ նինկուս ինքն է: Ստանին կէ (կայ) է՞ լուսու մէջ: Կտանին է՞ լուսու հետ մասն ըմ սան... Հարամ երկն ճիւղ կայ ուրք է՞ ի ուրք...

(Հայր Օմէն զորնց զուտուն լըբան է եւ ընտանեաց փոխարկուած են Հայկուն Պէրսթ եւ ճարտին լուրջպարե կ'ուան կայը իր զուտակներուն):

Աւ կը հետանայ սանին, նոր զնտկուած լայն Ստանին: Կ'ուստանին իր կարգադրելին մաս: Երեք որ ճաշը կը վերադառնայ զնտուարու:

Այս զարդարակներուն եւ մասնակներուն անզնկանով՛ զուցէ սմանք կարենն կարծեացան լիտազիմակուն մը կայ Օմէն: Հուտարար, շատերին համարուի ճուտն, ինչպէս ստուարակ այլ բաւով կ'արահուին Ստանիցէն աւ ճարտիցէ: Բայց ստանց էլիտազիմակները եւ ճուտութիւնը կը բրին իրենց կայութիւնն ստարազիմակին: Անոր զլիտազի մուտք են, եւ իրենց ճուտութիւնը լիտազիմակին է անգրադանցելի: Դիտանք որ էլիտազի աւ ճարտիւնը կայուն են զիկան կւ սպանորէ արտրեւրով, մինչդեռ ճուտնը կարկուտ են, իրենց ստարազիմակներով, նաեւ զտարազիմակներով, կայուն են կնտելի: ճիտակներին աւ ճարտարակներին հարուազի կերպով լան մը զուտն կու զայ: Ինչ որ կու զայ զուտն, զրամն է ու կը կրկնեք հարուազի կերպով: Մինչդեռ հարազտանները, հանճարեղները, կերտաները կ'ընին ճուտներին:

Եթէ իրապէս աւ եղեպականորէն ճուտ լան մը կայ, սն ալ ալիտարն է, որ ճուտ կը թուալէ, որուն կնիտները ճուտ են, նմարեքը իարգախուտ են, նոյնիկ իր զրիտանանները անասուտ են:

Հայր Օմէն ունեցած է միայն մէկ աւ մեծ միտանութիւն: Հրեկ մը կարծած է հրեշտակ, գայլ մը՝ գառանց կովի, քորինի մը՝ բարեբար: Թայն է ունեցած ճարուն, հանճարեղ կայր աւ ստարազիմակ Ստանին ճիւղ: Հուտան է՛ թէ մաղը ինկան մարդը կը փոթթուի ճարտիկ անին Դրե-

բախտութեան ուղիներու ինկած Օգէն ալ պըլ-
լուած է վիշապին:

Ուրիշ պատմուածք մը... Էծոսի ՀԷ՛րս Ունընս,
որուն ներսն է Քեոթ Օւան, անշուշտ սասունցի:
Կատարեալ տիպար մը, որ բարիացած է Աս-
տուծոյ, և անոր արգիւտն է իջնել երկիր, իսկ
ինք որչափ է միշտ մնալ երկրի վրայ, իրբեւ
անտ ու անտան: Գերագոյն գիտ մը, որուն կի-
նը, Վանուհի, իր կողմէ պատուաւն է, և իրմէ
մանչ զաւակ մը ունենալով հանդերձ, կը չի
ամեն ինչ ու մէկու մը միացած, կը փախի
Պաղատա: Ատեն մը ետքը կը զոյճայ կիներ, ու
համակ մը գրեւով առաջնորդարանը հաշտուի, կը
իծուի ամուսնին ներդրութիւն և վերամիւ-
թիւն: Քահանան կը թելադրէ Քեոթ Օւանին, որ
բրիտանական ըլլալ ներդրամի և ընդունի
մայրեալ նշան: Գիշ կը մնայ որ Տէր Պապան
ազգաստի Քեոթ Օւանին կողմէ, որ ոչ միայն
անկերպ է, այլ մասնաւոր է զաշուանաբիլ գա-
ւաճանունին:

Քեոթ Օւան պատերազմ յայտարարած է Աս-
տուծոյ դէմ, որ թէն և չի փարկիք ինչի աշ-
խարհ, սակայն ունի երկրի վրայ յափնչներ,
երեք տեսակի. - կիները, զորավար Անդրանիկի
հետևորդները և զինկիլիզները, այսինքն անգ-
լիացիք:

Կ'ստէ կիները. պատճառը պարզ է: Ինչ
բնական է, բացառութիւն մը սասունցիներու
մէջ: (Երկրորդ բացառութիւն մը հակաբիւստ
կանն է): Քեոթ Օւան ամենուն բնոր կը ստանի,
բացի կիներուն պատկանող բնակիչ:

Իսկ Անդրանիկին համար կ'ըսէ.
- Անդրանիկ չէ՛ք (չկայ), բայց կէ՛ք (կայ)
անգրանկութիւն: Ուր ճշտը կ'ան: (Եր զաւակները
կան): Այսինքն Անդրանիկ թէն Թեոսն է, բայց
հետևորդներ ունի:

Անա թէ ի՛նչ ըսելով կ'ամբաստանէ Անդրա-
նիկը.

- Անդրանիկ, ձեր երկիր արք չէ՛ք, ձոր
չէ՛ք, ի՛նչ ուղիներ մընէ: Ծաղիկ էք, ձեր
երկիր ծաղիկէք: Կարիւն էք, ձեր երկիր կտրու-
թիւն էնէք: Ընդ մըք մըք յեղափոխութիւն ար-
վեցնելու: Մըք (մեք) ձեր պապերուց օրէն,
մըք թոխումն (սերմ, սերունդ) կուտայ ենք,
սուշանի անէլ վիզ ինչ Թոէ...
և այլն:

Երբորք թշնամի (անգլիացիք) տեսլու ան-
տան իրաւունք և իմաստութիւն ունի Քեոթ Օ-

ւան, այս գերագոյն գիտը, որ քարուած է թի՛
թարգէն, թէ՛ Հայտունիէն, որ երեսուն տարու
պատիկ է իրմէ:

Այս տիպարը ունի եղբրական երգիծական
խորք, կամայ ակամայ:

Կ'ըլլայ զրեթէ հարիւրամեայ, Մելս աշխա-
տելով: Իր տղան հետ կ'ապրի խանի մը խուցին
մէջ, որ պատուհան իսկ չունի, որ գերեզման է
ողնորու:

Մտակնդէք է իր վերջին օրուան գիշերը:
Կ'ունենայ երեք այցելու: Մասունցի հրեշտակ
բժիշկը՝ ոչբացեալ Տոթթ. Գարեգին Նիկոնան,
սասունցի քահանայ մը և սասունուհի մը, այս
երբորգութիւնը շարժի. իր տղան հրաւերե-
րուն:

Անա երբորք մը, միշտ հաղի քանի մը ուր-
ապիծով: Հարկ է կարգաւ, տեսնելու տիպար-
ները ամբողջութեամբ ու անլուծելի:

Երկին Արթին անէր է վեց զաւակի: Գրախ-
տարար, վեցն ալ աղջիկ են: Մտնը մը չունենա-
լը աղէտ է: Մտնըն է որ պիտի շարունակուի
անժամանակը: Մտնը չունեցողը մնացած է առանց
զահամառանգի, Մտնը փրկութիւն է, հարա-
տութիւն է: Իսկ այդքան աղջիկ ունենալը աղէտ
է ամօթալի: Երկին Արթինի կինը Եթնորդ
անգամ ըլլալով՝ մնացած է յիշի: Եթն Եթն-
բորդ զաւակն ալ աղջիկ ըլլալ, Երկին Արթին,
վճար է զարնել կ'ա՛մ կիներ, կ'ա՛մ ինքզինքը:
Եթնորդը ալ կու գայ աշխարհ՝ աղջիկ: Սա-
սունցիներու մէջ այս երեսոյթը այնքան անու-
վոր է, որ կը սկսին կասկածիլ Երկին Արթինի
հարազատ սասունցի ըլլալուն մասին: Կը պնդեն
ազգածուին արմատները, սակայն քննութիւնը
ցոյց կու տայ, որ Երկին Արթին է իրապէս սա-
սունցի:

Բայց Երկին Արթին, հակառակ յուզումնե-
րուն, սապնակներուն, սուսայտանքներուն, ո՛չ
ինքզինքը կը սպաննէ, ոչ ալ իր կիներ, որ լա-
ւաղին կը խնդրէ ամուսնին, որպէսզի զարու-
հահարուի, ինքզինքը համարելով յանցաւոր ան-
ներելի:

Սասունցի Արթին ջրիտանէարար կ'ըսէ.

- Եւտնու ամբն էք:

Ապա, կ'ունենայ ութերորդ զաւակ մը, նաև
իններորդ մը, վերջնութեան ալ, վերջինն ալ յա-
մատօնն աղջիկ: Ատնու ամբն էք...
Ներկայացնենք պատմուածք մըն ալ... Եթն՝
Մեծի. Երկրորդ Սահակը, ու վերջացնենք տի-

պարկերը տալու շարքը (որովհետև հրահանգանոցին նոր զինազարմած, ինչպէս որ դժուար կը լինէր, կ'ընդունէ կորսնցուցած ենք մեր միւս լուսնն ալ) :

Բերլինացի էր Սահակ: Բերլինը մօտ է Մարթուզի: Սոր սրբազան, որ իր վրայ ունի մասուն, ու դարձած էր ուխտատեղի:

Սահակ յափշտակուած էր Մարթուզի դեղնութնամբ: Իսկ Սահակ ինք այնքան զեղեցիկ էր, որ կարծէք ըլլաք Աստղիկ ու Վահագնի մոտեցնէն ծնած սրղի, որով պիտի զեղուհիներն ալ յափշտակուած էին իրմով:

Հովիւ ու արնաւար Սահակ կը նշանուի պիղծն ամենէն զեղեցիկին հետ:

Բայց կը պայտի պատերազմը, ու ազնանքուն գերազոյնը կը հարուածէ Հայութիւնը, առանց մտնալու Քառանցիները, որոնց կը զարնէ հարուանք լախտի:

Եւ զիցորդի յման գեղեցիկ Սահակը, զարնըւած բազմաթիւ արհարէ ու լախտերէ, ինչպէս նաեւ տարազորութեան արտան Տառապանքն, Փնդիքապէս կը լաւափոխուի ու կը վերածուի ամենէն խեղճաւ, ամենէն խեղճ, ամենէն ազգ մարդոցմէ մեկուն աշխարհի: Կը կոչուի Թափալ Սահակ:

Անուանան էր փախչի գոթեղէն, կ'իջնայ Հայնպ, կ'ըլլայ փուպան, եւայն: Աղբերգութիւնը չի թողուր այս հրահանգութիւններով հարուանալ զժամախն օճիքը...

Բերլինացի Սահակը կը յիշեցնէ իտալական զրոյց մը:

Նկարէլ մը կը փափագի նկարել Յիսուսը, ու կ'որոնէ լուսազէմ, որբազեղ երիտասարդ մը, իբրեւ տկար, նկարելու, ներկայացնելու համար Աստուածորդին: Կը գտնէ փետուածը, որ զեղեցիկութիւն մըն է սքանչելի:

Կ'անցնին տարիներ: Նայն նկարէն այս անգամ կ'ուզէ նկարել Իսկարիոժուացի Յուզան: Երկար որոնումներէ ետքը, կը գտնէ չարագիւտակ զէմ մը, ամբողջովին յարմար Յուզայի: Ան կը նկարէ: Եւ կը յայտնուի որ Յուզայի տկար անձը, Նոյն այն անձն է, որ տարիներ առաջ տկարը եղած էր Յիսուսի: Տարիներ ու ասուպանքներ այնքան շարափոխած էին զինքը, որ յիսուսազէմը դարձած էր յուզայազէմ:

Զարհուրելի զուլումին զարկերը՝ բերլինացի խելացորոզ գեղեցիկութիւնը վերածած էր իւրը՝ հուկ խելակէ:

Եւայն, եւայն:

Այս գիրքը էր զրական տնտեսական արժեքն զատ, հո՞ր է իր տուած տեղեկութիւններով, Սասնոյ եւ Սասունցիներու մասին: Զարմանքով տեղեկացանք, որ Սասունը ունեցած է երեքուհարիւր գիւղ: Անի պահպանուած պարեր, որոնց զլիտարիները կը կոչուին Կովրնու, Կարաօն, մասնաւոր մարտապարը՝ Ծարխուլտա: Իրենց բարբառը կը կոչուի օտուանցեակ, իսկ զրական աշխարհաբարը կ'անուանեն զըբարբո, ճիշտ պարսկերէններուն պէս: Թէ պանդխտութեան մէջ ալ կը հազնի իրենց տարազը, արհամարհանքով մեքժելով եւրոպական զգեստը: Վերջապէս, կը պահեն ինչ որ սասունական է: Ձեն անիւր իրենց պիտերը, որոնք կարծէք զինանշաններն են տանականութեան:

Սասունցիներէն ոճանք, պանդխտութեան մէջ, առուելապէս ի Սուրբա, նաեւ Լիրանան, արդար հացով կը հարստանան մասամբ ու արդարօրէն: Ետտեղ, օսկայն, սասունական սրբութեամբ կը զստան վերաւոր ու խելագարած արիւններ, քաղաքներու զառապեղներուն մէջ, զրկուած բարձունքներէ: Ամենէն բոխտուարները եղան անոնք, որոնք զահողութիւններու զնով ակմբուկցան լանջերուն վրայ Արազանի: Լըծանցան շինարար, հայրենական աշխատանքի: Եւ փայլեցան զանազան ապագեղներու մէջ:

×

Գիրքին երկրորդ մասը կը կոչուի ՇՊԱՆՄԵՒԱԾԷ՛ պատմութիւնը Մասին: Այս շարքով կը տեղեկանանք պատմութեան հերոսներուն կեանքին լրացուցիչ մասերուն, անոնց սրատյոյզ վախճաններուն եւ ասկանի ուրիշ կտորներու, որոնք կ'ընծայեն խիճ ու խանդ եւ երգ ու երգիծանք:

Երկրորդ մասն ալ անտարակոյտ աստուանալուսն է, ու կ'երկարի Հայնպէն, Պէլլութին միջին Արազան, նորիսմէ միջին Բալխոնիս:

×

Անինք քանի մը մանր գիտողութիւններ: Նախընտրելի պիտի ըլլաք, որ պատմութեան ներքեւ վերնազիւր ունենային անանները զլիտար գերակատարներուն, իրենց տեղադրութեամբ: Գանդէ անոնք ապրած մարդիկ են, եւ

Արագածի փչչերուն փարած Սասունցիները ստեղծեցին Նոր Սասուն մը, քիչերուն խումբով, միշտ երազելով բուն Սասունը, ձգտելով հնամեայ Սասունին, վերապրելով յաւերժեանքին Սասունը:

Հայութեան մնացորդներէն, սեղանանութիւնն հոնք ալ, ամէնէն զաժան ճակատագիրը ունեցան Սասունցիները, Տարուհիները եւ Մուսասաղցիները, որոնք սպրնացան Նոր հաւատակութիւններ, բախտն շարաւար զարեւած, զոհեր աւելով ողջ կամ մեռելով: Եւ սակայն, անոնց մնացորդացը կրցան կանգնել սոգի, ու սասուպիւղի եւ սոցիւղի՝ ստեղծեց Հայկական հրաշքը, վերաշինութեամբ, հողամշակութիւնով, նաև Նոր հերոսութեամբ եւ ժաւառնակի մատուցանութիւնով: Եղան սասուպանցի մէջ անկուն եւ մնաց յաւիճ հայ:

Իրաւունք ունի Սիմոնեան, երբ կը հաւատայ, թէ բոլոր արտասահմանեան Հայերուն հանելին հոգը, պիտի մնան Սասունցիները հայ: Նոյնը կ'անելոյնիմ Մուսասաղցի-Այնճարցիներուն համար:

Բայց իրաւունք չունի Սիմոնեան, երբ երկու անգամ կը յայտարարէ, թէ Սասունցիները միայն հեռաւոր աղջականութիւն մը ունին Հայոց հետ:

Փոխանակ ըսելու՝ թէ Սասունցիք, թունդողիները Դասիթի ու Մէրի, գերագոյն Հայերն են: Փոխանակ ըսելու՝ թէ Սասունցիները (եւ անոնց նմանները) հարազատ, հաւատարիմ Հայերն են Հայութեան: Միւս սեղացի Հայերէն շատերուն վերապրելով հեռացումը իրենց ազգականութեան, ջանք որ անոնց մէջ մահամերձ է Հայութիւնը, կամ անհուսոյն՝ վերաւոր:

×

«Լեռնակամներու վերջալոյսը» գրութիւն է ընդհատ-ընդհատ, զսան տարիներու ընթացքին, եւ Եժդեհ Սասունցիներէն ամէնէն յատկանշական ախպարներուն ճշմարիտ կենսագրութիւնները կը պարունակէ, ապրուած հեղեթներու շրջանակներուն մէջ:

Սասունցիներ, որոնք կ'ամ սապալած սիւներ են, կամ սիւնակացներ: Իրենց սիւնը Սասունն է: Ողբացեալ Տոգթ. Գարեգին Երէցեանի «Երեսնաշարիի Գոյամարտը» գիրքը բանական սիւն մըն է, կարո Սասունիի «Սոմքերտ Ալամը» կեդրոնական սիւն, եւ ահա Սիմոնեանի «Լեռնակամներու վերջալոյսը» երբորդ սիւն:

Սիւներու այս երբորդութեան ներքեւ, սրտասահմանեան մեր յիւած գրողներուն կողմէ սարքուած են սրբատեղաններ, ճաշակելու եւ արբենելու համար, յիսուսակերպ, զրիտոսընտիր ժողովուրդի մը ժաւառով ու արեւմբ, այսինքն հացով ու դիմիով, երկուքն ալ անպատեւի:

Ներկայ հատուց յաւէտ հոտուէտ հաց է, նոր նկանակ սաթ, որով թարմ, կլած սասուհական ժաւային փուռէ, ու միւսներուն նման հազարգութիւն, որ կը բաշխուի բոլորին, համայն Հայութեան:

Առէ՛ք, կերէ՛ք այս հացիւրը, յանուն հզօրութեան, արբէք ի սմանէ: Որպէստէ ասպուհարէք Տասուպանքը:

Այս հացիքէն ու այս զինիներէն զրկուողը, ճշմարիտ կ'ըսեմ, պակասուր է, իրրեւ հայ:

ՆՇԱՆ ՊԷՇԵԿԻՍՅԱՆԵՆ

Վիլնամուրը, 1909 Մայիս

Կղմարներ

ԱՐՏՕՆԵԱԼ ՈՒ ԱՀԱՐԿՈՒ ԽՄԲԱԳԻՐՆԵՐ...

Օգոստոս ամսուն, լրագրական զործակալութիւններուն ու միջազգային մամուլին համար ընդարձակ նիւթ եղաւ ուսւ գրադէտ Անաթոլի Կուզնեցովի պարագան, որ կամովին հրաժարեցաւ խորհրդային քաղաքացիութենէն եւ ապաստանեցաւ Անգլիա:

Ստալինի մահով եւ ստալինականութիւնը ընաշնչելու մտքով խորհրդային սահմաններուն մէջ ծաւալած հետապայ տարիներու բարենշան պայթարները խոստացուած «միւնհայր» իրականութիւն չգարծուցին եւ հին բարքերու ամբարտախոս ստացակոյտը շարունակեց անընդմէջ սոսոկցնել մարդոց արիւնը:

Ճիշդ է, Փիզիքական հաշուեյարդարները նախին համեմատութեամբ տեղի չեն ունենար հիմա խորհրդային աշխարհին մէջ, բայց, Լենինի օրերէն սկսեալ, մտուորականութեան դէմ կազմակերպած համայնավարներուն հոգեկան սպանդը դեռ կը շարունակուի ապշեցուցիչ հետեւողականութեամբ մը:

Ստալինի մահէն ետք, «համեմատական ազատութեան շրջան» համարուած վերջին տասնամեակին միայն, աւելի քան տասը գրողներ են թարկուեցան հին օրերը յիշեցնող հոգեկան այդ սպանդին: Ընթերցողին յիշողութիւնը թարմացնելու համար յիշենք անունները՝ - Պորիս Փասթերնաք, Անարէ Մինեպսկի, Եուրի Տանիւլ, Սոլժենիցին, Անարէ Վոզնեսենսկի, Վալերի Թարսիս, Ալեքսանդր Կինզպուրկին ու իր չորս ընկերները, Նասիմ Օտնուպոզով, Անարէ Ամալարիք, Անաթոլի Կուզնեցով եւ ուրիշներ, որոնք յաջողաբար ծունկի բերուեցան, դատուեցան, աքսորուեցան, քաղաքացիական իրաւունքներէ զրկուեցան, կամ զազատութիւնը ընտրեցին», միջոց նոյն պատճառով, հայրենիքին մէջ ազատօրէն խորհելու եւ արտայայտուելու «մեղքին» համար, գրուածքը մկրատող, այլասերող խմբագիր կամ գրաքննիչ կոչուած արտօնեալ ու անարկու բարակներէն ձերբազատուելու բաղձանքին համար:

Համայնավար գրաքննիչներու եւ խմբագիրներու առաջացուցած ճշգրտաւնջը տարածուած է նոյնպէս այլ հանրապետութիւններու սահմաններէն ներս, ընդ որս եւ մէր կոտորին տակ: Գիշ անդին Կուզնեցովի արձակ յայտարարածը, մեր բանաստեղծները արտայայտած են ոտանաւորով: Ահա հաւաստիկ կրկու նմոյշները-

Եթէ որոշ տեղերում	Դարեր կ'անցնեն, կ'ապրի ոգին
Մի քիչ տաք մարտ է ծորել,	Կնանկով խնդագին,
Այդ էլ ես չեմ յանցաւոր,	Եւ չի դիպչի մէկ իսկ տղիդ
Խմբագիրներս եմ արել:	Ոչ մի խմբագիր:
ԽՍՀՄԿ ԳԱՇՏԵՆՑ	ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՄԻ

«Մի քիչ տեղերում եւ արիւնք-տաճարադէպ մղձաւանջ եւ ջուր մի խմբագիր» ամէնօրեալ եւ այրող կարօտ...

Մեր յաջող համարով, աւելի լայն ծաւալի մը վրայ, պիտի տանք Կուզնեցովի կատարած նոր յայտնութիւնները:

**ԿՈՒՋՆԵՑՈՎ
ԻՆՉՈՐԻ ՓԱԽԱԻ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹԵՆԵՆ**

•
ՎՐՈՒՍԻԱ ՄԻՇՏ ԱԼ՝ՀԱԼԱԾԱԾ,
ԳԱՏԱԾ ԿԱՍ ՍՊԱՆՆԱԾ Է ԻՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ԿՐԱԳԵՏՆԵՐԸ



•
Իմ բացատրութիւնը, պիտի ըստէ որ դժուար է հասկնալ ինչո՞ւ հեղինակ մը, որուն գիրքերը կը ծախուին միլիոններով, որ ծայր աստիճան ծաղովորական ու բարգաւառ է իր երկրին մէջ, պիտի որոշէր յանկարծ չվերադառնալ այն երկիրը, գալ երբեք չէ դադրած սիրելի:

Որոշումիս գլխաւոր պատճառը յայտն կորուստն է. պարզապէ՛ս չեմ կրնար աւելի երկար ապրիլ հոն: Այս գրացումը իմ կամէն աւելի գորտար է:

Պարզապէ՛ս չեմ կրնար շարունակել աւելի երկար ապրիլ հոն: Եթէ ստիպուած ըլլայի կրկին ապրիլ հարկադարձի միութեան մէջ, պիտի խնայեմ:

Եթէ գրագէտ չըլլայի, բերնա յաջողի տակալ: Բայց գրագէտ եմ: Չեմ կրնար: Գրելը միակ բանն է աշխարհիս մէջ, որուն համար կը զգամ խորունկ կեչում մը: Երբ կը գրեմ, այն պատրանքը կ'ունենամ, որ կեանքս որոշ իմաստ մը ունի: Չգրել՝ ինձի համար նայնը պիտի ըլլար, ինչ որ պիտի ըլլար չլողալը ձուկի մը համար: Կը գրեմ վազուց: Ատաշին գիրքս հրատարակուեցաւ 25 տարի առաջ: Այդ 25 տարիներու ընթացքին, գիրքներս ոչ մէկը տպուեցաւ հարկադարձի միութեան մէջ այնպէս՝ ինչպէս գրած էի գտնում:

ՂՆԴՈՒՆԻԿԻ ԿԱՐԳԱՆՕՍՆԵՐ ԵՒ ՏԱՐԱԾԵՆԻ ԶԱՆՈՆԻՔ

Քաղաքական պատճառներով գրաբնիշխանը եւ հրատարակիչները կտրատեցին, այլափոխեցին եւ այլասերեցին գրութիւններս, գանձեմք անճանաչելի դարձնելու աստիճան: Եւ կամ ալ բալորովից արգիլեցին անոնց հրատարակութիւնը: Մանկութեան օրերէն սկսած՝ միշտ ապրած եմ յոյսով: Բայց գիրքերուս իրաւանջիւրիմ երեսունը ինծի համար ուրախութեան պատճառ մը ըլլալէ աւելի՝ եղած է նոր ցաւ մը: Անձեմ կը դառնային այնքան կեղծ, այնքան տգեղ, այնքան վիժած, որ կ'ամչնայի մարդոց երեսը նայելու:

Լաւ գիրք մը գրել հորհրդային Միութեան մէջ, տակաւին ամէնէն զիւրքն բանն է: Իսկական դժուարութիւնները կը սկսին յետոյ, երբ կը փորձես գրածդ հրատարակութեան տալ:

Անցած տասը տարիներու ընթացքին, տեսիլստեղծ մարտիկայ անխուսափելի, անյաղթանակելի հակաութեան մը մէջ: Վերջ ի վերջոյ ստիպուեցայ հրատարակել:

Վերջին պատմութեամբ՝ «Կրակը» գրեցի, սիրտս պարզուած որեւէ գեղարուեստ, առանց հաւատքի եւ առանց յայտի: Սկիզբէն գիտէի, ստոյգ գիտակցութեամբ, թէ ա՛յն պարագային, երբ գայն հրատարակելիմ, անկէ անգթօրէն պիտի յայտաւերն ա՛յն՝ ինչ որ մարդկային բնույթ կրնար ունենալ եւ լուսագոյն պարագային պիտի դառնար տեսակ մը արտադրութիւն՝ սննդային գրականութեան: Եւ արդարեւ, պատահածն ալ ճիշդ այդ եղաւ: Հասած էի կէտի մը, ուր ո՛չ կրնայի գրել, ո՛չ բնանալ, ո՛չ ալ շնչել...

Ինչ որ կարեւոր է գրականութեան մէջ, նորութիւնն է, այն բանը, որ ինքնուրոյն է: Գրագէտ մը նախ եւ առաջ աբսուտագէտ մըն է, որ կը փորձէ ներխուժել անձանօթէն ներս: Պէտք է պարկեշտ եւ առարկայական ըլլայ, եւ ի վիճակի՝ իր ստեղծագործական աշխատանքը ազատօրէն կատարելու: Անուսակի ցայտուն նշմարտութիւններ:

Ու ճիշդ այս է, որ մերժուած է խորհրդային գրողներուն:

Պետրոսեանական ազատութիւնը, հորհրդային Միութեան մէջ՝ վերածուած է խորհրդային դաւաճանքի եւ համայնավար կուսակցութեան փառաբանութիւն հիւսելու ազատութեան, ինչպէս նաեւ մարդիկը մղելու, որպէսզի պայքարին համայնավարութեան համար: Ասոր տեսական ելիւք, յօդուած մըն է, զոր Լենին գրեց վաթսու մտարի առաջ՝ «Կուսակցութեան կազմակերպութեան եւ կուսակցութեան գրականութեան» մասին, որ կը յայտարարէ, թէ իրաւանջիւր գրող պէտք է կուսակցութեան փրփակականը ընէ: Գրողին աշխատանքը կը կայանայ կուսակցութեանն ստացուած հրամաններն ու կարգախօսները տարածելուն մէջ:

Այս կը նշանակէ, թէ Ռուսիոյ մէջ, գրագէտները կը գտնուին հետեւեալ երկրնորսանքին առջեւ...

Պարզապէս յամնուիլ հետեւեալ ապուշութեան - ընդունիլ, որ իրենց խելքը եւ իրենց խիղճը չմիջամտեն իրենց արարքներուն: Եթէ Ստալին կը փառաբանուի, փառաբանեցէ՛ք Ստալինը: Եթէ մարդոց հրամայուի, որ եզրիպատարներն տնկեն, գրեցէ՛ք եզրիպատարներն մասին: Եթէ կ'ամբաստանեն Ստալինը իր ռեփրենբուս համար, ամբաստանեցէ՛ք Ստալինը: Եւ երբ կը դադրին գայն բնագրատելէ, դուք ալ դադրեցուցէ՛ք բնագրատութիւնը:

Բազմաթիւ խորհրդային գրագետներ կան, որ այսպէս են: Բայց կեանքի նշարտութիւնը պիտի չնքնէ մարդու մը, որ կը բռնաբարէ իր խիղճը: Այդ գրագետները դարձած են մտքի շնական հաշմանդամներ, եւ այն քա՛հուն ցար, որ կ'առաջանայ իրենց փնացուցած տաղանգին պատմաաւ՛ ա՛յն աստիճան կը կրծէ զիրենք, որ իրենց ոգրալի գոյութիւնը արժանի չէ կեանք կոչուելու, այլ կեանքին ծագրանկարը: Դժուար պիտի ըլլար երեւակայնի աւելի գէշ պատիժ մը, քան այն մէկը, որ կը կայանայ կեանք մը ապրի վախճն դողալով, փորձել երկչոտութեամբ լաւ ըմբռնել վերջին հրահանգներու իմաստը, սարսափելով ամենէն պոտիկ սլալէն: Ո՛հ. Աստուած իմ:

Լաւ գրել, տաղանգին ու խղճին քեղադրածին պէս գրել, ոչինչ կը նշանակէ հոն: Այդ պայմաններով գրուած գիրք մը երբեք պիտի չհրատարակուի, այլ պարզապէս պիտի քաղուի: Ասոր արդիւնքը կրնայ նոյնիսկ ըլլալ հեղինակին փիզիքական հաշուեյարդարը: Տխուր է մտածել, որ Ռուսիան այս մարզին մէջ ունի հաստատուն եւ հին աւանդութիւններ: Իր լաւագոյն հեղինակները միշտ ալ հաղածուեցան, քաշուեցան դասարաններու առջեւ, սպաննուեցան կամ անձնապաշտութեան մղուեցան:

Փորձել պարկեշտօրէն գրել, «կարելիութեան սահմանին մէջ»: Ընտրել ոչ-վտանգաւար միութիւն: Դիմել այլարանութիւններու: Փնտրել ու գտնել գրաքննութեան նեղքերը: Տարածել ձեր գրութիւնները, ձեռագիրի ձեւին մէջ ձեռքէ ձեռք, (բայց ոչ մէկ հակախորհրդային զազափար քաջալ տալ, այլապէս անմիջապէս կը ձերբակալուիք):

Ես այս երբորդ նամբան ընտրողներէն էի: Բայց իմ պարագայիս այս ալ չչաջողեցաւ: Գրաքննիչները միշտ ալ ուզած են զիս ծուռիկ բերել:

Իմ մտահոգութիւնս, որ իմ գրածներէս բան մը փրկել էր, որպէսզի անկէ մաս մը հասնի ընթերցողին, ա՛յն արդիւնքը ունեցաւ, որ իմ հրատարակած գրութիւններս ո՛չ ամբողջովին իրական եւ անկեղծ գրականութեան կը պատկանէին, ոչ ալ ամբողջովին արեւմտաբնիլի էին, այլ երկուքին միջեւ բան մը: Անոնք տեսակ մը անիրական արտադրութիւններ էին, գրաքննութեան եւ հեղինակի մը խղճին միջեւ գոյացած համաձայնութեան մը արդիւնքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱԿԱԿՇՈՒՈՒԱԾ ՏԳԷՏ ԵՒ ՍԻՆԻՔ ՄԱՐԴՈՅ ԿՈՂՄԷ

Ինչ որ ալ ըլլար բարձրացուցած բողոքս, կամ փաստը, գոր կը փորձէի բերել որոշ կէտի մը շուրջ, գլուխս կարծես միշտ կը գաղնուէր պատի մը: Խորհրդ. Միութեան մէջ գրականութիւնը կը գտնուի հակակշիռն տակ այն մարդոց, որոնք տղտ են, սիմիք եւ ըզլորովին օտար գրական արուեստին: Միւս կողմէ, անոնք լաւ ծանօթ են բարձրաստիճան մարդոց հրահանգներուն եւ կուսակցութեան ամենագոր վարդապետութիւններուն:

Ես չչաջողեցայ խորտակել անոնց պատեղը: Եւտուշէնքօ քիչ մը յաջողեցաւ, Սուլժեքիցին՝ քիչ մը աւելի, բայց նայնիսկ այս նեղքը վերջ գտած է այսօր: Ճեզքերը նրեւան հանուեցան եւ անմիջապէս գոցուեցան: Ինչ որ գրագետները կը շարունակեն գրել եւ բան մը յուսալ: Ասիկա մզմաւանջ մըն է:

Այսպես՝ քառարդ դար երազեցի խորհրդային գրողի մը համար անհասկնալի բաներու կանոնաւոր դրութիւն մը. կարելիութիւնը ունենալ գրելու եւ հրատարակելու առանց սեղմումի եւ առանց վախի: Զվտարել անձնական ներշնչումը իբր անժամանակ, չմտածել կուսակցութեան հրահանգներուն, հրատարակչներուն եւ գրախնայիչներուն, որոնք նշանակուած են կառավարութեան կողմէ: Զոյրալ ամէն անգամ որ մէկը զուարթ գործէ: Ստիպուած չլլալ փռս մը փորել հողին մէջ՝ հան թագելու համար ձեռագիրները, նայնիսկ մելանը տակաւին չչորցած:

Ո՛հ, քանի՛ փոսեր փորած եմ, անոնց ծագին թաղելու համար անուշեղենի շիշերու մէջ լեցուած վտանգաւոր կամ կասկածելի ձեռագիրներ: Զանազան չէի կրնար պահել գրասենեակիս մէջ, որովհետեւ, ամէն անգամ որ բացակայէի, կրնային յարկարածիմիս դուռը բռնարարել, խուզարկութիւն ընել եւ ձեռագիրներս գրաւել, ինչպէս պատահեցաւ Սոլժենիցինի եւ շատ մը ռաբիշներու: Գրասեղանս, իրականութեան մէջ, գորցցներ չունէր: Ինտասկան հողը իմ գրասեղանս ու իմ ապաւեճս էր միանգամայն:

Իմ մէջս, երբեմն, կ'առաջանար մոլորեցնող խնդրութիւն մը, — հրատարակուած տեսնել իմ երկերը այնպէս, ինչպէս գրած էի գտնումք: Կը փափակէի գունէ՛ր անգամ մը այդպէս տեսնել երկերս: Այնուհետեւ ինձի հետ կրնային վարուիլ իրենց ուզածին պէս: Այդ իմաստով, միշտ է, ես հիւանդ մարդ մըն եմ, խելացար մը:

1937-ին, Ստալինի իշխանութեան օրօք, երբ դեռ հազիւ տղակ մըն էի, ակնառանտ եղայ գիրքերու երկիզման: Գիրքերու երկիզման մը տեսած էի մահու 1942 թուականին, գրաման տակ գտնուող Կիևի մէջ, Հիթլերի իշխանութեան օրօք: ... Հիմա որ ես ձգած եմ խորհրդային Միութիւնը, սարակոյտ չկայ, թէ իմ գիրքերը եւս պիտի ոչնչացուին հան, երկիզման: Հշարտութիւնը այն է սակայն, որ ես կ'աղօթեմ, որ իմ հրատարակած գիրքերէն մինչեւ յետին գրութիւնը փնտրուին այնտեղ: Վառնգի անունք այն չեմ, ինչ որ իրապէս գրած եմ ու փափաքած հազարդել ընթերցողին: Վերջին հաշուով, ստիկա կը նշանակէ, թէ այդ գիրքերը իմս չեն: Ես կը հրաժարիմ անոնցմէ:

ԿՈՒՋՆԵՑՈՎ ԱՆՊԱՐԿԵՇՏ, ՎԱՏ ԵՒ ՅԱՐՄԱՐՈՂ ԳՐԱԳԷՏ ՄԸՆ Է

Եւ ակա: Հոս կը յայտարարեմ ամբողջ աշխարհի եւ վերջնականօրէն, թէ կ'ուրանամ այն բոլոր գրութիւններս, որ հրատարակուած են խորհրդային Միութեան եւ արտասահմանի մէջ, նայնպէս եւ խորհրդային հրատարակութիւններու օրինակներէն կատարուած թարգմանութիւնները, որ լայտ տեսած են կուզեցով անունին տակ:

Պաշտօնապէս կը յայտարարեմ, որ կուզեցով անպարկեշտ, յարմարող եւ վատ հեղինակ մըն էր: Ես կը հրաժարիմ այդ անունէն:

Կուզեմ վերջապէս դառնալ պարկեշտ մարդ մը եւ պարկեշտ գրագետ մը: Ինչ որ պիտի հրատարակեմ այս օրէն սկսեալ՝ պիտի կրէ «Ա. Ա. Նաթան» անունը: Զեզմէ կը խնդրեմ, որ միայն այս անունով հրատարակուած գիրքերը նկատէի իբր իմ հեղինակութիւններս:

Ի՞նչ կը յուսամ: Վերջին տարիներուն, ատեն-ատեն խնամով կը

կողմի դուռնու եւ կը վայելէի մտքի խնձոյժ մը, կը գրէի ինչ որ համեմատէր ինձի: Ասիկա տարօրինակ եւ ցուտտանջ փորձառութիւն մըն էր: Կարծէք, աշխարհի մը մէջ, ուր ամէն ոք կը քալէ չորս թաթերու վրայ, մէկը, արգելափակուած մտանքի մը մէջ, կը կանգնէր սրունքներուն ու կը քալէր ուղղահարկ:

Եւ յետոյ, քանի մը ամիս առաջ, ետէն համեցի ձեռագիրներս, լուսանկարեցի ու կրկին թաղեցի: Յաջողեցայ ստեղծելն անցընել այդ ժապաւենները, հազարաւոր էջեր փիլմերու վրայ, ինչ որ գրած եմ ամբողջ կենսակիս ընթացքին: Հոն կը գտնուին իմ անծանօթ գործերս, ինչպէս «Պայի Ետր»-ը, իր հարազատ ու անազարտ ձեւին մէջ, բաներ՝ գորս չէր կրնար հրատարակել Ռուսիոյ մէջ, եւ ուրիշներ, որոնց մասին յաճախ ինքզինքիս հարց կու տայի, թէ պիտի կարենա՞մ արդեօք օր մը հրատարակել գանձեմ Արեւմուտքի մէջ: Բայց եիմա գոնէ ունիմ յայտը: Առնը-ւազն...

Ամէն պարագայի մէջ, ասոնք Կուզնեցովի գործերը չեն, այլ բոլորովին տարբեր հեղինակի մը: Ո՛չ խորհրդային հեղինակ մը եւ ոչ արեւմուտքի հեղինակ մը, այլ պարզապէս հեղինակ մը, որ կ'ապրի այս 20-րդ դարուն, երկրիս վրայ: Ասիկն, հեղինակ մը, որ յուսահատակուն ճիգ մը ըրաւ, ըլլալու համար այս դարուս մէջ պարկեշտ գրող մը, որ կ'ուզէ միանալ սնունց, որոնք կը տնջին բամ մը բերելու համար մարդկութեան այս խեղճ, խեղճ, խեղճ աշխարհի վայրագ, վայրագ, վայրագ կեանքին:

Ա. ԱՆՆՔՈՒ





Մ Ի Տ Ք Պ Ա Հ Ե Ց Է Ք ...



Պարզապակե վերնագրի մը սակ արուած դիմացի էջը առնուած է Կոստան Զարեանի մասին գրուած յօդուածէ մը, որ լոյս տեսաւ «Սովետական գրականութիւն» ամսագրի այս տարուան Մայիսի թիւին մէջ եւ կը կրէ Ալլաքրա Կոստանեանի ստորագրութիւնը:

Ալլաքրա Կոստանեան:

Մեզի շատ ծանօթ չէ այս անունը, մի քանի անգամ միայն նանդիպտած ենք իր ստորագրութեան, զեկուցումի պէս գրութեան մը տիթիով եւ մէկ-երկու անգամ գրախօսականներու ժողով, բայց բնաւ ստիպած չէր մեզ կանգ առնել իր էջերուն մօտ: Կոստան Զարեանի մասին գրած յօդուածին, առելի ճիշդը հանձնարարութեամբ ու բիրտագացութեամբ կողմնակի մտքերուն ու ընդհանրացումներուն առիթով գրուեց առաջին անգամ մեր ուշադրութիւնը, իսկ երկրորդ անգամ «Գրական քերթ»-ի 15 Օգոստոսի թիւին մէջ «Թուամեանի փառքը» խորագիրը կրող իր կարծ գրութեամբ:

Աւելորդ է ըսել անշուշտ, թէ «Թուամեանի փառք»-ին մէջ կատարուած հաստատումները իրեն չափ չեն խանգարուածը մեզ: Համտարած ու արժանաւոր համակրանք մը վայելող երախտալատ Լուսինն իրական հանձնարներու հետ համեմատելու է հանձնարեց զիդու՞մը՝ շարքային թմաղատներու մօտ զիս հասկրեալի մեղանշում է, բայց ճաշակի, խորացումի ու բիրտագացումի վճռական փաստեր սուսած Կոստանեանի գրութիւններուն մէջ յերեւի շուայութիւն չէ:



Յամենայնդէպ, սոցիալիստական իրապաշտութեան սահմանափակ շրջանակէն դուրս եկած ու բարդ, դժուարեմտաց, լայնատարած ու բոլորովին զարտուղի դէմքերուն վաստակը պեղելու եւ անոնց հակառակ արժանիքները կարկանդակու ճշմարիտ քննադատի մը ճշմարիտ յատկութիւնները յայտնաբերող այս անձը րեւիք ունի, բնկու պերճ մեւ մը ունի, միտք պահեցէջ անունը, - Ալլաքրա Կոստանեան...

... ՓՈՐՁԱՐԱՐԸ ՅԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆՆ ԷՐ

Երբուտից Օտևանը, Հին սերնդի մեծ երգիծարանը, արգէն նոր պայմաններում ուրուաւորում է «Հայ դիասպորան»: Յակոբ Օշականը, Կոստան Զարեանի մեծ սերնդակիցը, ձեռնարկում է դարաշրջանային յղացումով օժտուած «Միացորդաց» փկալաւորը: Սփիւռքի առաջին գրական սերունդն է կազմաւորում ու ձեւակերպում իր մտայնութիւնը:

Հետաքրքրական է յիշատակել այդ ձգտման երկու գրասերութեանը: Ամերիկահայ գրող դարձած Համաստեղը տպուիւում է իր մանկութեան զգայնութեանը ու իր ծննդավայր զիւղի վերստեղծման պտտկերը դարձնում իր աշխարհազոտողութեան հիմքը: Ճրանասահայ գրող դարձած Ծահան Եանուրը գրում է. «Նտեանը առանց երգի» խօսուն վերնագրով վէպը, բացայայտելով կորած սերնդի ճակատագիրը: Իրութեան դիտակցումը ի վերջոյ յանգեցնում է ճիշդի համախմբման:

Կոստան Զարեանը էսէի վարպետ է: Քսանական թուականներէ նրա ստեղծագործութեան հիմնական ժանրն է հասէն:

Մի ֆոթիթով Կոստան Զարեանը գրել է. «Երբեք չեմ կարողացել հասկանալ, քէ ինչու մեծ երաժիշտներն իսկ աներածիշտ եմ համարում սիմֆոնիան կամ անատը, վերջակէտի մնան, կրկնուող ակորդներով վերջացրին: Կիսնքի մէջ վերջակէտ չկայ, չկայ նաեւ մեր յազումների մէջ»:

Թուում է, թէ այս միտքը ժանրային ըմբռնման բանալի կարող է ծառայել Հեղինակի հասէները քննելիս:

Էսէի ժանրի մշակման արեւմտասահայական տրադիցիան կարելի է յանգեցնել Եղիա Տեմիրճիպաշեանի ստեղծագործութեանը, նրանում արձանագրելով ժանրի, այսօրուայ հասկացողութեամբ, առաջին նուաճումները Հայ գրականութեան մէջ:

Յաջորդ էսէիստը Տիրան Զրաքեանն է: Եղիայից ու իրապաշտներից ծնուած ու գրանով իսկ իր սերնդի մէջ առանձնատուկ տեղ գրաւած այս Հեղինակը կատարեց երկրորդ նշանակալից քայլը զէպի ժամանակակից գրականութիւնը: Նա իրագործեց Եղիայի կոահումը, որ ընդամէնը սաղմնային դադար էր:

Եղիան ու Ինարան իրենց սերունդների փորձարարներն էին: Կոստան Զարեանի սերնդի փորձարարը Յակոբ Օշականն էր, որին փճակուած էր անկու երբորդ մեծ քայլը Տեմիրճիպաշեանից ու Զրաքեանից յետոյ: Արեւստապէտներէ այս եռակը, իլիւա Էհրեմպուրկի խօսքով ասած, գրողներ են գրողների համար, պայմանով, որ նրանց փորձի արդիւնքը իւրացում եւ մատուցում է ընթերցողին բնականոն դարձած գրելակերպով:

Կոստան Զարեանը մեծ ընդգրկումների Հեղինակ է: Նրա իւրաքանչէր ստեղծագործութիւն Հայոց կիանքի ճակատագրական ժամանակաշրջանի ու մտայնութեան արձագանքն ու արդիւնքն է: Այս իմաստով Կոստան Զարեանը մեր նորագոյն գրականութեան սկզբնաւորողներից է, որի տեղը Յակոբ Օշականի՝ սփիւռքահայ գրականութեան առաջին մեծ գրողի եւ Եղիշէ Զարեանի՝ սովետահայ գրականութեան առաջին մեծ գրողի, միջև է: Եւ «Նաւը լիբան վրայ» վէպը նոյն իմաստով ձայնակցում է Օշականի «Միացորդաց»-ին եւ Զարեանի «Երկիր Նայիրի»-ին:

ԱԼՊԵՐՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՈՐՈ՞Ւ ՀԱՄԱՐ...

«Հայաստան» Հրատարակչութեան ղեղարուեստական գրականութեան խմբագրութեան վարիչ՝ Լևոն Մկրտչեանի գրչին կը պատկանի ղեմացի էջին արուած գրութիւնը, որ կազմուած է Հրատարակչութեան ներքին կառուցին ոչ մի իրարական կողմերը թուող ընդարձակ ամբողջէ մը մէկ-տեղուած հատուածներէ:

Մտացաւութեամբ խմբագրուած Միբիջնեանի այս գրութիւնը լոյս տեսաւ «Գրական թերթ»-ի ընթացիկ տարուան 14 Մարտի թիւին մէջ եւ իր կատարած արտաճանաչումներով արդի բերան ձգեց բոլոր շահագրգիռները:

Յօդուածագրին թուած բազմազան պատճառներուն հետեւանքով՝ «լոյս չեն տեսել տպարաններում գտնուող մի քանի տասնեակ վեպ, վիպակ, բանաստեղծական եւ գրականագիտական ժողովածուներ»:

Կ'ըսուի, թէ 1968 թուականին համար նախատեսուած 1.100 մամուլէն 335 մամուլ զրականութիւնը հատորներու վերածուած չէ եւ ըստ առաջ քշուած տուեալներուն, պատկան խմբագրութիւնը մեղք չունի հոս: Մնացեալ մասին, կենսագործուած 745 մամուլին առիթով, նորէն անմեղ կարելի՞ է հռչակել արգեօք գեղարուեստական գրականութեան բաժնի խմբագիրները: Կը թուի, թէ ոչ: Մեր կարծիքով, հարկ եղած խղճատուութեամբ չէ տնտեսուած նաեւ հարցին այս հրեւը եւ աւելորդ շաշուութիւններով շատ բան մտնուած է տպագրական մեր սուղ միջոցներէն, որոնց պատասխանատուութեանէն կարելի չէ այս անգամ ազատ կացուցանել իրմբազիրի պաշտօն վարողները: «Հայաստան» Հրատարակչութիւնը, օրինակ, իր պլանը 335 մամուլով թերակատարած այդ նոյն տարին (1968), լոյս ընծայեց Միւլիա Կապուտիկեանի «Եւրոպայի մշակութային ժողովածուն», որ եղածին պէս աւելորդ է, մտնում, գէշ տնտեսութեան մը գէ՛շ նշանը պարզապէս: Այդ ժողովածուն կը բաղկանայ 135 քերթուածներէ, որոնք, բացի մէկէն («Կիւիլի շագամակնիները տակ»), բոլորն ալ կը գտնուին սղիղ երկու տարի առաջ լոյս ընծայուած նոյն բանաստեղծին «Սօթը կայարաններ» խորագրուած հատորին մէջ:

Արդ, որո՞ւ համար կը Հրատարակուի այս նոր հատորը, երբ նոյն բովանդակութիւնը ունեցող նախորդը անգտանելի չէ դեռ: Երբ այսքան արգելքներու հետ նաեւ քիչ նախանձախնդրութիւն կը մատնենք մեր սուղ միջոցներուն հանդէպ, այլեւս «մեր պահանջներուն» մնացած ձեռագիրներուն համար արտաքին արգելքներու թւումով չենք կրնար բաւարարուիլ, այլ պարտաւոր ենք հաշուի նստիլ նաեւ ներքին խմբագիրներու հետ:

Գուցէ Միւլիա Կապուտիկեան այժառ ունի «Հոնորար»ի, պիտի ազդի: Ասոր դէմ եղող չկայ, բայց սպրեւու աւելի արդար ձեւը կայ: «Հայաստան» Հրատարակչութիւնը կրնար, օրինակ՝ «Եւրոպայ» հատորին փոխարէն Հրատարակել ուրիշի մը էջը, մեռած հեղինակի մը գործը, դասական գէ՛մքի մը մատենանը եւ «Հոնորար» սոսլ Ս. Կապուտիկեանին: Ս. Կապուտիկեան այդ ձեւով կրնար նորէն ապրիլ եւ բոլորովին աւելորդ իր նոր գիրքին փոխարէն՝ մենք կ'ունենայինք սակայն անհրաժեշտ դերք մը մեր տրամագրութեան տակ:

Անհրաժեշտին համար անհրաժեշտ միջոցներուն պակասը սղբալու ճիշդ եւ ոչ-անհրաժեշտին հաշտին կատարուած այս մտնումները իրարու խոտոր կը համեմատին եւ բոլորը մէկ՝ լաւ նշաններ չեն...

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳՍԵՐԻՑ ՄԷԿԸ

Ամփոփելով 1968 թուականի արդիւնքները, «Հայաստան» հրատարակչութեան գեղարուեստական գրականութեան խմբագրութեան աշխատողները հարկադրուած էին ապրել զարմանք եւ յուսահատութիւն: Չնայած ձեռնարկուած բոլոր միջոցներին, 1968 թ. հրատարակչական պլանով նախատեսուած 1-100 մամուլից 1969 թ. փոխանցուեց 33% մամուլ գեղարուեստական գրականութիւն: Սա նշանակում է, որ լոյս չեն տեսել տպարաններում գտնուող մի քանի տասնեակ վեպ, վիպակ, բանաստեղծական եւ գրականագիտական ժողովածուներ:

Ցաւօք, ինչպէս տնտեսական տարուայ ընթացքում, այնպէս էլ մանաւանդ տարեվերջին, հրատարակչութեան հնարաւորութիւնները սնորհուում են ո՛չ յօգուտ գեղարուեստական գրականութեան խմբագրութեան: Տարիներ շարունակ այս գրականութիւնը դարձել է ֆաուրիան մոխրագ: Պե՛տք է անլացնել որեւէ ուրիշ գրականութեան ծաւալը, վերջումն են գեղարուեստական գրականութիւնից, որիւ էլ խմբագրութեան լաթո՛ւղք է պէտք, վերջումն են գեղարուեստական գրքերի թղթից, պէտք է գրաժփիկում անլացնել որեւէ գի՛րք, անլացնում են գեղարուեստական գրքի հաշուին, պէտք է սուբյեկտիւ-չափի՞կ վերացնել, տիրաժնե՛ր իջեցնել, հոնարա՞ր տնտեսել, - թերախը միշտ եւ ամէնից առաջ գեղարուեստական գրքերն են...

Մենք բոլոր ուղղութիւններով ջայլել ենք առաջ, բայց մէկ ուղղութեամբ մնացել ենք տեղում. դա «Հայաստան» հրատարակչութիւնն է: *Հասել է ժամանակը, երբ «Հայաստան» հրատարակչութիւնը պէտք է բաժանել մի քանի առանձին հրատարակչութիւնների: Դրանցից մէկը պիտի լինի գեղարուեստական գրականութեան հրատարակչութիւնը:*

Դատեցե՛ք ինձներդ:

Արդա՞ր բան է, արդեօք, որ մենք *Դասականներ* եւ *մինչհոկտեմբերեան շրջանի այլ գրողներ* թեմայի տակ տարեկան տեղաւորում ենք ընդամենը կամ ամենաշատը 5-7 հեղինակ: Մի՞թէ այդ է մեր գրականութեան հնարաւորութիւնը: Մի՞թէ դա կը բաւարարի ընթերցողների պահանջը: Ի հա՛րկէ ոչ: Բայց ի՞նչ կարող ենք անել: Ստիպուած ենք ռաժմերս մեկնել ոչ թէ ըստ կարողութեան: Եւ ի՞նչ է ստացւում: Ստացւում է ՚ի անհաւատալի եւ աններելի բան՝ *մենք տարէցտարի մոռանում ենք մեր դասականներին:*

Օրինակ, Լէւոյի երկերի՝ տարիներ առաջ սկսուած բաժանորդագրական հրատարակչութիւնը ոչ մի կերպ աւարտել չենք կարողանում: Ըստ բաժանորդագրութեան պայմանների, Լէւոյի երկերի 10-րդ հատորը պիտի լոյս տեսներ 1967 թուականին: Այժմ 1969 թուականն է, լոյս են տեսել առաջին երկու հատորները միայն: Այս հոյն տեմպերով շարժուելով, մենք Լէւոյի հրատարակչութիւնը կ'աւարտենք 1977 թուականից ոչ շատ շուտ: Ո՞ր բաժանորդը մեզ կը մերի...

Բարեւոք չէ նաեւ *գրականագիտական* գրքերի տպագրման ընթացքը: Արդիական հարցեր շօշափող բազմաթիւ աշխատութիւններ, տպարան գնալու փոխարէն, տակաւին մնում են մեր պահարաններում:

ԼԵՒՈՆ ՄԻՐԻՋԱՆԵԱՆ

ՆԵՐՔ ԴԱՅՈՒՄ ԵՄ ՔՈՒ ԲԹԱՄԻՏ ԴԵՄՔԻՆ»

Վերջերս, մեր մամուլին մէջ թափառեցաւ նորոգ հանգուցեալ Նա-
յիրի Չարեանի «Զրոյց մեծամասնագծի հետ» խորագրեալ մէկ բանաս-
տեղծութիւնը, որ առաջին անգամ երեւցած էր 1968-ին հրատարակուած
իր «Սպասում եմ քեզ» անուն հատորին մէջ:

«Զրոյցը» բաւականին պղտոր խնդիր մը կը բովանդակէ եւ շահեկա-
նութեան վրայ պիտի չըլլար քանի մը տողով անդրադառնալ անոր:

Անիկա կը մատնէ ինքնարդարացման տառապագին ճիգ մը:

Չարեանը, Բակունցը եւ միւսները մատնած ըլլալու եւ անոնց դահիճ-
ները անդու բերանով փառարանելու փաստով իր ճակատին փակած մատ-
նելութեան կրկնակ խարան մը ունի Չարեան, զոր, իր վերջալստին, ու-
րիշներուն վերադրեց ու զնաց: Ստալինեան տրիբունը «մեռած բանաստեղ-
ծին», իմա Չարեանին մերձաւորագոյն բարեկամը կը հռչակէ ինքզինք, ա-
նոր անտամանակ մահով ամէնէն աւելի խոցուածը, որ «զգաց կորուստը
քու արհաւիրքը», եւ տակաւին՝

Հագա՛ր ավաստ, որ դուն կեցողնի չես,
Իմ ախոյեան, վարպե՛տ եւ բարեկա՛մ.

Հոս Չարեանի այս է խորունկ ճշմարտութիւնը եւ իրեն վերագրուած
Չարեանի «կորստեան պատճառը չարաղէտ», զրոյստութիւն է միայն, Չա-
րեանի եւ Չարեանի բոլոր վիճերը շարաշահող նենգերու նենգ խաղ, սարքը-
ւած դարձեալ անոնց կողմէ, որ «քեզ մատնել էին Յուդայի պէս»:

Իրեւ Յուդա ճանչցուածը, ահաւասիկ որ նոյն մեղքին համար ու-
րիշները կը յուզայոցնէ, առաւել եւս թանձրացնելով Չարեանը կորստեան
մատնող անբաւելի արարքին կապուած մութը: Դիւրին չէ վճռական ըլլալ
հոս ու հասցէներ տալ: Ստոյգը այն է, որ Յուդա մը կայ, յուզանք կան
եւ յուզանքերուն դիմակը պատռելու պարտականութիւնը առաւելաբար կը
ծանրանայ Հայաստանի մտաւորականութեան ուսերուն:

Մենք բոլորովին աւելորդ կը գտնենք առայժմ Չարեանի անձը կաս-
կածելի ընծայող զբաւոր վկայութիւններով զբաղել հոս, կամ խօսիլ անոր
«մեղքը» թեթեւցնելու ձգտող օղային խօսքերուն ու դամբանական ճառ-
բուն մասին: Անհամբեր չենք: Դեռ կրնանք սպասել:

Քիչ մը տարբեր է, սակայն, Չարեանի հետ ունեցած բարեկամու-
թեան վրայ պնդելու Չարեանի համարձակութիւնը:

Իբր թէ իրենց ունեցած սուր վիճերը, իրարու նետած խօսքի կայծերը
«մեր երգի ճամբան լուսաւորելու» համար էին միայն եւ ուրիշ նպատակ ու
տարակարծութիւն բնաւ դոյութիւն չէ ունեցած երկուքին միջեւ: Բայց
այդ օրերուն, կր Նայիրի Չարեան կը գրէր «Եղիշէ Չարեանը ճիշդիկան
լուսարաց»-ով աւելի խորն է նահանգում դէպի ինդիվիդուալիզմի անհան-
գըստացուցիչ հանգրուանը», մեր երգի ճամբան լուսաւորելու՝ միտք մը
կը փառստիւրէր արդեօք, թէ միջին յանձնառութիւններով միւսին լուսա-
յորդ պատգամները մթապնելու կը միտէր: Վստահելի չէ նոյնպէս Չարեա-
նի մէջ ձոսկի» տեսնելու Չարեանի վերագրուած բոլոր արամագրութիւնը:
Չարեանի պարագային երկրնորանքի առջեւ չէ դռնուած Չարեան, լաւը
վատէն անշատելու բնաւ փորձ չէ բրած, ահասարակ քիչ բան գտած է ա-

Նոր մէջ եւ այդ «քիչը» արտայայտած է զիչ բառերով, հետեւեալ քառուկին մէջ.

Ն. Զ.

Սրբ նայում եմ քո բթամիտ դէմքին
Եւ կարդում յետոյ երգերդ գրած -
Ինձ պարզ են դառնում, քէ ինչո՞ւ նրանք
Գրաւիչ են... քիչ:

*Չարենցի կատարած ախտանշանաչումին ճշգրտութիւնը հարց չէ հաս: Կ'ուզէինք պարզապէս ընդգծել, որ Չարենցը Չարեանի խառնուածքով մէկու մը հետ բարեկամ չէր կրնար ըլլալ: Չարենցը մեծ էր նաեւ իբրեւ անձ, փոքրօրէնութիւններէն եւ պետեալքարչ արարածներու դարչ միջավայրէն վեր ու հետո սպերլու ճակատադրով աշխարհ եկած ու աշխարհէն մեկնած բացառիկ տիպարն էր ան եւ ներքի չէ անոր յիշատակը արատաւորող արտայայտութիւնները ընդունել խաղաղ հոգիով:
Ստորեւ Չարեանի «Զրոյց»ը.*

**ԶՐՈՅՑ
ՄԵՌԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԵՏ**

Ոչ ոք, որքան որ ես եմ վշտացած,
Նրա համար, որ դու կենդանի չես:
Ա՛խ, բարեկա՛մս, տեսնէ՛ր նրանց,
Որ քեզ մատնել էին Յուդայի պէս:

Ինչ փո՛յք նրանց մեր կրգն ու ապագան:
Նրանց մի մարդ էր պէտք, մի բաճառեղծ,
Որին տային կոկիծը քո մահուան,
Անմահութիւնդ վերցնէին իրենց:

Ի՞նչպէս ստուածացնում են քեզ հիմա,
Փառաբանում անյազ եւ սեռերէց:
Քեզ իրարից խլում են անխնայ,
Քեզով զուգում ազգատութիւնն իրենց:

Ոչ ոք, սակայն, քան սիրտս մետաղաբ,
Զգաց կորուսող քո արհաւիրից,
Որքան որ ես եմ որք նրա համար,
Որ դու բացակայում ես աշխարհից:

Եւ ի՞նչ ետատութեամբ անբոխային
Գտան մի մարդ, մի ազմկտա պոետ,
Որի վրայ մի կերպ կարկատէին
Քո կորստեան պատճառը շարաղէտ:

Զէ՛ որ մեր դարութեան գալիք ուղին
Կը տեսնէիր դու բոլորից յստակ.
Իմ ամբողջերը մեր կը շողային
Քո ջերմ եւ անաչառ հայեացքի տակ:

Գտան: Դա ելք էր: Նենգ, բայց զփրկարար:
Մե՞նք չէ՞, որ բոքր էինք մեր վէճերում,
Խօսելի կայծեր էինք նետում իրար,
Եւ մեր կրգի նամբան լուսաւորում:

Ես քեզ կը բերէի հիւսուածքս մօր,
Դու կ'աւելիր, քէ ո՛րն է լու կամ վատ:
Եւ իմ սրտում, կեանքում, իմ չորս բոլոր
Կը բարձրանար գեղեցկութեան հուստ:

Բայց ե՛ս էի տեսնում քո անտեւեմ,
Քո փոքրակուած, գարնանաբեր հոգին:
Եւ դա՛ւ միայն, դա՛ւ գիտէիր միայն
Տեսնել իմ ապառում գալիք ասէին:

Քո մահը իմ կորուստն է դառնակէզ:
Սո ողբացել եմ քեզ հագար անգամ:
Հագա՛ր ափսոս, որ դու կենդանի չես,
Իմ ախոյեան, վարպետ եւ բարեկա՛մ:

ՆԱՅԻԻ ԶԱՐԵԱՆ

«Յ»-Ն՝ ՀԱՐՈՒԹԻՒՆ, ՀԱՍՄԻԿ, ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿ ՈՒ ՀՈՅԱ,
«Պ»-Ն՝ ՈՒՈՐՏ ՈՒ ՈՐՈՏ, ՈԳՈՐՈՒՄ ՈՒ ՈՐԱԿ.

Մեր այբուբենին ձօնուած, այբենական թիւով ու այբենական կարգով հիւսուած բանաստեղծութիւնները հազուադէպ երեւոյթներ չեն եղած մեր գրականութեան մէջ: Մեծ Սուբրին ծննդեան 1600-ամեակէն (1962) առջին, վերոյիշեալ պայմաններով ու նպատակով գրուած երեք տարբեր կտորներու հանդիպած ենք մենք: Առաջինը՝ Մեսրոպ Մաշտոցի նուիրուած «Գրական Քերք»-ի բացատրիկին մէջ ստորագրեց Գէորգ Խմին, երկրորդը՝ երեւցաւ Մկրտիչ Խերանեանի անունով ու նորէն «Գրական Քերք»-ի (1967, թիւ 27) մէջ, իսկ երրորդը կարգաչինք ողբացեալ Գուրգէն Մահարիի գրական վաստակը ամփոփող երկերու առաջին հատորին (1966) մէջ:

Գէորգ Խմինի կտորը տրուած է Ս. Մեսրոպի նուիրուած «Բազմա»-ի բացատրիկ թիւին մէջ, Հետաքրքրութեան համար կու տանք եւ միւս երկուքը յաջորդող էջերուն:

Խանութեան քերութիւնով երեւան եկած երանգներու տարբերութիւնը ընդձեռնէ ետք, պիտի ըսենք, որ նոյն ձեւով սկսած ու վերջացած են Խմինի եւ Խերանեանի ստանաւորները, իսկ Մահարիի յօրինածը կը տարբերի միւսներէն Մահարիին յատուկ սրամտութեամբ, որ խորքին մէջ ու դարձեալ Մահարիին յատուկ սովորական սրամտութիւններէն չէ, այլ կը հանդիսանայ խուլ պայքարի մը իւրապատուկ դրսեւորումը:

Դիտեցէք հեղ մը «Յ»-ով սկսող տողերուն «սովետահայերէն» ուղղագրութիւնը եւ ապա պահ մը կանդ առէք «Ո»-ով սկսող տողին «սովետահայերէն»-ին օրէնքը խախտող դասական կառոյցին տուէր:

Այբենական կարգին մէջ «Յ» գիրը իր տեղը դնելէ ետք՝ անոր դիմաց յարութիւնը, յասմիլը, յաղթամակն ու յոյսը դեռ «Հ»-ով սկսելու եւ իրարու ետեւէ շարելու միտումը, մեր կարծիքով, կը բովանդակէ սեւ երանգներ մը, որ «Յ»-ին դասական իրաւունքները կը յիշեցնէ մեր դարաւոր ուղղագրութիւնը սովետականացուցած մեղաւորներուն, իսկ երկրորդ գիրին («Ո») կապակցութեամբ՝ Մահարին արդէն բոլորովին գծից դուրս եկած է ու «ալորտ»-ին, «ըրտտ»-ին, «ըզըրում»-ին ու «արակ»-ին վերադարձուցած է իրենց հազար հինգ հարիւր տարուան ուղղագրական ձևը:

Անցեալ տասնամեակներուն, Հայաստանի մտաւորականութեան սիրտը խոցող բազում յիմարութիւններ գործուեցան մեր երկրին մէջ, բայց ժամանակները շատ բան սրբազրիցին ճշմարտութիւնն ու լոյսը մթադնելու միտող սեւութիւցիոն պլանաւորումներէն ու մեկուսացուած մարդկային թէ՛ սգեկան բազմաթիւ արժէքներ վերստացան իրենց նախկին կշիռը: Իբրևազրկուածներէն մէկը, լեզուն, յատկապէս ուղղագրութիւնը մնաց սակայն եղածին պէս ու շարունակեց վիրաւորել անոր դասական ձևին կարողը ապրող մարդոց սիրտը: Կը թուի, սակայն, թէ Հայաստանի մտաւորականութիւնը հոս եւս պիտի պսակէ իր պայքարը: Մահարիի արձանագրած լուս դժգոհութիւնը եղակի երեւոյթ չէ, դասական ուղղագրութեան վերադառնալու բաղձանքը, ինչպէս ըսուեցաւ ուրիշ էջի մը վրայ, ընդհանրական է եւ յուսատու:

« 36 »

Նրանք 36 են, մեր տառերը,

36 հնչիւն, 36 աշխարհ,

«Ա»-ն՝ Արտամետն է մեր, Ակնայ անտանները,

«Բ»-ն՝ բերք է ու Բակունց ու բարութիւն աշնան:

«Գ»-ն՝ գուտաններն են մեր, գեղօն ու երգ գաղթի,

«Դ»-ն՝ դուռն է մեր Դարձի ու դարաւոր մի դռն.

«Ե»-ն՝ երազ ու եղեմ, երգը արևոտ վարդի,

«Զ»-ն՝ զօրութիւն, Զօհրայ, զանգակատուն զօղանց:

«Է»-ն՝ էութիւնն է մեր, աշխատասէր, յամու,

«Ը»-ն՝ ընթացքը անշեղ, միշտ դէպի վեր ու վեր:

«Թ»-ն՝ Թամանեան, Թռիչք մի նոր կեանքի հունար,

«Ժ»-ն՝ ժամանակը մեծ, բուժուած, բուժուող վերքեր:

«Ի»-ն՝ իդան է մեր նորոգ իրական ու իրաւ,

«Լ»-ն՝ լեռը մեր գերի ու գեռ լուռ, լուսիւն,

«Խ»-ն՝ խախտչ ու խայտանք,

«Մ»-ն՝ ծիծառ ու ծարաւ,

«Կ»-ն՝ կեանք կենսահաստատ ու կամք ու կաթ, կրիւն:

«Հ»-ն՝ հացն է մեր արդար, հոգեւոր հունձ, հաղուոր,

«Ձ»-ն՝ ձնծաղիկ ձիւնուտ, ձմրան մահ ու վախճան:

«Ն»-ն՝ աղաղակ, աղօթք, Ղեւանդ, աղու, աղուոր,

«Ճ»-ն՝ ճանապարհ գրքի, ճանանչ, հանճար ու ճառ...

«Մ»-ն՝ Միութիւնն է մեծ, ուժը մեր աշխարհի,

«Յ»-Ն՝ ՀԱՐՈՒԹԻՒՆ, ՀԱՍՄԻԿ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿ ՈՒ ՀՈՅՍ.

նուռ, նարեկացի, երկիր մի նայիրի,

«Շ»-ն՝ Շիրվան ու Շահնուր, շնորհք, շուշան, շշուկ:

«Ո»-Ն՝ ՈԼՈՐՏ ՈՒ ՈՐՈՏ, ՈԳՈՐՈՒՄ ՈՒ ՈՐԱԿ,

«Զ»-ն՝ Զարեհն ու հնչիւն, շառաչ ու շափ ու կոչ:

«Պ»-ն՝ Պարանեան ու պարտք, պատիւ, պարգեւ, պսակ,

«Ք»-ն՝ քն ու զահ ու զանգ ու ջրի ջինջ խոխոջ:

«Ռ»-ն՝ առաւօտ, առու ու առի ու ոռոգական,

«Ս»-ն՝ սուր, Սիամանթօ, ստուեր, սարսափ, սուան,

«Վ»-ն՝ վարսժան, վարագ, վարդավառ, վահան,

«Տ»-ն՝ տուն, տրտում Տէրեան, տաւիղ, տարտամ, տապան...:

Ու «Բ»-ն՝ Բաֆֆի ու դար ու Արարատ, արեւ,

«Ե»-ն՝ ցնծութիւն, ցնցում, ցնարք, ցոլք ու ցորեն,

«Փ»-ն՝ փառք ու փառասուն, «Ք»-ն՝ քաղաքներ քարէ.

Ու դէռ Գուշակ, քրքում... Օ՛, տասնվեց դարեր.

Օ՛, Մաշտոցեան գրեր, օ՛, Մաշտոցեան օրեր...

Գ. ՄԱՀԱՐԻ

ՆԵՐՔՈՂ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ ՄԵՐ ՃՈՒԹԻ ԳԻՒՏԱՐԱՐԻՆ ՆՐԱ ՄԵԾԱՀԱՆՃԱՐ

Այրուքն՝ անգին, ամենահարուստ, անեղծանելի,
 Բանալի՛ց դու մեր բանաստեղծական բիւրեղ բարբառի,
 Գեղահրա՛շ տեսիլ, գիւտ գեղեցկագոյն, գա՛նձ անկապտելի.
 Դու յազօրանակի դրօ՛շ փառագարդ, դաշնաւթի՛ն ամխախտ,
 Ե՛րգ աստուածային, երաժշտաւթի՛ն, երջանկութեամբ քա՛խտ.
 Զա՛նգ անլուելի, զարթուցիչ բարի, զօրութիւն անհուն,
 Էութիւնքս միշտ եակամապէս է՝ քեզնով լեցուն:
 Ընծայամատո՛յց, ընտրագոյնըդ դու, ընդհեզ քեւ առած՝
 Թեւում եմ, թոչում, թօթափած մտփա քովսայր անթափանց:
 Ժառանգարդդ ես, ժամապահ արթուն, ժրջան մշակ՝
 Ինչպե՛տ երգեմ քեզ, իմ գանձերի գա՛նձ, իմ ամենաքա՛նկ,
 Լիութի՛ն անբաւ, լա՛յս անմարելի, լա՛յս լիակատար,
 Խորհո՛ւրդ մեծաւանկ, խնդութիւն խորին, խարոյկ մշտավառ,
 Ծա՛ւխ հայրենական ծխանի դու աւրբ, ծիածա՛ն ծիծղուն,
 Կրա՛կ կենսատու, կերտն յուսափիւռ, կանթեղ շողողուն,
 Հո՛ւր յաւերժական, հիաստանչ հրաշք, հիւստածք անթերի,
 Զիրք ամենաքաշիս, ձեւ՝ ձեւաւորեալ ձեռքով հանճարի:
 Կամբար՝ ուղեկիչ, զամբարիդ լոյսով զեկրս վառեմ թո՛ղ
 Համբարդըս դէպի մեր քերթագութեան նեմարանը նոյս:
 Մանուկ իմ մտքի Մկրտի՛չ Մեսրոպ, մեծըդ լուսարար,
 Թուղ լից մարմնուն յուզասպաս նրազխ, երկնելու համար
 Նշխարանման ներբողն այս արթուն նստած այս գիշեր:
 Շնորհալի՛ց շապլ, շնորհիբ նաեւ ի՛նձ շնորհքի մի շիթ,
 Որպէսզի եւ ե՛ս ոգեմ ովսանեա մեծ լուսաւորչիդ:
 Չա՛փ անչափելի, չափողդ անհունի, ձե՛ռք ամենահաս,
 Պարգեւի՛չ բարեաց, պարգեւիբ եւ ի՛նձ բարիք աննուագ,
 Զամբիր ծարաւն իմ, ջուր տուր եւ այգո՛ւս, զբրաշխ անկաշռոս,
 Թանկիրա՛դ հմուտ, առաջնորդիբ ինձ դէպի լա՛յսն անճառ:
 Սրբութի՛ն անուտ, սրբիբ եւ հոգիս, որ պայծառանամ,
 Վարդապետ վնիտ, վարպետաց վարպետ, հա՛յր բարեխնամ:
 Տկար քերթողիս տար ռի՛ծ՝ հասնելու բարձունքը քրգի,
 Բարունի՛ց անմահ բախմական շքեղ ու շէնշոզ յօսքի:
 Յոյց տուր ինձ դէպի դպրութիւն տանող ցանկալի ճամբան,
 Փա՛ռքըդ երգելու, փառագարդդ դու, փարո՛ս փրկութեան –
 Քանգարեղ դու հայր, օ՛ր, Մեսրոպ Մաշտոց, անմա՛հ յաւիտեան:

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՆԵԱՆ

ՅԱԶՈՐԴԻ ԹԻԻՈՎ

ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ (արձակ)
ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ (բանաստեղծութիւն)
Հ. Յ. Գաշնակցութեան Զաւարեան ուսանողական
անթէզ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԵՐԲ ԻԶՆՈՒՄ Է ՎԱՐԱԳՈՅՐԸ (դէպքեր եւ դէմքեր),
Մ. Մարտիկեան, Թեհրան, 1969
ԴԵՐԱՍԱՆ-ԹԱՏԵՐԱԳԻՐ ՄԱՐՈՒԹԵԱՆ (պատկերա-
գարդ ալպով), Թեհրան, 1969
ԵՐԿՆԱՔԱՐ (բանաստեղծութիւններ), Գուրգէն Գըլ-
խանի, Պուէնոս Այրէս, 1969
ՓԱՌՔԻ ՎԱՇԽԱՌՈՒՆԵՐԸ (բատերգութիւն), Մար-
սէլլ Փանեան, քարգով ժարժ Սարգիսեանի, Պէյ-
րութ, 1969

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 22 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@